

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վերլուծական տեղեկագիր

№2 (4)

Երևան – 2008

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի (ՔՄՀԿ) Վերլուծական տեղեկագրի սույն համարը հիմնականում նվիրված է 2008 թ. նոյեմբերին Միացյալ Նահանգներում կայանալիք նախագահական ընտրություններին: Տեղեկագրում զետեղված նյութերը ընտրվել են հայաստանյան ընթերցողի հետաքրքրությունների տեսանկյունից: Հանրապետական և դեմոկրատ թեկնածուներ Ջոն ՄակՔեյնի և Բարաք Օբամայի քաղաքական դիմանկարներից զատ, ներկայացվում են նրանց դիրքորոշումները Հարավային Կովկասին, Ռուսաստանին և Մերձավոր Արևելքին (Իրան, Իրաք, Սիրիա, Իսրայել, Պաղեստին) առնչվող հարցերին: Համարում տեղ է գտել նաև ժողովրդավարության տեսական հարցերին վերաբերող մեկ նյութ, ինչպես նաև՝ Թուրքիայի կողմից Կովկասում «Անվտանգության պլատֆորմ» ստեղծելու գաղափարի շուրջ ՔՄՀԿ-ում տեղի ունեցած քննարկման սղագրությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ նախագահական թեկնածուների ֆաղափական դիմանկարը, Դ. Հովհաննիսյան	4
Օբաման եվ ՄակՔեյնը Հարավային Կովկասի մասին, Տ. Մաթոսյան	18
Բ.Օբաման ընդդեմ Զ.ՄակՔեյնի. արտափինֆաղափական մոտեցումներն ու դիֆորոշումները Ռուսաստանի նկատմամբ, Վ. Ազյան	26
ԱՄՆ նախագահական թեկնածուները Մերձավոր Արևելքի վերաբերյալ, Հ. Քոչարյան	37
Իրաֆի հիմնախնդիրն ԱՄՆ 2008թ.նախագահական մրցապայքարում, Ս. Գրիգորյան.....	45
Իրանը ԱՄՆ նախագահական ընտրապայքարում, Տ. Մկրտչյան	55
«Ժողովրդավարություն» հասկացության կիրառումը Սառը պատերազմին նախորդած ժամանակաշրջանում եվ դրա դերը հանրային գիտակցության ձևավորման մեջ, Ս. Համազասպյան	67
«Կովկասյան հարթակ» առանց Իրանի (ֆննարկման սղագրություն)	80

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ

Դ. Հովհաննիսյան

Հաջորդ վաշինգթոնյան վարչակազմից սպասումները չափազանց մեծ են ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլ ամբողջ աշխարհում: Իր աշխատանքը ավարտող Ջ.Բուշ Կրտսերի թիմի գործունեությունը արժանացել է ամերիկացի փորձագետների գրեթե միաձայն ծայրահեղ բացասական գնահատականի: Ներկա նախագահը համարվում է ԱՄՆ-ի ամենավատ ղեկավարը Ռ. Հուվերից հետո, որի նախագահության օրոք սկսվեց 1930-ականների Մեծ դեպրեսիան:

Մի կողմից, նոր նախագահի գործն այս ֆոնի վրա շատ ավելի դյուրին է թվում, սակայն այն ծանր ու բարդ հիմնահարցերի քանակը, որը նա ստիպված է լինելու լուծել կամ որոնց պարտադիր է լինելու արձագանքել այնքան մեծ է, որ չի կարող չառաջացնել որոշ անվստահություն:

Պրոբլեմը միայն ներկայիս ծանրագույն ֆինանսական ճգնաժամը չէ, որն անդրադառնում է և դեռ անդրադառնալու է Միացյալ Նահանգների տնտեսական ամբողջ համակարգի վրա և ոչ էլ այն վնասն է, որը հասցվեց ԱՄՆ միջազգային հեղինակությանը, որը դժվար չի լինի արագորեն վերականգնել: Բուն խնդիրն այն է, թե որքանով նոր նախագահը պատրաստ կլինի ըմբռնելու փոփոխվող քաղաքակրթական համակարգի ուղղվածությունը և էությունը:

Կասկածից վեր է նաև, որ Սպիտակ տան նոր բնակիչը ձգտելու է ամրապնդել իր երկրի աշխարհաքաղաքական դիրքերը՝ միտված լինելով թափանցել այն տարածաշրջանների որոշումներ կայացնող կենտրոններ, որոնցից դուրս էր մղվել Բիլ Կլինթոնի պաշտոնավարության ավարտից հետո: Սա նշանակում է, որ իր արտաքին քաղաքականության մեջ Սպիտակ տունը կոշտ հակասությունների մեջ է մտնելու այդ տարածաշրջաններում վերջերս իրենց ազդեցությունը վերականգնելու մեծ ջանքեր գործադրած ուժերի հետ:

Ինչևէ, աշխարհը փոխվում է, և միայն այն ուժերն ու թեկնածուները կարող են հավակնել հաջողության, որոնք իրենց ամեն քայլը կատարում են նոր միտումների և երևույթների մանրակրկիտ վերլուծության հիման վրա:

Բարաք Օբամա

Բարաք Հուսեյն Օբամա Կրտսերը ծնվել է Միացյալ Նահանգների Հավայի նահանգի մայրաքաղաք Հոնոլուլուում 1961 թ. օգոստոսի 4-ին: Հայրը՝ սևամորթ քենիացի մուսուլման Բարաք Հուսեյն Օբամա Ավագը, Միացյալ Նահանգներ էր եկել որպես ուսանող և սովորում էր տեղի համալսարանի տնտեսագիտության բաժնում: Նույն համալսարանի մարդաբանության բաժնում սովորում էր նախագահի թեկնածուի

ապագա մայրը՝ սպիտակ ամերիկուհի Սթենլի Էն Դանհրմը: Երբ Բարաք Կրտսերը երկու տարեկան էր, նրա հայրը՝ բաժանվելով կնոջից, վերադառնում է Քենիա: Չորս տարի հետո Էն Դենհեմը նորից ամուսնանում է, այս անգամ՝ նույնպես մուսուլման ինդոնեզիացի Լուր Սոետորոյի հետ և մեկնում հետ՝ Ինդոնեզիա, որտեղ Բարաքը անց է կացնում 4 տարի: Հետագայում Բարաքի՝ Ինդոնեզիայում անցկացրած այս տարիների մասին լուրեր տարածվեցին, թե երեխան սովորել է մուսուլմանական ռադիկալ ուղղություններից մեկի հիմնադրած մեդրեսեում, ինչը մեծ խնդիրների առարկա դարձավ նախընտրական արշավի ընթացքում: Այդ լուրերը հերքվեցին, քանի որ թեկնածուն կարողացավ ապացուցել, որ սովորել է Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջաքարտայի պետական դպրոցներից մեկում:

Վերադառնալով Հոնոլուլու՝ Բարաքը սովորում է հայտնի մասնավոր Պունահոու Մքուլ դպրոցում, որտեղ աչքի է ընկնում ոչ միայն իր լավ գնահատականներով, այլ նաև բասքետբոլային հաջողություններով: Հետագայում ինքը՝ Բարաք Օբաման, խոստովանում էր, որ ավագ դասարաններում կարճատև տարվել է մարիխուանա և կոկաին օգտագործելով, ինչն անդրադարձել է նրա առաջադիմության վրա, ինչն էլ ստիպել է նրան ընդմիջտ հրաժարվել թմրադեղերից:

Դպրոցն ավարտելուց հետո նա շարունակում է իր ուսումը Լոս Անջելեսի Օքսիդենթալ քոլեջում, ապա՝ Կոլումբիայի համալսարանում, որն էլ ավարտում է 1983 թ.:

Ավարտելուց հետո մինչև Չիկագո տեղափոխվելը մեկ տարի աշխատում է միջազգային խոշոր ընկերություններից մեկի ֆինանսական ինֆորմացիայի բաժնում որպես խմբագիր: Չիկագոյում զբաղվում է սոցիալական ծառայությամբ և բարեգործական աշխատանքով՝ օգնելով այս քաղաքի անապահով շրջանների բնակիչներին: 1988 թ. Օբաման ընդունվում է Հարվարդի համալսարանի Իրավունքի դպրոց, ուր 1990 թ. դառնում է այս համալսարանի 104 տարիների պատմության ընթացքում Հարվարդի Իրավաբանների ակումբի առաջին սևամորթ նախագահը և Harvard Law Review համալսարանական թերթի խմբագիրը:

1991 թ. ավարտելով ուսումը՝ վերադառնում է Չիկագո, որտեղ զբաղվում է իրավաբանական գործունեությամբ՝ հիմնականում պաշտպանելով դատարաններում տարբեր տիպի խտրականության գոհերին: Բացի այդ, նա ակտիվորեն ընդգրկվում է դեմոկրատական կուսակցության տեղական մասնաճյուղի գործունեությանը, դասավանդում է սահմանադրական իրավունք Չիկագոյի համալսարանի Իրավունքի դպրոցում, զբաղվում է ընտրական իրավունքի հարցերով: Այդ տարիների նրա քաղաքական ելույթները ուղղված են ՆԱՖՏԱ-ի՝ Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտու (North American Free Trade Area) ստեղծման դեմ, նա հանդես է գալիս ռասայական խտրականության դեմ և արտահայտվում համընդհանուր առողջապահական ապահովագրման օգտին: Մինչև 2004 թ., Միացյալ Նահանգների Սենատ ընտրվելը, սահմանադրական իրավունք է դասավանդում նաև Չիկագոյի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1995 թ. նա հրատարակում է իր առաջին գիրքը՝ «Հորիցս ժառանգած երազանքներ», որը համաամերիկյան համբավ բերեց ապագա սենատորին: Սակայն մինչև Սենատ հասնելը, նա դեռ երկար ճանապարհ ուներ անցնելու, որը միշտ չէ որ հարթ էր: 1996 թ.-ից մինչև 2004 թ., Օբաման Իլլինոյ նահանգի սենատի անդամ էր: Սակայն 2000 թ. պարտությամբ ավարտվեց նրա՝ ԱՄՆ Կոնգրեսի անդամ դառնալու փորձը: Նա զիջեց նույնպես սևամորթ, նախկինում «Սև հովազներ» ռադիկալ կազմակերպության անդամ Բոբբի Ռաշին: Իր նահանգի Սենատում Օբաման աչքի էր ընկել երկու հիմնական կուսակցությունների՝ հանրապետական և դեմոկրատական ներկայացուցիչների հետ համատեղ ծրագրեր իրականացնելու իր ունակությամբ: Նույնը նա կշարունակի նաև ԱՄՆ-ի Սենատում: Բացի ներքին քաղաքական, սոցիալական, կրթական և առողջապահական հիմնահարցերից, Օբաման աստիճանաբար սկսում է հետաքրքրվել նաև արտաքին քաղաքականության խնդիրներով: 2002 թ. նա խիստ քննադատության է ենթարկում նախագահ Ջորջ Բուշ Կրտսերի որոշումը Իրաք ներխուժելու վերաբերյալ:

Դիտորդները նշում են, որ 2004 թ. Օբամայի բախտը որոշ չափով բերեց, քանի որ հաղթելով փրայմերիզում՝ նա մյուս փուլում պետք է բախվեր որպես ֆավորիտ գնահատվող հանրապետական Ջեյ Ռայանի հետ, որը, սակայն, ստիպված եղավ հրաժարվել ընտրություններին մասնակցելուց իր ապահարգանի շուրջ ծավալված սկանդալային իրավիճակի հետևանքով: Սակայն ընտրությունների նախօրյակին Դեմոկրատական կուսակցությանն ուղղած իր ելույթը, որում Օբաման ամերիկացիներին կոչ էր անում վերադառնալ իրենց ակունքներին, հավատարիմ մնալ ամերիկյան հասարակության իդեալներին և նորից դարձնել Միացյալ Նահանգները «բաց հնարավորությունների» երկիր (այս միտքը նա հիմնավորում էր իր և իր հոր կյանքի փորձով), դարձավ ոչ միայն ամերիկյան քաղաքական էլիտաների, այլ նաև հասարակության համար նոր առիթ՝ ուշադրությամբ հետևելու այս նոր քաղաքական այրի հետագա գործունեությանը: Հաղթելով իր հանրապետական մրցակցին՝ Ալան Բեյքսին, նա դարձավ Սենատի պատմության մեջ հինգերորդ աֆրոամերիկացի սենատորը: Սենատում Օբաման ընդգրկվեց մի շարք կոմիտեների կազմի մեջ (միջավայրի, հասարակական ծառայության հիմնահարցերի, վետերանների գործերի և միջազգային հարաբերությունների): Նրա ակտիվ գործունեությունը, կշռադատված ելույթները, աշխատասիրությունը և մարդկանց հետ ընդհանուր լեզու գտնելու ունակությունը կարճ ժամանակամիջոցում Օբամային դարձրին Սենատում դեմոկրատների առաջատարներից մեկը: Նրա հայտնի նախաձեռնություններից էր մեծ համբավ ու հեղինակություն ունեցող և միջազգային հարաբերությունների ոլորտում հսկայական փորձի տեր հանրապետական սենատոր Լուգարի հետ Ռուսաստան ճամփորդելը, որտեղ նրանք բանակցություններ վարեցին ՌԴ-ի հետ զանգվածային զենք չտարածելու ոլորտում համագործակցության վերաբերյալ. այդ բանակցությունների արդյունքները բարձր գնահատվեցին մասնագետների կողմից: Ապագա նախագահի

թեկնածուն այդ շրջանում արդեն մեծագույն ուշադրություն է դարձնում էներգիայի այլընտրանքային աղբյուրների հետ կապված հարցերին, ինչը հետագայում նրան շատ պետք եկավ: Նրա վերելքը գնահատվում է որպես չափազանց արագ և անսպասելի, որի համար Օբաման պետք է շնորհակալ լինի զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ լավ հարաբերություններ ստեղծելու իր ունակությանը: Մենատի անդամ ընտրվելուց, այսինքն՝ համաամերիկյան քաղաքական բեմ մտնելուց ընդամենը երկու տարի անց դիտորդները սկսեցին համարել նրան դեմոկրատական կուսակցության հնարավոր թեկնածու գալիք նախագահական ընտրություններում: 2007 թ. սկզբին նա արդեն զիջում էր միայն Հիլարի Քլինթոնին, իսկ նույն թվականի հունիսին նրանց վարկանիշների տարբերությունը ընդամենը 3 տոկոս էր կազմում:

2007 թ. փետրվարի 10-ին Սփրինգֆիլդում Բարաք Օբաման հայտարարեց իր նախագահական ընտրարշավին մասնակցելու որոշման մասին: Ընտրարշավը նրա համար սկսվեց չնախատեսված բարդություններից: Այովա նահանգում իր ելույթի ընթացքում, քննադատելով ներկա հանրապետական վարչակազմի իրաքյան քաղաքականությունը, նա անզգուշաբար ասաց, որ Իրաքում զոհված ամերիկյան զինվորների կյանքերը դատարկ տեղն են ծախսվել (wasted), ինչը ամերիկյան քաղաքացիների տեսանկյունից անհարգալից վերաբերմունք էր զոհվածների հիշատակի նկատմամբ և բացարձակապես անընդունելի գնահատական: Օբաման այս իր արտահայտության համար ստիպված էր դեռ երկար ներողություն խնդրել՝ նշելով, որ ինքը ուղղակի իր միտքը սխալ է ձևակերպել: Քննադատության մյուս սլաքը Օբամայի ընտրարշավի սկզբնական փուլում ուղղված էր Բուշի վարչակազմի այն քաղաքականությանը, որի հետևանքով Միացյալ Նահանգները այդպես էլ չէր կարողացել հաղթահարել իր կախվածությունը էներգակիրների ներմուծումից:

Գիտակցելով, որ ի տարբերություն մյուս թեկնածուների, ինքը շատ քիչ փորձ ունի մի շարք հարցերում, Օբաման իր հետ համագործակցելու հարվիրեց ամերիկյան համալսարաններում և վերլուծական կենտրոններում հայտնի մասնագետների, որոնց հետ խորհրդակցելը դարձավ նրա համար ամենօրյա աշխատանքի կարևոր մաս:

Մամուլում հրապարակված տվյալների համաձայն՝ Օբաման իր ընտրարշավի վրա ծախսում է ավելի մեծ ֆինանսական միջոցներ, քան թե իր հակառակորդները: Այստեղ նույնպես որոշակի տհաճ անակնկալներ եղան: Մասնավորապես, թերթերը տեղեկություններ հրատարակեցին, համաձայն որոնց իր միջոցների մի մասը Օբաման ստացել էր չիկագցի գործարար Էնթոնի Ռեզկոյից, որը քրեական հետապնդումների մեջ էր գտնվում խարդախության, ռեքեթի և փողերի լվացման մեղադրանքներով: Օբաման նորից ստիպված էր հրապարակայնորեն հայտարարել, որ տեղյակ չի եղել այդ միջոցների կասկածելի ծագման մասին և պարտավորվել, որ վերադարձնելու է այն բոլոր գումարները, որոնք ստացել էր Ռեզկոյի հետ կապ ունեցող ընկերություններից:

Ընտրարշավի սկզբից նրան լուրջ աջակցություն ցույց տվեց «Դրիմ Ուորքս» կինոընկերության հիմնադիր Դևիդ Գեֆֆինը, որը հայտնի էր որպես Բիլ Քլինթոնի

աջակից, սակայն համոզված էր, որ Հիլարին չափից դուրս վիճարկելի է որպես թեկնածու, որպեսզի իրական հնարավորություն ունենա այս դժվարին ժամանակներում միավորել ամերիկացիներին իր շուրջը ԱՄՆ նախագահ դառնալու համար: Հովիվուդյան աստղերի օգնությամբ նա դրամահավաք կազմակերպեց Օբամայի ընտրարշավը ֆինանսավորելու համար և կարողացավ այսպիսով 1,3 մլրդ. դոլար վճարել ընտրարշավի դրամարկո: Այս և մի շարք այլ գործոններ թույլ տվեցին Օբամային հաղթել Հիլարի Բլինթոնին և դեմոկրատական կուսակցության կոմից հռչակվել որպես Միացյալ Նահանգների նախագահի թեկնածու:

Հարկ է նշել, որ դեռևս Բոբբի Ռաշին պարտվելու ընթացքում պարզվեց, որ Ամերիկայի սևամորթ բնակչությունը հակված չէ միանշանակորեն քվեարկելու Բարաք Օբամայի օգտին միայն այն պատճառով, որ նա աֆրոամերիկացի է: Ի տարբերություն Բոբբի Ռաշի, որը իր երիտասարդության տարիներին «սև ռասիզմի» դիրքերից էր հանդես գալիս, ինչը նրա կերպարը միանշանակորեն ընդունելի դարձրեց սևամորթ ընտրազանգվածի աչքերում, Բարաք Օբամայի կերպարը որոշակի անվստահություն էր առաջացնում նրանց մոտ. նրան անվանում էին «ներսից սպիտակ», «սփրթնած» և այլն: Գերազանց և շատ թանկ կրթություն ստացած հաջողակ Բարաք Օբաման, որը, ի տարբերություն մյուս սևամորթ քաղաքական գործիչների, չէր հանդիսանում Աֆրիկայից ամերիկյան մայրցամաք որպես ստրուկ բերվածների շտապիկ և երբեք չէր պայքարել սևամորթների իրավունքների համար, ինչպես դա արել էին իսկական «ամերիկյան» սևամորթները, այդպես էլ չճանաչվեց աֆրոամերիկացիների կողմից որպես յուրային: Դա ավելի ընդգծվեց, երբ մամուլում տեղեկություններ հրապարակվեցին այն մասին, որ մոր կողմից նրա նախնիների մեջ եղել են ստրկատերեր:

Այստեղ նրան շատ օգտակար եղավ իր կինը՝ սևամորթ իրավաբան Միշել Լե Վոն Ռոբինսոնը, որի հետ նա ամուսնացավ 1992 թ.: Նրանք ունեն երկու դուստր՝ Մալիա և Մաշա: Ամբողջ ընտանիքը Չիկագոյի քրիստոնեական «Trinity United Church of Christ» եկեղեցին է հաճախում:

Բարաք Օբամայի մասին գրքի հեղինակ գերմանացի լրագրող Քրիստոֆ ֆոն Մարշալը նշում է, որ նա «ունի այնպիսի որակներ և փորձ, որոնք առանձնապես նշանակություն չունեն դասական ըմբռնմամբ քաղաքական գործչի կենսագրության համար, սակայն իրականում շատ արժեքավոր են: Օրինակ, նա միջմշակութային շփման մեծ փորձ ունի, քանզի սևամորթ մուսուլմանի և սպիտակ քրիստոնյայի զավակ է, մեծացել է Միացյալ Նահանգներից դուրս, այսինքն՝ ունակություն ունի դրսից Ամերիկային նայելու»:

Օբաման ինքն իր մասին ասում է, որ հանդիսանում է «մեծ ամերիկյան կաթսայի արդյունք»: Մոր նախնիների մեջ կան ոչ միայն իռլանդացիներ և շոթլանդացիներ, այլ նաև ամերիկյան Չերոքի հնդկացիների արյուն, իսկ հայրը սևամորթ քենիացի մուսուլման է: Հարկ է նշել, որ ամերիկյան մի քանի նախագահների երակներում հոսել է

աֆրոամերիկացիների արյուն: Դրանք են Աբրահամ Լինքոլնը, Թոմաս Ջեֆերսոնը, Էնդրյու Ջեքսոնը, Ուորեն Հարդինգը և Քելվին Քուլիջը: Օբաման գիտակցաբար հրաժարվել է «առաջին սևամորթ նախագահի» կերպարը շահագործելու հնարավորությունից, քանի որ դա կհակասեր իր հոչակած՝ բոլոր ընդդիմախոսներին հանուն Ամերիկայի միավորելու քաղաքականությանը: Չնայած դրան, նրան արդեն բազմիցս հայտարարել են և՛ «երիտասարդ Մարթին Լյութեր Կինգ», և՛ «սևամորթ Քենեդի»: Ուշագրավ է, որ Օբամայի ընտրարշավի առաջին քայլերից Քենեդիների ամբողջ գերդաստանը հայտարարեց նրան սատարելու մասին:

Օբամայի նախընտրական ամենահայտնի արտահայտություններից մեկը հետևյալն է. «Միավունք է բաժանել Ամերիկան ազատականների և պահպանողականների, սևի և սպիտակի: Կա միայն մի երկիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ»: Մեկնաբանները նշում են, որ այս դիրքորոշումը շատ տեղին էր այն բանից հետո, երբ 8 տարի Քլինթոնի վարած քաղաքականությունը և ևս 8 տարի՝ Բուշ Կրտսերինը մասնատել են ամերիկյան հասարակությունը: Օբաման, որը դեռ չի հասցրել դառնալ վաշինգթոնյան իսթեբլիշմենտի մաս, այս առումով շահեկանորեն տարբերվում է թե՛ նշված երկու նախագահներից, և թե՛ իր բոլոր հակառակորդներից: Հասարակ ամերիկացու համար նա խորհրդանշում է թարմություն, նորարարություն և հույս, որ ամեն ինչ կարող է փոխվել:

«Օբաման քարիզմատիկ առաջնորդ է և փայլուն հոետոր: Նա նոր ոճ է մտցրել քաղաքականության մեջ, – գրում է ֆոն Մարշալը, – Քլինթոնի և Բուշի նախագահությունների տարիների ընթացքում Ամերիկան բաժանված էր երկու ճամբարի: Բարաք Օբաման այն քաղաքական գործիչն է, որն ասում է՝ տեսեք, ես բարձր եմ դրանից, ես կարող եմ միավորել մասնատված հասարակությունը»:

Օբաման իր քարոզչության համար ընտրել է մի քանի հիմնարար ուղղություն.

– վերադարձնել Միացյալ Նահանգներին «ազատ դրսևորման և բաց հավասարությունների» երկրի իրական կերպարը՝ միաժամանակ սահմանափակելով ապօրինի ներգաղթը,

– միավորել մասնատված հասարակությունը՝ ապահովելով բոլոր քաղաքացիների համար պարտադիր առողջապահական ապահովագրություն և որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ,

– վերականգնել Միացյալ Նահանգների միանձնյա առաջատարի դիրքն աշխարհում, որի մասնակի կորուստը նա պայմանավորում է հետևյալ հանգամանքներով. ա) սխալ էներգետիկ քաղաքականությամբ, որի հետևանքով, ԱՄՆ-ը կախման մեջ է ընկել էներգակիրների մեծ պաշարներ ունեցող երկրներից, ինչը թույլ տվեց վերջիններիս կտրուկ բարձրացնել նավթի և գազի գները և դրա շնորհիվ դառնալ համաշխարհային կամ տարածաշրջանային նշանակություն ունեցող քաղաքական և ուժային կենտրոններ, բ) սխալ ներքին քաղաքականություն, որի հետևանքով երկրի տնտեսությունը հայտնվել է չափազանց ծանր վիճակում (մասնավորապես, նշվում է, որ

չնայած Իրաքի և Աֆղանստանի պատերազմների հետևանքով կտրուկ աճած ռազմական ծախսերին՝ նախագահ Բուշը 8 տոկոսով կրճատեց հարկերը), գ) սխալ արտաքին քաղաքականություն, որի հետևանքով Միացյալ Նահանգների պատկերը բացասական զգացմունքներ է առաջացնում ոչ ամերիկացիների ճնշող մեծամասնության շրջանում:

Օբամայի կարծիքով, Միացյալ Նահանգները կարիք ունի լրջագույն մոդերնացման, ընդ որում, նա նշում է ավելի ժամանակակից դառնալու համար բարեփոխումների կարիք ունեցող ոլորտների մեջ գրեթե բոլոր ուղղությունները: Մասնավորապես, բարեփոխումների կարիք ունեն էներգետիկ ոլորտը (*Օբաման էներգիայի այլընտրանքային աղբյուրների վրա հիմնված էներգետիկայի զարգացման կողմնակից է, նա նաև ձգտում է սահմանափակել տարբեր կանոնակարգող միջոցների օգտագործմամբ բենզինի և այլ նավթամթերքների սպառումը, հանդես է գալիս էներգիայի նոր աղբյուրների հայթայթման հետազոտական աշխատանքները լրջորեն ֆինանսավորելու, ինչպես նաև Միացյալ Նահանգներին պատկանող տարածքներում ածխաջրածնային հումքի նոր աղբյուրների որոնումը և շահագործումը ֆինանսավորելու կողմնակից*), բանակը նրա կարծիքով, ներկայիս պայմաններում բանակի այն կառուցվածքը, որը ավանդաբար ձևավորվել է, չի կարող լուծել իր վրա դրված խնդիրները, քանի որ, ինչպես ցույց է տալիս փորձը, այն ոչ միայն անկարող եղավ դիմադրել ահաբեկիչներին, այլ նաև իրաքյան և աֆղանական փողոցային մարտերում չդրսևորեց անհրաժեշտ որակներ), միջազգային հարաբերությունների համակարգը (*Օբաման հանդես է գալիս ՄԱԿ-ի վերակազմակերպման և վերակառուցման օգտին՝ գտնելով, որ այս կազմակերպությունը չի համապատասխանում 21-րդ դ. ձևավորված իրավիճակին*) և այլն:

Օբամայի քաղաքական օրակարգի կարևոր առաջնայնություններից է միջուկային զինաթափման գործընթացը. նա խոստանում է կառուցել նոր աշխարհ, որը ազատ կլինի միջուկային պատերազմի վտանգից: Նա նաև հանդես է գալիս Գլոբալ էներգետիկ անվտանգության կազմակերպության ստեղծման օգտին, որի մեջ, բացի G-7 անդամներից պետք է ընդգրկվեն, նաև Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան, Մեքսիկան և Հարավաֆրիկյան Հանրապետությունը: Օբաման կողմնակից է ՆԱՏՕ-ի ընդլայնմանը և վերջինիս լիազորությունների շրջանակի մեջ մի շարք այլ հնարավորություններ ընդգրկելուն¹, սակայն միաժամանակ ընդգծում է, որ Միացյալ Նահանգների գործընկերները պետք է ավելի ակտիվորեն մասնակցեն ՆԱՏՕ-ի գործունեությանը և ավելի մեծ պատասխանատվություն կրեն այդ գործունեության արդյունքների համար:

Բարաք Օբամայի այս մոտեցումները համահունչ են հատկապես երիտասարդ կրթված ամերիկացիների սպասումներին, իսկ նրա կողմից առաջ քաշված միասնական

¹ Հիշեցնենք, որ Բ.Օբաման բավականին մոտ է հանրապետական սենատոր Լուգարի հետ, որն առաջարկում է «էներգետիկ ՆԱՏՕ ստեղծել»

և «բաց հնարավորությունների» Ամերիկայի ձևավորման սլոգանը ապահովում է հասարակության մյուս շերտերի օժանդակությունը: Դիտորդները նշում են, որ Բ.Օբաման չափազանց ճկուն քաղաքական գործիչ է, ինչը թույլ է տալիս նրան ընդունելի և հասկանալի լինել տարբեր հայացքներ և դիրքորոշումներ ունեցող ամերիկացիների համար:

Ջոն ՄակՔեյն

Ջոն Սիդնի ՄակՔեյն Երրորդը ծնվել է Պանամյան ջրանցքի գոտում 1936 թ. օգոստոսի 29–ին զինվորականի ընտանիքում: Նրա երակներում հոսող արյունը խառը շոթլանդական, իռլանդական և անգլիական է: Մայրը Ռոբերտա Ռայթ ՄակՔեյնն է: Նախագահի հանրապետական թեկնածուի պապն ու հայրը երկուսն էլ ծովակալներ են եղել: Մանկության տարիներին Ջոն ՄակՔեյնը իր հոր ծառայության վայրերի փոփոխության պատճառով հաճախ է ճամփորդել, ապրել է մի շարք ամերիկյան ռազմածովային խարխախներում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո նրանց ընտանիքը հաստատվում է Վիրջինիայում, ուր նա ընդունվում է Սուրբ Ստեփանի դպրոց, որտեղ սովորում է մինչև 1949 թ.: 1951–1954 թթ. սովորում է Եպիսկոպալ եկեղեցու մասնավոր դպրոցում, որտեղ աչքի է ընկնում իր հաջողություններով սպորտի ասպարեզում, հատկապես՝ ըմբշամարտի: Հոր հաճախակի տեղաշարժերի պատճառով ՄակՔեյնը հասցրել է ավելի քան 20 դպրոցներում սովորել:

Ջ.ՄակՔեյնը, շարունակելով ընտանեկան ավանդույթը, սովորել է Ազգային Ռազմական Քոլեջում և ԱՄՆ Ռազմածովային ակադեմիայում, որն ավարտել էր նաև նախկին դեմոկրատ նախագահ Ջիմմի Քարթերը: Նա, ի տարբերություն իր հակառակորդի, երբեք աչքի չի ընկել իր բարձր գնահատականներով և, նույնպես տարբերվելով Բարաք Օբամայից, որը տիրապետում է ֆրանսերենի և իսպաներենի, որևէ օտար լեզու չգիտի:

Ամերիկացիները միշտ ուշադրություն են դարձրել այն հանգամանքի վրա, թե արդյոք հնարավոր նախագահը ռազմական ծառայություն անցել է, թե ոչ և ինչպես է իրեն դրսևորել բանակում: Միացյալ Նահանգների միայն 12 նախագահներ ռազմական ծառայության փորձ չեն ունեցել: Այս տեսակետից ՄակՔեյնը շատ ավելի նախընտրելի է, քան Օբաման, որը զինծառայության հետ երբեք կապ չի ունեցել: Նա 1958–1981 թթ. ծառայել է ռազմածովային ուժերում որպես օդաչու և ստացել է կապիտանի սպայական կոչում: Մասնակցել է վիետնամական պատերազմին, որտեղ ինքնաթիռի վայր ընկնելուց հետո նա հայտնվել է գերության մեջ: Վիետնամցիները, հաշվի առնելով նրա հոր բարձր դիրքը, առաջարկել են ազատ արձակել նրան, սակայն Ջ.ՄակՔեյնը հրաժարվել է: Այս պատմությունը հետագայում հայտնի դարձավ և մեծապես նպաստեց նրա հեղինակությանը և ժողովրդականությանը: Հայտնի է նաև այն փաստը, որ նրան դաժան տանջանքների ենթարկելով, վիետնամցիները փորձել են տարբեր գաղտնի

տեղեկություններ ստանալ: Ծեծը և չարչարանքները անհետևանք չեն անցել՝ նա մինչև օրս չի կարողանում ձեռքերը գլխից վեր բարձրացնել, ինչը այդ տարիներին ստացած կոտրվածքների և վնասվածքների հետևանք է: Հայտնի է դարձել, որ տանջանքներից խուսափելու համար նա, երբ իրենից պահանջել են իր էսկադրիլայի օդաչուների մասին տեղեկություններ, թելադրել է հայտնի ամերիկյան բեյսբոլային թիմի խաղացողների անունները:

1967–1971 թթ. գերության մեջ լինելուց հետո, Ջ.ՄակՔեյնը վերադառնում է հայրենիք որպես հերոս: 1973 թ, երբ նա դեռ հենափայտերով էր տեղաշարժվում, նրան ընդունում է ԱՄՆ նախագահ Ռ.Նիքսոնը, որի հետ նա լուսանկարվում է, և այդ լուսանկարը հաջորդ օրը հայտնվում է ամերիկյան թերթերի առաջին էջերում ամերիկյան հերոս օդաչուի մասին պատմող սրտաճմլիկ հոդվածների զուգորդությամբ, ինչը ՄակՔեյնի անունը հայտնի է դարձնում Միացյալ Նահանգներում:

1981 թ. նա, հասկանալով, որ առողջությունը թույլ չի տա իրեն հասնել իր հոր և պապի ծովակալական աստիճանին, գորացրվում է և անմիջապես զբաղվում քաղաքական գործունեությամբ՝ ներգրավվելով Հանրապետական կուսակցության գործունեության մեջ: Ջինվորական ծառայության ընթացքում նա պարգևատրվել է բազմաթիվ բարձրագույն շքանշաններով և մեդալներով, այդ թվում՝ Արծաթե աստղ, Բրոնզե աստղ, Պատվո լեգիոն և այլն:

Վիետնամից վերադառնալուց հետո, Ջ.ՄակՔեյնը բաժանվում է իր առաջին կնոջից՝ Քերոլ Շեպպից, որը հայտնի էր իր գեղեցկությամբ և նույնիսկ որոշ ժամանակ աշխատել է որպես ֆոտոմոդել: Առաջին կնոջ հետ պահպանել է շատ ջերմ հարաբերություններ՝ հոգ տանելով այս ամուսնությունից ծնված իր աղջկա համար: Նա այժմ ամուսնացած է Սինդի Լու Հենսլիի հետ, որը դասավանդում էր Արիզոնա նահանգի Ֆենիքս քաղաքում և խոշոր բիզնեսմեն Ջեյմս Վիլիս Հենսլիի դուստրն է: Հորից Սինդին ժառանգեց գարեջրի առևտրով զբաղվող հսկայական ընկերություն: Այս ամուսնության արդյունք եղան Մեզան անունով դուստրը, Ջոն Սիդնի և Ջեյմս որդիները: Նրանք երկուսն էլ զինվորականներ են: 1991 թ. ՄակՔեյնները որդեգրեցին երեք ամսական բուժման կարիք ունեցող բանզլադեշցի մի որբ աղջիկ, որին անվանեցին Բրիջիթ:

1983 թ. Արիզոնա նահանգից Միացյալ Նահանգների Կոնգրես ընտրվել է որպես հանրապետական կուսակցության ներկայացուցիչ, իսկ 1986 թ. նոյեմբերին դարձել է Սենատի անդամ՝ փոխարինելով նախագահի նախկին թեկնածու հանրապետական Բարի Գոլգուոթերին, որտեղ աշխատում է առանց ընդմիջումների մինչև օրս՝ վերընտրվելով 1992, 1998, 2004 թթ., ընդ որում. վերջին ընտրությունների ժամանակ նրա օգտին էին քվեարկել նաև դեմոկրատական կուսակցության՝ Արիզոնայում ապրող կողմնակիցներից շատերը:

1987 թ. ՄակՔեյնն աշխատել է Սենատի՝ զինված ուժերի, առևտրի և հնդկացիների գործերով հանձնաժողովներում: 1995–1997 և 2005–2007 թթ. նա

նախագահել է հնդկացիների գործերով հանձնաժողովը, 1997–2001 և 2003–2005 թթ. ղեկավարել է առևտրի հարցերով հանձնաժողովի աշխատանքները:

1993 թ. Ջ.ՄակՔեյնը Միջազգային հանրապետական ինստիտուտի տնօրենների խորհրդի անփոփոխ նախագահն է:

Նրա անունը նույնպես շաղկապվել է ֆինանսական սկանդալների հետ: 1982–1987 թթ., ապագա նախագահի թեկնածուի հիմնական ֆինանսավորողներից մեկը եղել է բանկիր Չարլզ Քիտինգը, որի հաշվին, ինչպես հետագայում պարզվեց, ՄակՔեյնի ընտանիքը կատարել է առնվազն 9 ճամփորդություններ, որոնց վրա ծախսված ընդհանուր գումարը կազմել էր մոտ 13 հազար դոլար: Այս գումարը ՄակՔեյնը ստիպված եղավ վերադարձնել: Երբ Քիտինգի ֆինանսական համակարգը ծանր վիճակում հայտնվեց, նրանից ֆինանսական օժանդակություն ստացած Սենատի մյուս անդամների և կոնգրեսականների հետ միասին Ջ.ՄակՔեյնն էլ փորձեց բարեխոսել նրա համար՝ հանդիպելով այն պետական մարմինների ներկայացուցիչների հետ, որոնք հսկում էին այդ ժամանակ ԱՄՆ ֆինանսական շուկայի գործառույթների օրինականությունը. սակայն դա որևէ արդյունքի չբերեց, միայն ազդեց միջնորդողների հեղինակության վրա: Քիտինգի բանկային համակարգը տապալվեց, իսկ բանկիրն ինքը՝ դատապարտվեց և 5 տարի անցկացրեց բանտում:

ՄակՔեյնը կարողացավ խուսափել հակաօրինական գործողությունների համար մեղադրանքից, բայց էթիկայի գծով Սենատի հանձնաժողովը այս պատմության հետևանքով խիստ նկատողություն արեց նրան: Ինքը՝ ՄակՔեյնը, ընդունեց իր սխալները:

Քիտինգի հետ կապված պատմությունը մեծ ազդեցություն ունեցավ սենատորի վրա: Այսուհետև նա շատ հաճախ և ակտիվորեն քննադատում է «մեծ փողերի» ազդեցությունը ամերիկյան քաղաքականության վրա: Սենատոր Ռոս Ֆայնգոլդի հետ 1994 թ. նա մշակում է մի օրինագիծ, որով կորպորացիաների և նման այլ կազմակերպությունների համար սահմանափակվում էին քաղաքական նվիրատվությունները նախընտրական արշավների ֆինանսավորման համար: ՄակՔեյն–Ֆայնգոլդի օրինագծի նախագիծը հսկայական դիմադրության հանդիպեց մի շարք քաղաքական գործիչների կողմից, սակայն շատ դրական ընդունելություն գտավ մամուլում և հասարակության տարբեր շերտերի մեջ: Երեք անգամ տապալվելով՝ օրինագիծը վերջապես ընդունվեց 2002 թ., երբ «Էնրոն» ընկերության հետ կապված սկանդալային գործը նորից հասարակության ուշադրությունը հրավիրեց կոռուպցիայի և կաշառակերության հիմնահարցերի վրա: Իր վերջնական տեսքով այս օրինագիծը ստացավ «Ընտրարշավների բարեփոխման մասին երկկուսակցական օրենք» անվանումը: Այս օրենքը համարվում է Ջ.ՄակՔեյնի կարևոր ձեռքբերումներից մեկը: Այս օրենքի ընդունմանն ուղղված իր ելույթներով և քարոզչությամբ նա կարողացավ ստիպել մոռանալ Քիտինգի հետ կապված իր վարքագիծը: Բացի այդ, ընդդիմանալով իր իսկ

կուսակցության մի շարք ազդեցիկ քաղաքական գործիչներին, նա ձեռք բերեց քաղաքական այլախոհի և ինդիվիդուալիստի համբավ:

Հետաքրքիր է, որ ո՛չ ՄակՔեյնը, և ո՛չ էլ Օբաման չունեն նահանգապետի կամ փոխնահանգապետի աշխատանքային փորձ: Վերջին սենատորը, որն ընտրվել է ԱՄՆ նախագահ և չի ունեցել նման փորձ, եղել է Ջոն Քենեդին: Նրանից հետո բոլոր նախագահները ընտրվել են իրենց նոր պաշտոնում՝ լինելով նահանգապետներ:

2000 թ. Ջ.ՄակՔեյնը մասնակցել է նախագահական մրցավազքին, սակայն փրայմերիզում զիջել է Ջորջ Բուշ Կրտսերին: Հայտնի է, որ այս դեպքում ևս դրսևորվեց նրա այլախոհությունը. առաջադրվելով հանրապետական կուսակցական առաջնորդների կամքին հակառակ՝ նա հաստատեց իր վճռականությունը՝ իր որոշումներում ղեկավարվել միայն սեփական եզրակացություններով և կարծիքներով:

Հարկ է նշել, որ իր հակառակորդ Ջ.Բուշի թեկնածությունը նա անվերապահորեն պաշտպանեց հաջորդ՝ 2004 թ. ընտրություններում: Այս ընտրություններից առաջ լուրեր էին պտտվում, որ Ջ.ՄակՔեյնը կարող է համաձայնել միավորվել Վիետնամի պատերազմի մեկ այլ մասնակցի՝ Դեմոկրատական կուսակցությունից նախագահի թեկնածու առաջադրված Ջոն Քերիի հետ՝ ընդունելով նրա առաջարկը դառնալ փոխնախագահ: Արդեն այս լուրերը վկայում են այն մասին, թե որքան էր տարբերվում Ջ.ՄակՔեյնի իմիջը այդ տարիների հանրապետական ղեկավարների իմիջից: Իրականում, ինչպես գիտենք, դա տեղի չունեցավ և հետագայում նա փորձեց վերականգնել հանրապետական կուսակցության ղեկավարության վստահությունն իր նկատմամբ՝ օժանդակելով Սենատում Ջ.Բուշի վարչակազմի քաղաքականությանը և հիմնականում հավատարիմ մնալով կուսակցական քաղաքական գծին:

ՄակՔեյնը հավատացյալ է, պատկանել է Ամերիկայի Եպիսկոպալ եկեղեցու հոտին, սակայն երկրորդ ամուսնությունից հետո միացել է բապտիստական համայնքին, որին պատկանում է նրա տիկնոջ ընտանիքը:

Եթե Ջ.ՄակՔեյնը ընտրվի ԱՄՆ նախագահի պաշտոնում, ապա կդառնա Միացյալ Նահանգների ամենատարեց նախագահը՝ նա արդեն 72 տարեկան է: Սակայն, ըստ հարցումների, տարիքը ամերիկացիների համար մեծ արգելք չի հանդիսանում: Ամերիկացիները շատ ավելի վտանգավոր են համարում այն մշտական աջակցությունը, որը նա ցույց է տվել ներկա հանրապետական վարչակազմին ամենախոցելի որոշումներում, օրինակ՝ Իրաքի պատերազմի հարցում: Չնայած դրան, ներկա Հանրապետական կուսակցության թեկնածուն հեշտությամբ հաղթանակ տարավ պրայմերիզում իր բոլոր մրցակիցների նկատմամբ և հռչակվեց իր կուսակցության միասնական թեկնածու՝ չնայած այն հանգամանքին, որ նա այժմ նույնպես համարվում է շատ ըմբոստ քաղաքական գործիչ, որը պատրաստ է ընդդիմանալու կուսակցական այն որոշումներին, որոնց հետ համաձայն չէ:

Իրականում 2004–2008 թթ. նա միայն մեկ անգամ է քննադատել նախագահ Ջ.Բուշի քաղաքականությունը: Դա կապված էր հանրապետական վարչակազմի

հարկերը կրճատելու պոպուլիստական որոշման հետ: Ջ.ՄակՔեյնը արդարացիորեն նկատում էր, որ հարկերի կրճատումը պետք է զուգորդվի պետական և ռազմական ծախսերի կրճատմամբ: Մակայն, հանդես գալով Իրաքում և Աֆղանստանում ռազմական գործողությունների շարունակման, ամերիկյան ստորաբաժանումների այստեղ գտնվելու ժամկետների երկարաձգման և նրանց թվի ավելացման օգտին, նախագահի թեկնածուն անհնար էր համարում պետության եկամուտների կրճատումը:

Հակառակը, ըստ ՄակՔեյնի, պետք է լրացուցիչ գումարներ հատկացնել հատկապես ամերիկյան հակահրթիռային պաշտպանության զարգացման և նոր ռազմական խարխախներում ծավալման համար: Նրա կարծիքով, «էֆեկտիվ հակահրթիռային պաշտպանությունը չափազանց կարևոր նշանակություն ունի հնարավոր ռազմավարական հակառակորդներից՝ օրինակ՝ Չինաստանից և Ռուսաստանից, բխող սպառնալիքներից երաշխավորված լինելու համար»:

Նախագահի հանրապետական թեկնածուի հիմնական արտաքին քաղաքականությանը առնչվող նախաձեռնությունը կապված է «Ժողովրդական պետությունների» լիզա ստեղծելու նրա գաղափարի հետ: Այս միջազգային կազմակերպությունը, որի անդամներ կարող են դառնալ միայն այն պետությունները, որոնք համապատասխանում են ժողովրդավարության՝ Միացյալ Նահանգներում ընդունված ստանդարտներին, պետք է իր վրա վերցնի այն գործառույթները, որոնք այսօր վերապահված են Միացյալ Ազգերի կազմակերպությանը: Ըստ Ջ.ՄակՔեյնի՝ ՄԱԿ-ը ի վիճակի չէ դրանք կատարելու, ինչն էլ հանդիսանում է միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգի տապալման պատճառը, որի հետևանքներն են անկառավարելիությունը և անկանխատեսելիությունը:

Ջ.ՄակՔեյնը հանդես է եկել նաև G-8-ի կազմից Ռուսաստանը հեռացնելու նախաձեռնությամբ՝ միաժամանակ առաջարկելով ընդլայնել այս կազմակերպության կազմը՝ ընդգրկելով Հնդկաստանը և Բրազիլիան: Ինչպես տեսնում ենք, նա «մոռանում է» Չինաստանի մասին: Ֆարիդ Ջաքարիան՝ ամերիկյան քաղաքական վերլուծաբանների լիդերներից մեկը, չափազանց բարձր գնահատելով ՄաքՔեյնի անձնական որակները, համարում է, որ նա մոլորվել է «նեոպահպանողականության և առողջ բանականության միջև»: Նա նշում է. «Այս բառերը ոչ միայն պատերազմ են հայտարարում Ռուսաստանին և Չինաստանին, բայց և Միացյալ Նահանգներին դարձնում են ընդդիմադիր բոլոր ոչ ժողովրդավարական պետությունների նկատմամբ: ՄակՔեյնն առաջարկում է ստեղծել «Ժողովրդավարական պետությունների լիզա», որը կոչված է լինելու կատարել ՄԱԿ-ի դերը, սակայն դրան չեն մասնակցելու ոչ ժողովրդավարական երկրները: Այս մոտեցումը թվում է ռազմավարական տեսակետից բացարձակապես չարդարացված: Ո՞րն է մեր շահը երկու մեծ տերությունների հետ թշնամություն անելուց: Ինչպե՞ս է «Ժողովրդավարական պետությունների լիզան» պայքարելու ահաբեկչության դեմ, եթե նրա մեջ չընդգրկվեն Հորդանանի, Մարոկկոյի,

Եգիպտոսի և Մինգապուրի նման պետություններ: Արդյո՞ք միջին ամերիկացու օգտին կլինի մեր ազդեցության նվազումը Սաուդյան Արաբիայում: Չէ՞ որ այդ երկիրը նավթի հիմնական մատակարարն է, իսկ մենք շարունակում ենք կախվածության մեջ գտնվել էներգիայի այդ աղբյուրից»: Միաժամանակ Ֆ.Զաքարիան նշում է, որ հանրապետականի՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ հնչեցրած այս ռադիկալ գաղափարների ֆոնի վրա շատ խոստումնալից են հնչում Բարաք Օբամայի հայտարարություններն այն մասին, որ ինքը պատրաստ է հանդիպել Իրանի և Վենեսուելայի ղեկավարների հետ:

Իսկ հանրապետական թեկնածուն հայտարարում է, որ «եթե Իրաքում պատերազմ վարելու համար նույնիսկ 100 տարի պետք լինի, ապա ամերիկացիները պետք է դրան պատրաստ լինեն»: Նա նաև հանդիսանում է նեոպահպանողականների կողմից մշակած միաժամանակ երկու կամ ավելի պատերազմներ վարելու ռազմավարական դոկտրինի կողմնակիցը: Իր ընտրարշավի ընթացքում Ջ.ՄակՔեյնը հայտարարել է. «Անհրաժեշտ է վերջ տալ այն երեսպաշտական պրակտիկային, երբ մենք պնդում ենք, որ երկու պատերազմ վարելու ռազմավարություն ունենք, իսկ վճարում ենք միայն այնպիսի բանակ պահելու համար, որը բավարար է միայն մեկ պատերազմ վարելու համար: Պետք է կամ ռազմավարությունը փոխել և այս դեպքում համաձայնվել անխուսափելի վտանգների առկայության հետ, կամ պատշաճ կերպով ֆինանսավորել մեր զինված ուժերը»:

Ջ.ՄակՔեյնի կարծիքով, հատկապես մեծ և անկանխատեսելի է Միացյալ Նահանգներին սպառնացող վտանգը, որը բխում է ռադիոակտիվ նյութերից: Ահաբեկչական խումբը, որն առանց տատանվելու պատրաստ է օգտագործել այս նյութերը ամերիկացիների դեմ, վտանգի տակ է դնում ոչ միայն ԱՄՆ-ը, այլ ամբողջ ներկա աշխարհակարգը, սակայն միայն այն դեպքում եթե կարողանա ձեռք բերել այդ նյութերը: Ուրեմն գլխավոր վտանգը այն պետություններն են, որոնք ունեն այդպիսի նյութեր և կամ չեն կարող ապահովել դրանց անձեռնմխելիությունը, կամ էլ պատրաստ են դրանք տրամադրել ահաբեկիչներին Միացյալ Նահանգների դեմ կիրառելու համար: Այս առումով հատկապես վտանգավոր են Իրանը և Հյուսիսային Կորեան, որոնք ունեն և զարգացնում են իրենց միջուկային տեխնոլոգիաները: Մակայն լուրջ վտանգ են ներկայացնում նաև Արևմուտքի հանդեպ թշնամաբար տրամադրված Չինաստանը և Ռուսաստանը, ուստի Վաշինգթոնը պետք է բոլոր միջոցներն ունենա իր տրամադրության տակ այս վտանգներին դիմակայելու համար: Վերադարձնել Միացյալ Նահանգներին իր բացարձակ առաջնորդությունը և ապահովել բարեկեցություն և անվտանգություն ամերիկացիների համար՝ սա է Ջ.ՄաքՔեյնի հիմնական ձևակերպումը նախընտրական քարոզարշավի ընթացքում:

Նա շատ կոնկրետ ծրագրերի մասին է խոսում հատկապես էներգետիկ ոլորտում, որը, համաձայն դիտորդների և վերլուծաբանների մեծամասնության կարծիքի, այս նախընտրական քարոզարշավի ամենակարևոր թեմաներից է: Ի տարբերություն իր

դեմոկրատ հակառակորդի, ՄակՔեյնը շեշտը դնում է ատոմային էներգետիկայի զարգացման վրա: Նա խոստանում է Սպիտակ տանը հայտնվելու դեպքում կառուցել 45 ատոմային էլեկտրակայաններ, որոնք 700.000-ից ավելի նոր աշխատանքային տեղեր կստեղծեն ամերիկացիների համար և թույլ կտան պակասեցնել Միացյալ Նահանգների կախվածությունը նավթագազային էներգետիկայից:

Հանրապետական թեկնածուն իր ներքին քաղաքականությանը ուղղված ծրագրերում մեծ տեղ է հատկացնում կրթության որակի բարձրացմանը և հասարակ ամերիկացիների համար այն հասանելի դարձնելու ծրագրերին: Նա առաջարկում է ավելացնել այն միջոցները, որոնք ուղղվում են ավելի բարձր որակավորում ունեցող ուսուցիչներ դպրոցներ բերելու համար, ինչպես նաև լրացուցիչ գումարներ վճարել այն ուսուցիչներին, որոնք համաձայն կլինեն «բարդ դպրոցներում» աշխատել: Իր ծրագրում լուրջ տեղ է հատկացված ցանցային ուսուցման համակարգի զարգացմանը, քանի որ, ըստ ՄակՔեյնի՝ ապագան կրթության այս մեթոդին է պատկանում, ուստի Միացյալ Նահանգները պետք է ամեն ինչ անի այս ոլորտում առաջատար դիրքեր ունենալու համար:

Առանձին խրախուսման միջոցներ են նախատեսվում քոլեջներում երիտասարդների ուսման շարունակականությունը ապահովելու համար: Ջ.ՄակՔեյնի կարծիքով, Միացյալ Նահանգները հպարտ է «Էմիգրանտների երկիր» լինելու փաստով. սակայն նկատվում է ավելորդ կախվածություն ներգաղթող ինտելեկտուալ ռեսուրսից, ինչը պետք է վերացնել՝ ուսման շարունակականությունը երիտասարդների համար գրավիչ դարձնելու միջոցով:

Սակայն անկախ ամեն ինչից, ՄաքՔեյնի հիմնական ռեսուրսը, դիտորդների կարծիքով, ոչ թե նրա այս կամ այն ծրագրերն են, այլ իր՝ ամերիկացիների հարգանքը վայելող անձնավորությունը:

Նա ասում է. «Ես միշտ իմ երկիրը և այս ժողովուրդը բարձր եմ դասել թե՛ ինձնից, և թե՛ քաղաքականությունից»: Ամերիկացիները հավատում են այս բառերին:

Եզրափակելով՝ կարելի նշել, որ երկու թեկնածուներն էլ իրենց առաջարկած ծրագրերում և իրենց անցած ճանապարհներից բխող գործողությունների տրամաբանությամբ շարունակում են մնալ Միացյալ Նահանգների՝ որպես համաշխարհային առաջատարի և միակ գերպետության գաղափարախոսության կրողներ: Նրանց ծրագրերը ուղղված են միայն ներկային և բխում են անցյալի տրամաբանությունից, չկան փորձեր պատասխանելու այն հարցերին, որոնք կարող են առաջանալ մոտ ապագայում արագ փոփոխվող աշխարհակարգի ճարտարապետության փոխակերպման ազդեցությամբ:

ՕԲԱՄԱՆ ԵՎ ՄԱԿՔԵՅՆԸ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

S. Մաթոսյան

ԱՄՆ նախագահության համար ընթացող նախընտրական պայքարում հիմնական թեկնածուներ դեմոկրատ Բարաք Օբաման և հանրապետական Ջոն ՄակՔեյնը դատողություններ և դիրքորոշումներ են հայտնել/հայտնում Հարավային Կովկասի պետությունների և վերջիններիս վերաբերող խնդիրների կապակցությամբ: Այդ դատողությունները և խոստումները ազդեցություն են գործում ոչ միայն ամերիկյան քաղաքացիների, այլև մեր տարածաշրջանում ապրող մարդկանց կողմնորոշումների և սպասելիքների վրա: Սակայն այն փաստը, որ Օբաման և ՄակՔեյնը իրենց հայտարարությունները անում են թեկնածուի կարգավիճակում և մեծ հաշվով պարտավորված չեն հավատարիմ մնալ դրանց նախագահ դառնալուց հետո, կասկածի տակ է դնում այդ հայտարարությունների «հուսալիությունը»:

Այս պարագայում հարց է առաջանում՝ արդյո՞ք կա որևէ միջոց՝ դեմոկրատ և հանրապետական թեկնածուների հայտարարությունների «հուսալիությունը» ստուգելու համար:

Սույն հոդվածը կփորձի փաստարկել, որ Հարավային Կովկասի խնդիրներին վերաբերող Օբամայի և ՄակՔեյնի նախընտրական հռետորությունը որոշ դեպքերում հարաբերական է (փոփոխման ենթակա) և երբեմն հակասություններ է պարունակում: Մասնավորապես, հոդվածում որպես օրինակ են դիտարկվում ԱՄՆ էներգետիկայի, տարածաշրջանային կոնֆլիկտների և Հայոց ցեղասպանության հարցերը, որոնց վերաբերյալ իրենց դիրքորոշումները ձևակերպելիս հանրապետական և դեմոկրատ թեկնածուները առաջնորդվել են քարոզչության նպատակահարմարությունից, ուստի և պարտադիր չէ որ այդ դիրքորոշումները ապագայում վերածվեն կոնկրետ քայլերի:

2008 թ. հունվարի 19-ին Բարաք Օբաման ամերիկահայ համայնքին ուղղված իր հայտարարության մեջ նշեց հայ-ամերիկյան հարաբերությունների իր տեսլականը. «Ես հայ-ամերիկյան հարաբերությունների մեծ կողմնակից եմ՝ այնպիսի հարաբերությունների, որոնք ամրապնդում են մեր ընդհանուր անվտանգությունը և առաջ մղում Հայաստանի ժողովրդավարությունը: Ես կշարունակեմ մեր աջակցությունը Հայաստանին, որը վստահելի գործընկեր է եղել տեռորիզմի և էքստրեմիզմի դեմ պայքարում»: Բացի այդ, նախագահի թեկնածուն խոստանում էր ամրապնդել Հայաստանի անվտանգությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակմանը վերջ դնելու միջոցով:

Օբաման ուղերձում նաև ասում էր, որ ջանքեր կգործադրի Լեռնային Ղարաբաղի հարցում վստահելի և մնայուն լուծման հասնելու ուղղությամբ. այստեղ խիստ

հետաքրքրական է այն փաստը, որ թեկնածուի կարծիքով այդ լուծումը պետք է նախ ընդունելի լինի երկու կողմերի համար և «հիմնված ժողովրդավարության և ինքնորոշման սկզբունքների վրա, որոնց նկատմամբ ԱՄՆ-ը հիմնարար պարտավորություններ ունի»:

Այստեղ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Օբաման հայերին ուղղված ճառում չի օգտագործում «տարածքային ամբողջականություն» արտահայտությունը, և տպավորություն է ստեղծվում, թե իր՝ որպես ապագա նախագահի, և Միացյալ Նահանգների համար նախապատվելին ազգերի ինքնորոշման գաղափարն է: Սակայն, այս տարվա օգոստոսին Վրաստանում տեղի ունեցած դեպքերը բացահայտեցին Օբամայի՝ տարածքային վեճերի վերաբերյալ նախընտրական հռետորության գործիքային բնույթը: Մասնավորապես, օգոստոսի 8-ին Օբաման հանդես եկավ հայտարարությամբ, որով դատապարտեց Ռուսաստանին՝ Աբխազիան և Հարավային Օսեթիան որպես անկախ պետություններ ճանաչելու համար և կոչ արեց միջազգային հանրությանը չճանաչել այս ակտի իրավաչափությունը. «Ռուսաստանի կառավարությունը պետք է հարգի Վրաստանի և այլ պետությունների տարածքային ամբողջականությունը և անկախությունը... Եթե Ռուսաստանի կառավարությունը շարունակի խախտել միջազգային հանրության նորմերը և պրակտիկան, Միացյալ Նահանգները և մեր դաշնակիցները պետք է վերանայեն Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների բոլոր ասպեկտները»:

2008 թ. հունվարի 19-ին Բարաք Օբաման ամերիկահայ համայնքին ուղղված վերոհիշյալ հայտարարության մեջ անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին: Այստեղ Օբաման մասնավորապես նշում էր, որ սենատոր եղած ժամանակ նա կանգնած է եղել ամերիկահայ համայնքի կողքին՝ պահանջելով, որ Թուրքիան ճանաչի ցեղասպանության փաստը: Դեմոկրատ թեկնածուի հայտարարությունը աչքի է ընկնում նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերող ձևակերպումներում հաստատական և միանշանակ շեշտադրումներով. «Երկու տարի առաջ, ես քննադատել եմ պետքարտուղարին Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսին աշխատանքից ազատելու համար, այն բանից հետո, երբ վերջինս արդարացիորեն գործածել էր «ցեղասպանություն» եզրը՝ նկարագրելու համար Թուրքիայի կողմից իրականացված հազարավոր հայերի սպանող 1915թ.-ից ի վեր: Ես պետքարտուղար Ռայսին հայտնել եմ իմ հաստատուն համոզմունքը այն մասին, որ Հայոց ցեղասպանությունը ենթադրություն, անհատական կարծիք, տեսակետ չէ, այլ մի փաստ, որը հիմնավորված է բազմաթիվ փաստաթղթերով և հաստատված ծանրակշիռ պատմական ապացույցներով... Այն պաշտոնական քաղաքականությունը, որը կոչ է անում դիվանագետներին աղավաղել պատմական փաստերը, հեռանկար չունի: Որպես սենատոր, ես հաստատականորեն աջակցում եմ Հայոց ցեղասպանության բանաձևի (H.Res.106 and S.Res.106) ընդունմանը և որպես նախագահ, ես կճանաչեմ Հայոց ցեղասպանությունը»:

Ի լրումն սրա, Բարաք Օբաման Միացյալ Նահանգների փոխնախագահի թեկնածու է ընտրել սենատոր Ջո Բայդենին: Վերջինս գլխավորում է ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների կոմիտեն և Հայոց ցեղասպանության հարցում հայտնի է եղել իր ոչ թուրքանպաստ դիրքորոշմամբ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության հարցը հենց այն լակմուսի թուղթն է, որը կարող է ցույց տալ նախագահության ձգտող թեկնածուի *խոստումների* և նախագահ դարձած նախկին թեկնածուի *իրական քայլերի* տարբերությունը (բավական է մտաբերել ներկայիս նախագահ Ջորջ Բուշի խոստումները ամերիկահայ համայնքին 2000 թ.-ին): Հենց այս իրողության գիտակցումն էր արտահայտում Թուրքիայի վարչապետի արձագանքն Օբամայի ուղերձին, ուր Էրդողանը վերջինիս անվանել էր «քաղաքական դիլետանտ» և հույս հայտնել, որ մի օր Օբաման կգիտակցի 70 միլիոնանոց Թուրքիայի և 2 միլիոնանոց Հայաստանի տարբերությունը:

Թեև դեմոկրատ թեկնածուի թիմի նախընտրական քարոզչության մեջ Թուրքիայի կարևորությունը մինչ այժմ հատուկ շեշտադրման չի արժանացել (ինչը չի կարելի ասել հանրապետական թիմի համար), այնուամենայնիվ, Օբամայի նախընտրական ամենագլխավոր դրույթներից մեկը, որը վերաբերում է Իրաքից ամերիկյան 150 հազարանոց զորքի արդյունավետ և անվտանգ դուրսբերմանը, ըստ վերլուծաբանների, չի կարող կյանքի կոչվել առանց Թուրքիայի հետ սերտ համագործակցության: Ավելորդ չէր լինի նշել նաև այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առթիվ տարածած իր ուղերձում Օբաման Թուրքիայի նախագահ Գյուլի այցը Հայաստան բնութագրել էր որպես «հուսադրող քայլ» և ողջունել երկու երկրների նախագահների հանդիպումը: (Չի կարելի բացառել, որ այս հանդիպումը հետագայում Օբամայի վարչակարգի կողմից կարող է օգտագործվել որպես պատրվակ Հայոց ցեղասպանության ճանաչումը օրակարգից հանելու համար՝ հայ-թուրքական ընթացիկ հարաբերությունները չխանգարելու հիմնավորմամբ):

Երրորդ խնդիրը, որը տեղ է գտել Բարաք Օբամայի նախընտրական ծրագրում և որն անուղղակիորեն առնչվում է Հարավային Կովկասին, վերաբերում է էներգետիկությանը, ավելի շուտ դրանցից Միացյալ Նահանգների կախվածությունը նվազեցնելու հարցին:

Բանն այն է, որ դեմոկրատ թեկնածուի նախընտրական քարոզարշավի առանցքային դրույթներից մեկը Միացյալ Նահանգների նոր էներգետիկ ծրագիրն է: Ըստ այդ ծրագրի, Օբաման նախատեսում է 10 տարվա ընթացքում այնքան նավթ խնայել, որքան ներկայում Միացյալ Նահանգները ներկրում է Վենեսուելայից և Մերձավոր Արևելքից միասին վերցրած:

Միջիգան նահանգի Լանսինգ քաղաքում իր էներգետիկ ծրագիրը ներկայացնելիս Օբաման մասնավորապես ասել էր. «ԱՄՆ-ի կախվածությունը արտասահմանյան նավթից այս պետության առջև երբևիցե ծառայած ամենավտանգավոր և հրատապ

մարտահրավերներից մեկն է»: Այդ կախվածությունը, ըստ Օբամայի, Մերձավոր Արևելքում տիրող անկայունության պատճառով հղի է բազմաթիվ բացասական հետևանքներով: Վառելիքի գները, նրա կարծիքով, դատարկում են ամերիկացիների գրպանները, կաշկանդում բիզնեսը և աշխատատեղեր փակում:

Այս իրավիճակը փոխելու նպատակով Օբամայի էներգետիկ ծրագիրը կոնկրետ քայլեր է առաջարկում: Նախ, մինչև 2015 թվականը երկրում պետք է շրջանառության մեջ դրվեն 1 միլիոն հիբրիդ և էլեկտրական հոսանքով սնուցվող մեքենաներ, որոնք արտադրված կլինեն հենց Միացյալ Նահանգներում: Բացի այդ, մինչև 2012 թվականը Միացյալ Նահանգներում էլեկտրաէներգիայի 10 տոկոսը (մինչև 2025` թվականը 25 տոկոսը) պետք է արտադրված լինի էներգիայի վերականգնվող կամ այլընտրանքային աղբյուրներից:

Սա է պատճառը, որ որոշ ամերիկահայ գործիչներ եկան այն եզրակացության, թե Միացյալ Նահանգների կախվածությունը օտարերկրյա էներգակիրներից նվազեցնելու ընդհանուր համատեքստում, այս երկիրը կթուլացնի նաև իր ուղղակի (օժանդակության պետական ծրագրեր) և անուղղակի (նավթային ընկերությունների ներդրումներ) ուշադրությունը Ադրբեջանին` հավասարակշռություն ստեղծելով նաև Հայաստանի նկատմամբ իրականացվող իր քաղաքականության մեջ:

«Հայերը Օբամայի համար» նախաձեռնության ղեկավար Արին Իբրանոսյանի տեսակետը այս առնչությամբ շատ խոսուն է: ՄակՔեյնի ընտրվելու դեպքում, նրա կարծիքով. «Արիզոնացի սենատորը... կշարունակի իր աջակցությունը խոշոր նավթային ընկերություններին, որոնք մեծ եկամուտներ են ստանում վառելիքի բարձր գներից և միլիարդավոր դոլարներ են լցնում այնպիսի երկրներ, ինչպիսին է Ադրբեջանը, երկներ, որոնք թերանում են ապահովել մարդու իրավունքների հիմնական սկզբունքները»:

Այստեղ հարկ է նշել, որ Օբամայի էներգետիկ ծրագիրը ուղղակիորեն չի բացառում ամերիկյան նավթադոլարների մուտքը Ադրբեջան. բացի այդ, օգոստոս ամսի սկզբին էներգետիկայի` սկզբունքային համարվող հարցում Օբամայի որոշակի նահանջը մեկ անգամ ևս հուշում է, որ նրա հոետորությունը ավելի շատ կարող է հենված լինել քարոզչության նպատակահարմարության և ոչ թե իրական նպատակադրվածության վրա: Խոսքը վերաբերում է այն դրվագին, երբ զգալով ամերիկացի ընտրողների կողմնորոշման վրա վառելիքի գների ազդեցությունը, Օբաման հայտարարեց, որ պատրաստ է օգտագործել Միացյալ Նահանգների նավթային ռեզերվները և նոր հորատանցքեր բացել երկրի օֆշորային ջրերում, քաղաքականություն, որին դեմոկրատ սենատորը նախկինում միշտ ընդդիմացել էր (դիրքորոշման այսպիսի փոփոխության պատճառով, Օբամայի հակառակորդները նրան նույնիսկ «երկերեսանի Օբամա» անունը տվեցին):

Ուշագրավ է, որ եթե դատելու լինենք Միացյալ Նահանգների նախագահի հանրապետական թեկնածու Ջոն ՄակՔեյնի հոետորությունից, ապա` Իբրանոսյանի

կարծիքին հակառակ, ՄակՔեյնի ընտրվելու դեպքում Միացյալ Նահանգների ֆինանսական ռեսուրսները ավելի շուտ կդադարեն հոսել դեպի Ադրբեյջան: Բանն այն է, որ ՄակՔեյնը ավելի կտրուկ դիրքորոշում ունի Միացյալ Նահանգների էներգետիկ անկախությունը ապահովելու հարցում: Օրինակ՝ օգոստոսի 19-ին հնչեցրած իր ճառի մեջ ՄակՔեյնը ասել էր հետևյալը. «Մեր պետությունը տարեկան 700 միլիարդ դոլար է ուղարկում դուրս՝ այն երկրներ, որոնք մեզ այդքան էլ շատ չեն սիրում: Երբ նախագահ դառնամ, դրան վերջ է դրվելու: Մենք պատրաստվում ենք հասնել էներգետիկ անկախության և դա անելու ենք բոլոր ռեսուրսները օգտագործելու միջոցով»: Քիչ ավելի վաղ՝ հունիսի 17-ին, հանրապետական սենատորը համեմատել էր ԱՄՆ-ի համար նավթի ներկրման աղբյուր հանդիսացող Կանադան և Մեքսիկան այլ նմանատիպ երկրների հետ՝ օգտագործելով ավելի խիստ բառեր. «Հսկայական տարբերություն կա երկու դեմոկրատական հարևանների հուսալիության... և Մերձավոր Արևելքում և այլուր հաճախ թշնամական ու ոչ դեմոկրատական երկրների հուսալիության միջև»: Ընդ որում, եթե Օբաման իր ճառերում խոստանում է նավթային անկախության հասնել մի քանի տասնամյակների ընթացքում, ՄակՔեյնը դա խոստանում է անել 5 տարում՝ օգտագործելով բոլոր հնարավոր այլընտրանքային միջոցները՝ քամու, արևի ուժը, բիովառելիքը, մաքուր քարածուխը, միջուկային էներգիան, ինչպես նաև Միացյալ Նահանգների օֆշորային ջրերում նոր հորատանցքերի բացումը:

Չնայած այսպիսի հաստատական դիրքորոշմանը՝ մի շարք փաստեր համոզում են, որ էներգետիկայի հարցում ՄակՔեյնի խոստումները ելնում են քարոզչական նպատակահարմարությունից, ուստի նրա հաղթանակի դեպքում քիչ հավանական կլինեք արտասահմանյան, այդ թվում՝ ադրբեյջանական նավթի նկատմամբ ամերիկյան հետաքրքրության նվազում ակնկալել: Նախ Կոնգրեսում անցկացրած իր 26 տարիների ընթացքում ՄակՔեյնը հայտնի է եղել որպես նավթային մեծ ընկերությունների ջերմ աջակից, և վերջիններս (օրինակ Chevron-ը) արդեն 1 միլիոն դոլարից ավելի նվիրաբերում են կատարել հանրապետական սենատորի քարոզարշավին: Մոտ ապագայում ադրբեյջանական նավթի նկատմամբ հանրապետականների հետաքրքրության պահպանման մասին է խոսում նաև փոխնախագահ Դիք Չեյնիի այցը Ադրբեյջան, ուր նա հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները հետաքրքրված է տարածաշրջանում կայունության պահպանմամբ: Բացի այդ, Չեյնին Բաքվում հատուկ հանդիպում էր ունեցել British Petroleum և Chevron ընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնք փոխնախագահին տեղյակ էին պահել Ադրբեյջանում և ընդհանրապես կասպիական տարածաշրջանում էներգետիկ անվտանգության հետ կապված խնդիրներին՝ ռուս-վրացական հակամարտության համատեքստում: Եվ վերջապես, ամերիկացի էքսպերտների գնահատումներով, Միացյալ Նահանգները կատարյալ էներգետիկ ինքնուրույնության կարող է հասնել լավագույնը 40-50 տարի հետո: Հանրապետականների համար ադրբեյջանական նավթի կարևորության հարցը

արտացոլվեց նաև ՄակՔեյնի՝ հարավօսեթական ճգնաժամի նկատմամբ ունեցած դիրքորոշման մեջ:

Ռուս-վրացական հակամարտության հարցում ՄակՔեյնը տարբերվում է իր շատ ավելի խիստ գնահատականերով: Եթե Օբաման կոչ էր արել բոլոր կողմերին զսպվածություն ցուցաբերել և դադարեցնել ռազմական գործողությունները, ապա ՄակՔեյնի քննադատության սլաքը ուղղված էր միայն Ռուսաստանի դեմ. «Ռուսաստանը պետք է անմիջապես և առանց որևէ նախապայմանների դադարեցնի իր ռազմական գործողությունները՝ դուրս բերելով բոլոր ուժերը անկախ Վրաստանի տարածքից»: ՄակՔեյնը նաև առաջարկել էր ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի հետ համատեղ դիվանագիտական ճնշում գործադրել Ռուսաստանի վրա վերջինիս «բռնած սպառնալի ընթացքը շրջելու համար»: ՄակՔեյնի խիստ քննադատությունը Ռուսաստանի հանդեպ անսպասելի չէր, քանի որ սենատորը նախկինում ևս հանդես էր եկել Ռուսաստանի քննադատությամբ և նույնիսկ առաջարկել վերջինիս զրկել Մեծ ութնյակի անդամությունից:

Անսպասելի չէր նաև հանրապետական թեկնածուի աջակցությունը Վրաստանին, քանի որ անցյալում Վրաստան կատարած իր մի քանի այցելությունների ժամանակ ՄակՔեյնը հայտարարել էր, որ Հարավային Օսեթիան և Աբխազիան պատմականորեն վրացական հողեր են: Ռուս-վրացական պատերազմի ընթացքում ՄակՔեյնի բացահայտ վրացամետ դիրքորոշումը մի շարք դրսևորումներ ունեցավ: Նախ, թեկնածուն պարբերաբար հեռախոսազրույցներ էր ունենում Վրաստանի նախագահ Սահակաշվիլիի հետ և խրախուսում վերջինիս: ՄակՔեյնը իր ճառերում անընդհատ քննադատում էր Ռուսաստանին և վրացամետ ելույթներ ունենում՝ շեշտելով ամերիկյան կառավարության կողմից Վրաստանին մարդասիրական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: Օգոստոսի 11-ին Փենսիլվանիայում ունեցած ճառի ժամանակ հանրապետական թեկնածուն հայտարարեց. «Մենք այսօր բոլորս վրացիներ ենք»: Բացի այդ, օգոստոսի 26-ին Վրաստան ժամանեց հանրապետական թեկնածուի կինը՝ Սինդի ՄակՔեյնը, որը այցելեց փախստականների ժամանակավոր ապաստարաններ և մեղադրեց Ռուսաստանին այդ մարդկանց տառապանք պատճառելու մեջ:

Իմիջիայլոց, ՄակՔեյնի վրացամետ դիրքորոշումը այնքան ակնհայտ էր, որ Օբամայի ճամբարից մեղադրանքներ հնչեցին: Մասնավորապես, հայտարարվեց, որ ՄակՔեյնը կաշկանդված է շահերի կոնֆլիկտով, քանի որ նրա՝ արտաքին հարաբերությունների հարցերով ավագ խորհրդատուն Վաշինգտոնում զբաղվում է վրացամետ լոբբինգով:

Վրաստանի նկատմամբ հանրապետական թեկնածուի ուշադրությունը ավելի հասկանալի է դառնում ԱՄՆ-ի նավթային քաղաքականության համատեքստում: Այդ ուշադրության և նավթային շահերի միջև կապը երևում է հենց ՄակՔեյնի ճառերում: Փենսիլվանիայի վերոնշյալ ճառի ժամանակ հանրապետական թեկնածուն ասել էր, որ

ներկայիս ճգնաժամը Վրաստանին և տարածաշրջանում այլ ամերիկամետ ու դեմոկրատական ուժերին Ռուսաստանից պաշտպանելու խնդիր չէ միայն. «Մենք այլ կարևոր ռազմավարական շահեր էլ ունենք Վրաստանում՝ հատկապես Բաքու-Ջեյհան նավթամուղի անխափան աշխատանքը, ... Վրաստանի տարածքով դեպի Ադրբեջան և Կենտրոնական Ասիա կարևոր կոմունիկացիաների և առևտրային ճանապարհների գործունեությունը, ... ինչպես նաև ՆԱՏՕ-ի ազդեցությունը, որի անդամները անցյալ ապրիլին վերահաստատեցին Վրաստանի տարածքային ամբողջականությունը, անկախությունը և ինքնիշխանությունը»: Նույն ճառում, մի փոքր ավելի ուշ, ՄակՔեյնը կրկին անդրադառնում է Բաքու-Ջեյհան նավթամուղին. «Միացյալ Նահանգները պետք է համատեղ աշխատեն Ադրբեջանի, Թուրքիայի, ինչպես նաև այլ շահագրգիռ բարեկամների հետ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգությունը ուժեղացնելու ծրագրեր մշակելու համար»:

Եվ վերջապես, եթե համեմատելու լինենք Հայոց ցեղասպանության հարցում Օբամայի և ՄակՔեյնի դիրքորոշումները, ապա վերջինս, ի տարբերություն Օբամայի, Մենատում իր գործունեության ողջ ընթացքում միշտ ընդդիմացել է Հայոց ցեղասպանության ընդունման նախաձեռնություններին: 2008 թ. փետրվար ամսին Ամերիկայի Հայ Ազգային Կոմիտեին (ANCA) ուղղված իր նամակում ՄակՔեյնը Առաջին աշխարհամարտում հայերի հետ տեղի ունեցածը անվանեց «ողբերգություն»՝ խուսափելով «ցեղասպանություն» որակումից: Չնայած սրան՝ ցանկության դեպքում հանրապետական թեկնածուի օգտագործած ձևակերպումների հետևում կարելի է կարդալ ցեղասպանության բուն փաստի ճանաչումը, ինչը, կարելի է ասել, որոշակի տեղ է թողնում անհրաժեշտության դեպքում հետագայում դիրքորոշման շրջադարձի համար. «Արդարացի կլիներ ասել, որ այս ողբերգությունը՝ մեկ ու կես միլիոն հայերի բռնի սպանող Օսմանյան կայսրության տիրապետության ներքո, հանդիսացել է նաև ամենաանտեսված ողբերգությունը: Այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի կողմից կրած տառապանքները եղան մարդկության ամենաարյունոտ հարյուրամյակի նախերգանքը»:

ՄակՔեյնի՝ ընդհանուր առմամբ թուրքամետ դիրքորոշման մասին է խոսում նաև նրա նախընտրական քարոզչությունը: ԱՄՆ-ի արտաքին հարաբերություններին նվիրված իր առաջին մեծ ճառում ՄակՔեյնը հայտարարել էր, որ ի տարբերություն Բուշի, իր արտաքին քաղաքականությունը բազմակողմանի կլինի և միջազգային նշանակություն ունեցող հարցերում հաշվի կառնի ԱՄՆ-ի դաշնակիցների կարծիքը. դաշնակիցների թվում ՄակՔեյնը նշել էր Թուրքիան՝ բնութագրելով վերջինիս որպես «մեծ պետություն» և «առաջատար դեմոկրատիա»:

Այսպիսով, ինչպես տեսանք, երկու թեկնածուների նախընտրական քարոզչությանն էլ հատուկ են նախ ներքին հակասություններ: Օբամայի դեպքում հակասությունը արտահայտվեց Հարավային Կովկասում տարածքային վեճերի լուծման հարցում: Լեռնային Ղարաբաղի դեպքում, հայ համայնքին ուղղված ուղերձում դեմոկրատ

թեկնածուն շեշտադրում է ազգերի ինքնորոշման սկզբունքի կարևորությունը, մինչդեռ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի դեպքում, ամերիկացի ընտրողին իր արտաքին քաղաքականության հաստատակամությունը ցուցադրելու համար Օբաման խոսում է տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանման մասին:

Հանրապետական թեկնածուի դեպքում հակասությունը դրսևորվեց ամերիկյան էներգետիկայի վերաբերյալ դիրքորոշումներում: Մի կողմից, ՄակՔեյնը խոսում է Միացյալ Նահանգների կախվածությունը արտաքին էներգառեսուրսներից վերացնելու ուղղությամբ կտրուկ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին (որի համատեքստում կարող է թուլանալ Ադրբեջանի և Վրաստանի նշանակությունը ԱՄՆ-ի համար), մյուս կողմից, նա շարունակում է շեշտել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի, հետևաբար՝ Ադրբեջանի ու Վրաստանի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը: Սրան գումարվում են նրա կապերը մեծ նավթային ընկերությունների հետ: Ընդ որում, ինչպես և Օբամայի դեպքում, ՄակՔեյնի նախընտրական հռետորության մեջ հակասություն կարելի է գտնել նաև Հարավային Կովկասում տարածքային վեճերի առնչությամբ՝ եթե համեմատելու լինենք հանրապետական թեկնածուի դիրքորոշումը մի կողմից Հարավային Օսեթիայի ու Աբխազիայի և մյուս կողմից Կոսովոյի նկատմամբ:

Թեկնածուների դիրքորոշումների հարաբերականությունը արտահայտվեց մի դեպքում էներգետիկայի հարցում, երբ Օբաման, զգալով ընտրողների կողմնորոշման վրա վառելիքի գների ազդեցությունը, հրաժարվեց օֆշորային ջրերում նոր հորատանցքեր բացելու նկատմամբ իր կարծիքի դիրքորոշումից, և մյուս դեպքում Հայոց Ցեղասպանության հարցում, երբ հանրապետական թեկնածուն, կաշկանդված լինելով սենատում ծավալած իր թուրքամետ գործունեությամբ, նավթային ընկերությունների հետ կապերով և միաժամանակ չցանկանալով ամբողջությամբ երես թեքել մեկ միլիոնից ավելի ամերիկահայ ընտրողներից, իր ձևակերպումներում փորձեց գտնել «ոսկե միջինը»՝ հրաժարվելով «ցեղասպանություն» եզրից, բայց միաժամանակ ընդունելով «մեկ ու կես միլիոն հայերի բռնի սպանող Օսմանյան Կայսրությունում»:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանությունը այն հարցն է, որի նկատմամբ դեմոկրատ թեկնածուն մինչ այժմ հանդես է եկել հետևողականությամբ, թեև ինչպես նշվեց վերևում, սա չի կարող դիտվել որպես պարտավորեցնող հանգամանք ապագայի համար:

Բ.ՕԲԱՄԱՆ ԸՆԴԴԵՄ Ջ.ՄԱԿՔԵՅՆԻ. ԱՐՏԱՔԻՆՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Վ. Ազյան

Լիբերալ ինտերնացիոնալիզմի հայեցակետը և միջկուսակցական փոխհամաձայնության ձևավորումը ԱՄՆ-ում

Ներքին քաղաքական համադրության ազդեցությունը Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության իրագործման վրա էական փոխակերպումների ենթարկվեց նորագույն պատմության ընթացքում: Մինչև ԱՄՆ-ի կողմից գլոբալ ռազմավարության որդեգրումը, որի հիմքում ընկած էր լինելու ստեղծվելիք աշխարհակարգի ուրվագծման և սերտման գործում ամերիկյան յուրահատուկ պատասխանատվության մասին թեզը, երկրի արտաքինքաղաքական ուղեգիծը շատ հաճախ վերածվում էր երկկուսակցական համակարգին բնորոշ մրցապայքարի պատանդի: Անշուշտ, թե՛ Դեմոկրատական, և թե՛ Հանրապետական կուսակցությունների վերնախավերը միասնական էին պետության արտաքին ռազմավարության նորմատիվ հենքի, ինչպես նաև արտաքին աշխարհում ազգային շահի ընդհանրական ընկալման հարցում: Այդուհանդերձ, մեծ տերության կարգավիճակի ստանձնումից (19-րդ դարի վերջին քառորդ) մինչև 1940-ական թթ. ամերիկյան քաղաքական էլիտան պետության արտաքին վարքագծի, դրա հիմքում ընկած հանգուցային սկզբունքների շուրջ եղած մոտեցումներում տատանվող դիրքորոշում ուներ. նախապատվությունը մերթ օրվում էր միջազգային ասպարեզում լայն համագործակցության գաղափարին, մերթ՝ ուժային կոշտ քաղաքականությանը: Նման քաղաքական կարծրատիպերի տիրապետության առավել ցայտուն օրինակներն էին Թ.Ռուզվելտի վարչակազմի կողմից որդերգրված «մեծ մահակի» քաղաքականությունը, որին հակադրվում էր վիլսոնյան ժամանակաշրջանի իդեալիստական լիբերալիզմի ոգեկոչումը՝ իբրև գործնական քաղաքականության հիմք:

Արտաքին ռազմավարության գործնական և հայեցակարգային (որոշ դեպքերում նույնիսկ գաղափարական) տրոհման ուժագծերն, ըստ կուսակցական պատկանելության, զգալի չափով ածանցվում էին նաև ներքին կուսակցական տարանջատման տրամաբանությունից: Հատկապես, երկու սկզբունքային հիմնախնդիրներ էին պարբերաբար բաժանում դեմոկրատական Հարավը հանրապետական Հյուսիսից. Միացյալ Նահանգների զինված ուժերի անհրաժեշտ թվաքանակի շուրջ ընթացող բանավեճերը և արտաքին առևտրի հետ կապված մանրամասները: Հանրապետական կուսակցության քաղաքական գերակայության ներքո գտնվող ուրբանիզացված արդյունաբերական Հյուսիսը մշտապես հակված էր հոգուտ մեծամասշտաբ բանակի պահպանմանը և պրոտեկցիոնիստական

միջոցառումների կիրառմանը՝ առաջին հերթին Եվրոպայի հետ առևտրատնտեսական հարաբերություններում:

Դեմոկրատների «բնօրրան» Հարավը, ելնելով սեփական տնտեսական ու հասարակական կացութաձևի կառուցվածքային առանձնահատկություններից (հանքարդյունաբերություն, բնական ռեսուրսների արտահանում), պնդում էր առևտրի ազատականացման ու փոքրաթիվ զինված ուժերի զարգացման անհրաժեշտության վրա:

Հիշյալ բաժանարար գծերի (որոնք հստակ արտացոլված քաղաքական-կուսակցական ուղղվածություն էին կրում) վերացման առաջին միտումներն ի հայտ եկան արդեն Ֆ. Ռուզվելտի նախագահության շրջանում՝ 1930-ական թթ. «Նոր կուրսի» քաղաքականության ժամանակներում: Նախ, Հարավի տնտեսական համակարգի արդիականացմանը զուգընթաց՝ կտրուկ աճեց Հյուսիսի շահագրգռությունը ապահովելու միջազգային համակարգի կայունությունը՝ հիմնականում կենտրոնանալով եվրոպական մայրցամաքի վրա: Երկրորդ, համազգային հասարակական-տնտեսական կառուցվածքային փոխակերպումները լուրջ նախադրյալներ ստեղծեցին Հյուսիս-Հարավ քաղաքական դաշինքի համար: Անկասկած, միջկուսակցական փոխհամաձայնության սերտման գործում նշանակալի դեր խաղաց Ֆ. Ռուզվելտը. առաջին անգամ նորագույն պատմության ընթացքում դեմոկրատները հնարավորություն ստացան հատելու պայմանական Մասոն-Դիքսոնի գիծը և ամրապնդվելու Հյուսիսում: Միջկուսակցական տարաձայնությունները ռասայական պրոբլեմների, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության շուրջ պահպանվեցին, սակայն առարկայական կոնսենսուս ձևավորվեց ընդդեմ տնտեսական ազգայնականության, ֆաշիզմի, իսկ այնուհետև՝ նաև կոմունիզմի:

Արտաքին քաղաքականության վարույթում հիշյալ աշխարհաքաղաքական ու ներքին տեղաշարժերն իրենց արտահայտությունը գտան ամերիկյան լիբերալ ինտերնացիոնալիզմի ձևավորման մեջ, որը կրում էր թե՛ բովանդակային, և թե՛ քաղաքական էություն. հայեցակարգային մի համադրույթ, որի պահպանման հիմքում ընկած էր երկկուսակցական հստակ փոխհամաձայնություն:

Չուտ ներամերիկյան զարգացման արգասիք լինելուց զատ, լիբերալ ինտերնացիոնալիզմի գործնական քաղաքականության ոլորտ մտնելը պայմանավորված էր նաև օբյեկտիվ ռազմավարական և օպերացիոնալ կարգի գործոններով: Ամերիկյան ներգրավվածության կտրուկ աճը համաշխարհային գործընթացներում առաջնահերթ էր դարձնում արտաքին քաղաքականությանը հարատև բնույթ հաղորդելու անհրաժեշտությունը՝ անկախ նրանից, թե որ կուսակցությունն է հաղթել համազգային ընտրություններում: Ակնհայտ էր, որ առանց լուրջ ինստիտուցիոնալ հենքի անհնարին կլիներ գործնականացնել երկկուսակցական կոնսենսուսի վրա հիմնված այդ համադրույթը:

Դասական անգլո-սաքսոնյան աշխարհաքաղաքական թեզը, ըստ որի ԱՄՆ-ը ամեն գնով պետք է խոչընդոտեր որևէ տերության իր տիրապետությունը հաստատել եվրասիական մայրցամաքի նկատմամբ, գերակա կոնստանտ էր ամերիկյան բոլոր

նախագահների համար և ենթադրում էր ոչ միայն ուժային լայնածավալ ներգրավում, այլև խոշորածավալ համագործակցության դաշտ դաշնակիցների հետ: Գլոբալ ազատական տնտեսակարգ ստեղծելու ու զարգացնելու շարժը պայմանավորված էր ինչպես տնտեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական հրամայականներով: Օրինակ, հետպատերազմյան Եվրոպայի համար Մարշալի պլանի հաստատման գործում հանրապետականների աջակցության ձեռքբերումը Կոնգրեսում մեծապես հաջողվեց առաջ քաշված փաստարկների շնորհիվ. դեմոկրատական վարչակազմի կողմից օգնության ցուցաբերման հիմքում ընկած էին ոչ այնքան հումանիտար, որքան աշխարհաքաղաքական նկատառումներ²:

Ճիշտ է, ինչպես նշում է ռուսաստանյան ամերիկագետ Վ.Սոգրինը, միջկուսակցական փոխհամաձայնության բաղադրիչների ծավալն ու բովանդակությունը անփոփոխ չէին, այլ փոխակերպվում էին ժամանակին համընթաց³: Այնուամենայնիվ, բազային հարցադրումների պարագայում երկու կուսակցությունների էլիտաները մշտապես հակված էին «կենտրոնամետ» դիրքորոշման, որը չէր վտանգի ազգային գլխավոր շահերը:

Որակական տարբերությունները երկու կուսակցությունների միջև արտաքին հիմնախնդիրների պարագայում անշուշտ պահպանվեցին՝ արտացոլելով ամերիկյան հասարակական-քաղաքական և տնտեսական զարգացման բարդ ու համալիր բնույթը: Սակայն լիբերալ ինտերնացիոնալիզմի անկյունաքարային դրույթները մնացին անսասան: Երկբևեռ աշխարհակարգի պայմաններում արտաքին ռազմավարության գերակա շարժառիթներն ու սկզբունքները հենվում էին լայն կոնսենսուսի վրա (ԽՍՀՄ-ի «զսպումը» (Հ.Թրումեն, Դ.Աչետոն - դեմոկրատական վարչակազմ), «կոմունիզմի զսպումն ու հետ շարժումը», «հավասարակշռումը պատերազմի եզրին»⁴ (Դ.Էյզենհաուեր, Ջ.Ֆ.Դալլես - հանրապետական վարչակազմ), «ազատ աշխարհակարգի պաշտպանությունը» (Ջ.Քենեդի - դեմոկրատական վարչակազմ) և այլն)⁵:

Ընդ որում, հատկանշական էր, որ թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական գործադիր համակարգերում յուրահատուկ հակակշիռների սխեմա էր գործում, որը բովանդակային առումով ինչ-որ տեղ կրկնօրինակում էր միջկուսակցական փոխհամաձայնության տրամաբանությունը՝ միակողմանի ուժային ճնշման միջոցների կիրառումը պարտադիր ձևով միահյուսել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նորմատիվ-արժեքային օրակարգի հետ, որն, ի թիվս այլոց, ենթադրում էր բազմակողմանի ձևաչափերի խթանում ու դաշնակիցների հետ ինստիտուցիոնալ

² D.Yergin, Shattered Peace: The Origins of the Cold War and the National Security State, Boston, 1977, pp.326-329.

³ В.Согрин, Политическая история США, М. “Весь Мир” 2001, стр.288-289.

⁴ И.Усачев, Джон Фостер Даллес: политический миф и реальность, М.”Мысль” 1990, стр.211-241.

⁵ Ճիշտ է, վիետնամական պատերազմի տարիներին երկկուսակցական փոխհամաձայնությունը ենթարկվեց լուրջ փորձության, սակայն ավելի ուշ այն վերականգնվեց՝ գլխավորապես պայմանավորված լինելով ԽՍՀՄ-ի շարունակական զսպման անհրաժեշտությամբ:

համագործակցության զարգացում⁶: Այլ խոսքերով, ամերիկյան քաղաքական իսթեբլիշմենտի կողմից ընդունված «կենտրոնամետ» արտաքին ուղեգիծը, որոշ իմաստով, ձեռք էր բերել կառուցվածքային էություն:

Միջկուսակցական փոխհամաձայնության ջլատումը Մառը պատերազմի ավարտից հետո

Պարադոքսալ է, սակայն կորեական և վիետնամական ծանրագույն ճգնամաժամեր վերապրած և իր հարատևությունը բազմաթիվ պարագաներում ապացուցած երկկուսակցական լիբերալ-ինտերնացիոնալիստական փոխհամաձայնության տրոհման առաջին միտումներն ի հայտ եկան 1991թ.⁷ Ջ.Բուշ-ավագի հանրապետական վարչակազմի կողմից Օոցուս վարած հաղթական պատերազմի ժամանակներից ի վեր: Թեև պատերազմի վարույթն (դաշնակից պետությունների լայն կոալիցիայի ստեղծում, միջազգային աջակցություն) ու հանրային աջակցության աստիճանը (կողմ արտահայտվեցին ամերիկյան բնակչության մոտ 70%) ակնհայտորեն տեղավորվում էին նախկինում մշակված արտաքինքաղաքական համադրույթի շրջանակում, ռազմական գործողություններ սկսելու համար Սենատի հաստատումը ձեռք բերվեց չափազանց նվազ գերակշռությամբ (52 ընդդեմ 47): Հատկանշական փաստ է. սենատորները քվեարկում էին ըստ կուսակցական պատկանելության՝ ակներև դարձնելով այն անխուսափելի իրողությունը, որ սառըպատերազմյան կուսակցական համերաշխությունը վերածվում է անցյալի »յուրօրինակ մի ժառանգության»⁷:

Հանրապետական-դեմոկրատական ընդհանուր արտաքինքաղաքական «պլատֆորմի» կազմալուծման միտումը շարունակեց խորանալ նաև Բ.Քլինթոնի նախագահության օրոք: 1993թ.⁸ առաջին իսկ լուրջ անհաջողությունից հետո, ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Սոմալիից, իսկ 1999թ. Կոսովոյի ճգնաժամի ժամանակ Բ.Քլինթոնը մեծ դժկամությամբ համաձայնեց ռազմական ուժի կիրառմանը՝ հիմնական շեշտը դնելով օդային հարվածների վրա⁸: 1994թ., երբ Կոնգրեսի երկու պալատներում հանրապետականները մեծամասնություն ստացան, միջկուսակցական հակասությունները էլ ավելի սրվեցին՝ ըստ էության վերաճելով սկզբունքային տարաձայնությունների: Անհամաձայնության գլխավոր հայեցակետը հանգում էր նրան, որ դեմոկրատների հակվածությունը՝ համադրել ամերիկյան հզորությունը միջազգային ինստիտուցիոնալ ձևաչափերի շրջանակներում, ըստ հանրապետականների, հարվածի տակ էր դնում ԱՄՆ-ի ինքնիշխանությունը (Կիտտոյի արձանագրություն, Միջազգային դատարանի կարգավիճակը, Միջուկային փորձարկումների համընդհանուր արգելում):

⁶ P.Ф.Иванов, *Дуайт Эйзенхауэр*, М. "Мысль" 1983, стр. 203-214.

⁷ T.Daschle, *The Water's Edge*, *Foreign Policy*, N103 (Summer 1996), pp.4-6.

⁸ А.Уткин, *Американская стратегия для XXI-го века*, М., Логос 2000, стр. 259-266.

Այդուհանդերձ, «հավասարակշռված» արտաքին քաղաքականության միջկուսակցական փոխհամաձայնությանն առավել հզոր հարված հասցվեց Ջ.Բուշ Կրտսերի հանրապետական նախագահության շրջանում: Եթե Բ.Քլինթոնը ձգտում էր որոշակիորեն համահավասարեցնել արտաքին ռազմավարության երկու գործառույթային ուղղությունները՝ գործնականում, սակայն, շեշտադրելով բազմակողմանի ջանքերի կարևորությունը, ապա հանրապետական վարչակազմը, մասնավորապես 2001թ.-ից հետո, կտրուկ շրջադարձ կատարեց դեպի միակողմանի ուժային միջոցներ: Ուժի կիրառման և համագործակցության սկզբունքների միջև տարիների ընթացքում սերտված բանական հավասարակշռությունը, որի հենքում ընկած էր նաև ներքին համաձայնության նախադրյալը, նոր աշխարհաքաղաքական համատեքստում էապես վերաձևակերպվեց: Նեոպահպանողականների ազդեցության ժամանակավոր վերելքը ԱՄՆ-ի գործադիր իշխանության համակարգում ազդանշեց անցում դեպի որակապես նոր պատկերացումների և գաղափարախոսության համադրույթ⁹:

Ավելին, ի տարբերություն Ֆ.Ռուզվելտի և Ռ.Նիքսոնի ժամանակաշրջանի, 2000-ական թթ. արտաքինքաղաքական գործոնները ակտիվորեն օգտագործվեցին միջկուսակցական պայքարում: Այսպես, 2004թ. նախագահական ընտրություններում Ջ.Բուշն ուղղակիորեն օգտագործեց ահաբեկչության սպառնալիքը իբրև փաստարկ ընդդեմ մրցակցի՝ հայտարարելով, թե դեմոկրատների հաղթանակը երկիրը կհասցնի աղետի: Փոխնախագահ Ռ.Չեյնին գնաց էլ ավելի հեռու՝ ակնարկելով, որ սխալ ընտրության դեպքում ԱՄՆ-ին կսպառնա մեկ այլ հարված: 2006թ., կանխագգալով միջանկյալ ընտրություններում (Կոնգրես) դեմոկրատների հաղթանակի բարձր հավանականությունը, Ջ.Բուշը հաստատեց իր նախկին մտահղացումները առ այն, որ դեմոկրատների հաղթանակը կնշանակի՝ «ահաբեկիչները հաղթեցին, իսկ Ամերիկան տանուլ տվեց»¹⁰:

Այն, որ կուսակցական պատկանելությունը այսուհետ որոշիչ դեր է խաղալու արտաքինքաղաքական հարցերում այս կամ այն դիրքորոշում ընդունելու կապակցությամբ, ակնհայտորեն երևաց իրաքյան պատերազմի օրինակի վրա: 2006թ. (Կոնգրեսի երկու պալատներում տեղերի մեծամասնությունը անցել էր դեմոկրատներին) կոնգրեսական քվեարկության ժամանակ 201 հանրապետականներից միայն 17-ը միացան դեմոկրատներին Ներկայացուցիչների պալատում՝ ընդդիմանալու ամերիկյան զորքերի թվաքանակի մեծացմանն Իրաքում: Մինչդեռ դեմոկրատների (երկու պալատներում) 95%-ը գրեթե միահամուռ կողմ քվեարկեց ԱՄՆ-ի զորախումբը Իրաքից դուրս բերելու ժամանակացույցը հաստատելու օգտին¹¹:

⁹ Ավելի մանրամասն, տես՝ А.Уткин, Месть за победу - новая война, М., Алгоритм 2005, стр.500-520.

¹⁰ America's Angry Election, Economist, January 3, 2004, p.7.

¹¹ <http://www.voteview.com>

Բ. Օբամայի և Ջ.ՄակՔեյնի արտաքինքաղաքական կոմնորոշումներն ու մոտեցումները՝ Ռուսաստանի օրինակի վրա

Ընդհանուր առմամբ՝ 2008թ. նախագահական ընտրությունների մեկնարկը նույնպես աչքի ընկավ հանգուցային արտաքինքաղաքական հիմնահարցերի շուրջ թեկնածուների, որոշ իմաստով, բնեռային դիրքորոշումներով: Թեև սկզբնական շրջանում գլխավոր կուսակցական պարագլուխներն առանձնապես հակված չէին մանրամասնելու և գործնական քաղաքականության տերմիններով փաստարկելու իրենց մոտեցումները, այդուհանդերձ միջազգային թատերաբեմում ԱՄՆ-ի կողմից իրականացվելիք քաղաքականության հիմնական հայեցակետային շարժառիթները ուղղակիորեն բխում էին հանրապետական-դեմոկրատական տարաձայնությունների համադրույթից: Հասկանալի պատճառներով քաղաքական հակասությունների կիզակետում մենաշնորհային տեղ էր զբաղեցրել իրաքյան խնդիրը:

Փոխնախագահի դեմոկրատական թեկնածու Ջ.Բայդենը 2008թ. օգոստոսին Դենվերում կայացած հանդիպման ժամանակ նկատեց, որ «Բուշի վարչակազմը չկարողացավ պատշաճ ձևով արձագանքել այն կարևորագույն իրադարձություններին, որոնք որոշեցին 21-րդ դարի ընթացքը. Չինաստանի, Ռուսաստանի ու Հնդկաստանի մուտքը համաշխարհային քաղաքական թատերաբեմ, զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, էներգիայի բնական աղբյուրների ու խմելու ջրի պաշարների սակավացումը, կլիմայի փոփոխումը, ԱՖղանստանի ճգնաժամը, Ֆունդամենտալիզմի վերադարձը Պակիստան...Վերջերս մենք ականատես եղանք, թե ինչպիսի հետևանքներ ունեցավ Ռուսաստանի կողմից ազատ և ժողովրդավարական Վրաստանին նետված մարտահրավերի արհամարհանքը: Ես և Բարաքը վերջ կդնենք այդ արհամարհանքին: Մենք կստիպենք Ռուսաստանին պատասխան տալ իր գործողությունների համար և մենք կօգնենք Վրաստանի ժողովրդին վերականգնվելու»:

Այդուհանդերձ, Բ.Օբամայի արտաքինքաղաքական օրակարգում Ռուսաստանի հետ կապված մարտահրավերների «փաթեթը» ավելի շատ «գործառության» բնույթ է կրում: Քննադատաբար մոտենալով արդի ռուսաստանյան թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության ռազմավարական դրվագներին՝ դեմոկրատների՝ միջազգային օրակարգում Ռուսաստանի հետ փոխգործակցության ընդհանուր պարամետրերը «տարրալուծված» են ըստ գործառության ոլորտների, որտեղ «Միացյալ Նահանգները վճռական է իր նպատակին հասնելու հարցում»: Այլ խոսքերով, դեմոկրատական թեկնածուի թիմը, որի անդամները, հաջողության դեպքում, կզբաղեցնեն գործադիր իշխանության հանգուցային պաշտոնները, ակնհայտորեն հակված չէ ամերիկյան ռազմավարությունը ՌԴ-ի հանդեպ «ածանցել»՝ առավել ևս պայմանավորել համընդհանուր դարձած հակառուսական դիսկուրսով:

Այսպես, նույնիսկ Հարավային Օսիայում (2008թ. օգոստոս) տեղի ունեցած իրադարձությունների Ֆոնին, Բ.Օբամայի նախընտրական թիմի անդամ, արտաքին քաղաքական հարցերով գլխավոր խորհրդական Ս.Ռայսը հաստատեց, որ դեմոկրատ

թեկնածուն լիովին բացառում է «Մառը պատերազմի» վերադարձը. «Օբաման հասկանում է, որ աշխարհը, որում այսօր մենք ապրում ենք, այն նույն աշխարհը չէ, որ գոյություն ունեւ մեկ սերունդ առաջ: Եթե մենք շարունակենք հենվել 20-րդ դարի երկրորդ կեսի ռազմավարության վրա, ապա չենք կարողանա լուծել այն խնդիրները, որոնք ծառանում են մեր առջև 21-րդ դարում»¹²:

Թեև հակառուսաստանյան դիսկուրսը հարաբերականորեն կարելի է համարել գրեթե միակ խոշոր հիմնահարցը, որի շուրջ նկատելի են երկկուսակցական փոխհամաձայնության եզրեր ինչպես Կոնգրեսում, այնպես էլ նախագահական թեկնածուների միջավայրում, գործնական մոտեցումների մակարդակում տարբերություններն ակներև են: Նախևառաջ երկու թեկնածուների արտաքին քաղաքական օրակարգերը զանազանվում են գերակայությունների աստիճանակարգվածությամբ: Եթե Բ.Օբամայի համար ամերիկյան արտաքինքաղաքական «պրոբլեմային առաջնահերթությունները» գլխավորապես կենտրոնացած են որոշակի հիմնախնդիրների վրա, որոնք բխում են այս կամ այն երկրից կամ տարածաշրջանից, ապա հանրապետական թեկնածուի մոտեցումներն ուղղակի հասցեատերեր ունեն, որոնցից մեկն է, օրինակ, Ռուսաստանը:

Այս առումով, հաշվի առնելով Ռուսաստանի հետ անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով կապված «խնդրահարույց փաթեթի» ծավալները, Մոսկվայի հետ հարաբերությունները գերակա բնույթ կստանան հանրապետական վարչակազմի օրոք:

Այսպես, Ջ.ՄակՔեյնի «նորարարական» առաջնահերթությունների շարքում է այսպես կոչված «Ժողովրդավարությունների լիգայի» ստեղծումը, որտեղ Ռուսաստանին ամենևին էլ տեղ չի վերապահվի: Ավելին, նոր հանրապետական վարչակազմի ընտրման դեպքում հնարավոր կոշտ քայլերի շարքում չի բացառվում նաև ամերիկյան կողմի կտրուկ ակտիվացումը՝ ՄԱԿ-ի ԱԽ-ում ռուսաստանյան վետոյի իրավունքից «ձերբազատվելու» ուղղությամբ, վերջինիս վտարումը «Մեծ ութնյակից» և այլն¹³:

Ճիշտ է, լավ ըմբռնելով ներկա վարչակազմի հեղինակության անկման փաստը, վերջինի կողմից որդեգրված կարծի կողմնորոշումների անհեռանկարությունը, ինչպես նաև՝ ռուս-ամերիկյան հակասությունների շուրջ բարդացող ու ոչ միանշանակ միջազգային համատեքստը՝ որոշակի ճշգրտումներ մտցվեցին նաև հանրապետականների մոտեցումներում: Այսպես, սեպտեմբերի սկզբին Ջ.ՄակՔեյնը, վերադառնալով Մոսկվայի հասցեին ուղղված քննադատությանը, որը «ձեռք է քաշել դեմոկրատական կատարելատիպերից և պարտականություններից, որոնք բխում են իշխանությունից, ներխուժեց փոքր անկախ հարևան պետություն, որպեսզի սաստկացնի իր վերահսկողությունը նավթի համաշխարհային պաշարների նկատմամբ», այնուամենայնիվ խոստացավ, թե իր ընտրության դեպքում «սառը պատերազմը չի

¹² Иван Баранов, Обама и Байден о России, свободе и лучших временах, *Интерфакс*, 29.08.2008.

¹³ В.Скосырев, Месть Маккейна, *Независимая газета*, 29.07.2008.

վերադառնա», իսկ Ռուսաստանի հետ հնարավոր է նույնիսկ լավ հարաբերությունների հաստատում¹⁴:

Սակայն օրախնդիր հիմնահարցերի լուծման սխեմաները, ի տարբերություն նախընտրական ճարտասանության, դժվար թե գործնականում արագ փոփոխման ենթարկվեն: Օրինակ, թե՛ դեմոկրատների, թե՛ հանրապետականների գերկարևոր խնդիրներից մեկն է շարունակում մնալ միջուկային անվտանգության ապահովման հարցը, որը անհնարին է լուծել առանց ՌԴ-ի մասնակցության: Դատելով կուսակցական էլիտաների ներկայացուցիչների առանձին հայտարարություններից և մեկնաբանություններից՝ ռուս-ամերիկյան միջուկային փոխգործակցության *modus operandi*-ն կարող է նկատելիորեն տարբերվել:

Այսպես, հիշյալ խնդրի շուրջ հանրապետականների մոտեցումները ակնհայտորեն շարունակում են պահպանել սառը պատերազմյան կարծրատիպերի տրամաբանությունը, որոնք թեև հենվում են էմպիրիկ փորձի վրա, սակայն արդի իրավիճակում անիրականանալի են թվում: Ջ.ՄակՔեյնը սկզբունքորեն կողմ է արտահայտվում միջուկային վերահսկման և չտարածման ռեժիմի հարատևության, ինչպես նաև բազմակողմանի ջանքերի գործադրման անհրաժեշտության օգտին: Ի տարբերություն Ջ.Բուշի վարչակազմի, որը միջուկային բնագավառում գործողության ընդունեց միակողմանի լուծումների մոդելը, հանրապետական թեկնածուն հայտարարեց «իրավական շրջանակներում հավասարակշռության պահպանման անհրաժեշտության» մասին, ինչը պահանջում է վերադարձ բազմակողմանի ձևաչափերին («ԱՄՆ-ը՝ իր ներկայիս գորեղությամբ հանդերձ, չի կարող կանգնեցնել միջուկային տարածումը միակողմանի գործունեությամբ...»):

Դրա հետ մեկտեղ, ելնելով այլ կարգի արժեքային սկզբունքներից, որոնց շուրջ Ռուսաստանի հետ «առևտուր» անելը տեղին չէ, Ջ.ՄակՔեյնը շարունակում է պնդել ՌԴ-ին «ժողովրդավարական հանրության» շարքերից դուրս հանելու պարտադիր լինելու գաղափարի վրա՝ ակնարկելով նաև ՄԱԿ-ի ԱԽ-ում Մոսկվայի վետոյի իրավունքից ինչ-որ կերպ փաստացիորեն ձերբազատվելու կարևորությունը և այլն¹⁵: Այլ խոսքերով, ձգտելով շահել քաղաքական կենտրոնի համակրանքը և փորձելով հանդես գալ պրագմատիկ դիրքերից, հանրապետական թեկնածուն իրականում ելնում է հին սառը պատերազմյան մոդելի վերակենդանացման հնարավորությունից. երկկողմանի հարաբերությունների ռազմավարական համադրույթից դուրս բերել հետաքրքրություն ներկայացնող առանձին ասպեկտներ և փոխշահավետ համաձայնության գալ մրցակցի կամ գործընկերոջ հետ: Պատմական հեռանկարում՝ 1960-80-ական թթ. ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը իրոք առարկայապես փոխգործակցում էին սպառազինությունների (միջուկային և սովորական) վերահսկման գործում՝ անկախ աշխարհաքաղաքական և գաղափարական մրցակցության ինտենսիվության աստիճանից:

¹⁴ Дж.Маккейн. Лидеры РФ отреклись от демократических идеалов, РБК, 5.09.2008

¹⁵ Безъядерные мечты Маккейна, Ф.Лукьянов, www.globalaffairs.ru, 29.05.2008.

Ի տարբերություն հանրապետական թեկնածուի՝ Բ.Օբամայի թիմի կեցվածքը նվազ «օրթոդոքսալ» է. «Թեև մենք չպետք է խուսափենք Ռուսաստանում էլ ավելի մեծ չափով ժողովրդավարության և պատասխանատվության առաջխաղացումից, անհրաժեշտ է այդ երկրի հետ համատեղ աշխատել այն ոլորտներում, որտեղ ընդհանուր շահեր են առկա՝ նախևառաջ ապահովելու միջուկային զենքի և միջուկային նյութերի ապահովությունը: Մենք նույնպես պետք է աշխատենք Ռուսաստանի հետ, որպեսզի նվազեցնենք և վերափոխենք հնացած սառըպատերազմյան կարծրատիպերը այս բնագավառում, հեռանանք միջուկային զենքի շեշտադրումից: Ամերիկյան չպետք է շտապի նոր սերնդի միջուկային մարտագլխիկների արտադրության հարցում: Եվ մենք պետք է օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիական կարողությունները՝ կառուցելու երկկուսակցական փոխհամաձայնություն՝ Միջուկային փորձարկումների համընդհանուր արգելման մասին համաձայնագիրը վավերացնելու համար: Այս ամենին հնրավոր է հասնել՝ միաժամանակ պահպանելով վստահելի միջուկային զսպումը»¹⁶:

Մոսկվայի հանդեպ նվազ «մարտնչող» դիրք ընդունելու մասին է փաստում նաև (թեև անուղղակի ձևով) Բ.Օբամայի մտադրությունը հասնելու նրան, որ ՆԱՏՕ-ի դաշնակիցները «ավելի շատ ներդրում ունենան Դաշինքի զինված ուժերում և համատեղ անվտանգության գործողություններում», մինչդեռ Ջ.ՄակՔեյնը հակված է մեծացնելու ԱՄՆ-ի զինված ուժերը ներկայիս 750 հազ.-ից մինչև 900 հազ.: Ավելին, ըստ հանրապետական թեկնածուի՝ կստեղծվի առանձին բանակային մի ստորաբաժանում (20 հազ.), որի նպատակը կդառնա «աջակցություն ցուցաբերել արտասահմանում գտնվող կանոնավոր բանակային միավորներին»¹⁷:

Ճիշտ է, Բ.Օբաման ևս նախատեսում է ավելացնել ցամաքային ուժերը 65 հազ. զինձառայողով, սակայն՝ ընդունելով պաշտպանական բավարարության ճկուն համակարգ:

Եթե դեմոկրատական թիմը անդրատլանտյան համագործակցության աշխուժացումն ու արդիականացումը կապում է զուտ ներքին ինստիտուցիոնալ վերաբաշխումների սխեմաների իրականացման հետ, ապա Ջ.ՄակՔեյնի շուրջ համախմբված իսթեբլիշմենտի ներկայացուցիչները միտված են արտաքին մրցակիցների հետ որոշակի «հակա-հավասարակշիռների» միջոցով խթանել դաշնակցային հարաբերությունները Եվրոպայի հետ: Ընդ որում, նման արտաքին հակազդեցության կենտրոնի դերակատարությունը, ըստ Ջ.ՄակՔեյնի, վերապահվում է Ռուսաստանին, որը «պետք է դուրս հանվի Մեծ ութնյակից»¹⁸:

Ակնհայտ է, որ անկախ նրանից, թե որ կուսակցության թեկնածուն կհաղթի նոյեմբերյան ընտրություններում, իրական քաղաքականության ուրվագծերը կորոշվեն «տասնամյակների ընթացքում հղկված բնականորեն ինստիտուցիոնալիզացված

¹⁶ B.Obama, Renewing American Leadership, Foreign Affairs, July/Aug. 2007.

¹⁷ J.McCain, An Enduring Peace Built on Freedom, Foreign Affairs, Nov./Dec. 2007.

¹⁸ Նույն տեղում:

արտաքին քաղաքականության գործընթացի» շրջանակներում, որտեղ նախագահի կողմից կտրուկ շրջադարձային փոփոխության հավանականությունը ցածր է նույնիսկ միջկուսակցական առարկայական տարաձայնությունների համատեքստում¹⁹: Այդ իրողության ընկալման մասին են փաստում նաև թեկնածուների մոտեցումները իրաքյան պատերազմին առնչվող խնդիրների պարագայում. չնայած նրանց դիրքորոշումների պատճառականության և հիմնավորման ձևերի տարբերություններին՝ երկուստեք ընդունվում է, որ ամերիկյան գորքերը վաղ թե ուշ պետք է դուրս բերվեն այդ երկրից (ժամկետների շուրջ տարաձայնությունները պահպանվում են):

Մյուս կողմից, ամերիկյան քաղաքական վերնախավում գնալով խորանում է այն համոզմունքը, որ ԱՄՆ-ի ռուսաստանյան քաղաքականության արդյունքները (թե՛ Բ.Բլինթոնի, և թե՛ Ջ.Բուշի վարչակազմերի օրոք) բավականաչափ «անորոշ» ժառանգություն են թողնելու ամերիկյան նոր նախագահին: Դեռևս մինչ ռուս-վրացական վերջին ճգնաժամը և ՌԴ-Արևմուտք քաղաքական հակասությունների բյուրեղացումը՝ ամերիկյան «ռեալիստները» մատնանշում էին մի քանի պարզ իրողություններ, որոնք երկարաժամկետ-կառուցվածքային ներազդեցություն կունենան ՌԴ-ի նկատմամբ ամերիկյան ուղեգծի վերանայման վրա. նախ՝ Ռուսաստանի ինտեգրումը եվրոատլանտյան ինստիտուտներին քիչ հավանական գնահատվեց, երկրորդը՝ Վ.Պուտինի և նրա կողմից ընտրված ներքին ու արտաքին քաղաքականության (ներքուսսաստանյան) աջակցությունը լայնածավալ բնույթ է կրում, ինչը դժվար թե հաջողվի հեշտությամբ սասանել արտաքին լծակների օգտագործմամբ, երրորդը՝ Միացյալ Նահանգների կողմից Մոսկվայի վրա բանեցվող ճնշման միջոցները սակավ են, չորրորդը՝ մի շարք հանգուցային բնագավառներում շահերի համընկման դաշտն այդուհանդերձ թույլ չի տալիս պնդելու, որ երկու երկրների միջև իրական «սելեկտիվ համագործակցության» հիմքեր են առկա²⁰:

Այս համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրարամերժ համագործակցություն-հակազդեցություն ռուս-ամերիկյան ապագա հարաբերությունների սխեման չի բացառում որակապես նոր նախաձեռնությունների և ոչ ստանդարտ քայլերի հավանականությունը, ամերիկյան քաղաքական դասը, ըստ ամենայնի, Ռուսաստանի նկատմամբ իր ռազմավարությունը մշակելիս կհայտնվի երկու ընդհանրական բնույթ կրող մոդելների ընտրության առջև:

Դրանցից առաջինը ենթադրում է հարաբերականորեն կարծր, բայց տարիների ընթացքում փորձարկված հարաբերությունների «ձևաչափ»: Փոխհարաբերությունների քաղաքական չափումն այդ տարբերակում կկրի մրցակցային (նույնիսկ հակամարտող) բովանդակություն, սակայն համագործակցությունը օրախնդիր հիմնահարցերի շուրջ կարող է ստանալ առարկայական և գործնական բնույթ: Նման կարգի

¹⁹ G.Friedman, Foreign Policy and the President's Irrelevance, Stratfor, 5.02.2008.

²⁰ N.Gvosdev, Parting with Illusions: Developing a Realistic Approach to Relations with Russia, Policy Analysis, 28.02.2008.

«քաղաքականացված» համադրույթի օրինակ կարող է ծառայել 2008թ. հունիսին Ռուսաստանում ԱՄՆ-ի նոր դեսպանի թեկնածու Ջ.Բեյրլիի ելույթը ամերիկյան Սենատում, որտեղ վերջինս հանդես եկավ Մոսկվայի հասցեին ուղղված արդեն հերթապահ դարձած քննադատությամբ: Սակայն դեսպանի ելույթն ուշագրավ էր Ռուսաստանի և Խորհրդային Միության միջև մշտական համեմատությունների և զուգահեռների անցկացմամբ՝ կարծես ամերիկյան կողմի համար խոսքը գնում է հստակ շարունակականության մասին: Ինչպես նկատեց դեսպանը, թեև վերջին 20 տարիների ընթացքում էական փոփոխություններ են տեղի ունեցել աշխարհում, սակայն երկկողմանի հարաբերություններում «բոլոր կարևոր տարրերը մնում են նույնը»²¹: Այս կարգի նկատառումները գերակա են հանրապետականների շրջանում, որոնք, այդուհանդերձ, չեն հրաժարվի «սելեկտիվ համագործակցության» գաղափարից՝ փորձելով խաղարկել մտրակի և բլիթի մարտավարությունը Մոսկվայի հետ հարաբերություններում:

«Ավանդական» այդ տարբերակին կարող են հակադարձվել դեմոկրատական կուսակցության պլատֆորմին («Change») ձայնակցող համեմատաբար ավելի ստեղծագործական մոտեցումները: Հայեցակարգային առումով ռուս-ամերիկյան հարաբերություններին նոր ազդակներ և նոր մեկնարկ հաղորդելու միտումն անշուշտ շատ ավելի մեծ աշխատանք կպահանջի: Այդուհանդերձ, Բ.Օբամայի կողմից սատարվող կառուցվածքային փոփոխությունների իրականացումը տնտեսական և սոցիալական ոլորտներում կարող է նոր տարրեր և փոփոխականներ ներմուծել ինչպես ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ, այնպես էլ երկու երկրների հարաբերություններում: Միայն արտաքին տնտեսական քաղաքականության մեջ շեշտադրումների տեղաշարժը նավթարդյունաբերական համալիրից հոգուտ դեմոկրատների կողմից ավանդաբար հովհանավորվող բարձր տեխնոլոգիաների և արդիական արդյունաբերության սեկտորներ կարող է էապես արդրադառնալ երկկողմ օրակարգի վրա՝ զգալիորեն մեղմելով այն կոշտ մրցակցային սխեմաները, որոնք արմատացել են ՌԴ-ԱՄՆ փոխհարաբերություններում եվրասիական գործընթացները ուղղորդելու պայքարում: Հավանաբար դեմոկրատական վարչակազմը կձգտի առանձնացնել Ռուսաստանի հետ իրական համագործակցության չափումներ (ի տարբերություն հանրապետականների, որոնք հակված են դուրս բերել համագործակցության առանձին, «տեխնիկական» բնույթ կրող հատվածներ), որոնք որոշակիորեն կկրեն համապարփակ բնույթ՝ ուժեղացնելով ռուս-ամերիկյան փոխգործակցության ինստիտուցիոնալ դաշտը:

²¹ А. Терехов, Посол по глубоким разногласиям, Независимая газета, 23.06.2008.

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ.Քոչարյան

ԱՄՆ-ի նախագահական թե՛ հանրապետական, թե՛ դեմոկրատ թեկնածուների ելույթների վերլուծությունը հնարավորություն է տալիս տեսնել յուրաքանչյուրի մոտեցումը արդի հիմնահարցերի շուրջ:

Այս համատեքստում առանձին հետաքրքրություն են ներկայացնում դեմոկրատական կուսակցության թեկնածու Բարաք Օբամայի մոտեցումները և վերլուծությունները ձգձգված հակամարտությունների և համաշխարհային նշանակության խնդիրների վերաբերյալ, քանի որ նրա ընտրվելու պարագայում կարող է էական փոփոխության ենթարկվել Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը: Նույնը չի կարելի ասել, եթե նախագահական աթոռը իրենց ձեռքում պահեն հանրապետականները:

Այս հոդվածը նվիրված է ԱՄՆ-ի նախագահական թեկնածուների ելույթների և գործողությունների վերլուծությանը, որոնք առնչվում են մերձավորարևելյան հիմնահարցերին՝ իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը, սիրիա-իսրայելական հարաբերություններին և Իսրայելին՝ որպես տարածաշրջանում ԱՄՆ-ի սկզբունքային գործընկերոջ²²:

Ավելի լավ պատկերացնելու համար Օբամայի դիրքորոշումներն այս խնդիրների շուրջ տեսնենք, թե ովքեր են դեմոկրատների թիմի մերձավորարևելյան քաղաքականության խորհրդատուները:

Բ. Օբամայի խորհրդականները՝ մերձավորարևելյան քաղաքականության հարցերով

Իսրայելական մամուլը պարբերաբար ուշադրության կենտրոնում է պահում ԱՄՆ-ի նախագահական ընտրությունները և վերլուծություններ ներկայացնում թեկնածուների ելույթների և գործունեության վերաբերյալ:

Այսպես, հրեական մամուլում հայտնվեցին հրապարակումներ, որոնք վերաբերում էին Օբամայի անմիջական շրջապատին²³, Մերձավոր Արևելքի հիմնահարցերով զբաղվող ներկա և նախկին խորհրդականներին: Պետք է նշել, որ Օբամայի խորհրդականների շուրջ ստեղծվել է խառնաշփոթ, քանի որ մամուլում շրջանառվում են մեկ տասնյակի հասնող անուններ, և պարզ չեն նրանց պատասխանատվության շրջանակները:

²² Գիտակցաբար անդրադարձ չի կատարվում իրաքյան և իրանյան հիմնախնդիրներին:

²³ Մինչև վերջին շրջանը Օբամաների ընտանիքի հոգևոր հովիվը եղել է Ջերեմյա Ռայթը Սուրբ երրորդության Քրիստոսի միավորված եկեղեցուց (The Trinity United Church of Christ), որը հայտնի է հակահրեական գործիչների հետ իր մոտ կապերով, ինչպես նաև 9/11-ի դեպքերի մեջ մեղադրել է Իսրայելին:

Բ. Օբամայի նախկին խորհրդականների թվում են եղել միլիարդատեր Ջորջ Սորոսի հետ առնչություններ ունեցող Ռոբերտ Մալեյը և Սամանթա Փաուերը: Վերջինը հայտնի էր ԱՄՆ-ի կառավարությանն ուղղված իր կոչերով՝ պաշտպանել պաղեստինցիներին Իսրայելի կողմից իրականացվող «ցեղասպանությունից»:

Օբամայի նախընտրական շտաբի համանախագահ Թոնի ՄակՓիկը բազմիցս հայտարարել է, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը գտնվում է Մայամիի և Նյու Յորքի ազդեցության տակ՝ նկատի ունենալով հրեական ազդեցիկ լոբբիստական խմբերը²⁴:

Ժամանակ առ ժամանակ Բ. Օբամային խորհրդակցական ծառայություններ է մատուցում նաև Զբիգնև Բժեզինսկին՝ Ջիմմի Բարթերի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդականը:

Օբաման մերձավորարևելյան քաղաքականության հարցերով հիմնական իր խորհրդական է նշանակել Իսրայելում ԱՄՆ-ի նախկին դեսպան Դանիել Կուրցերին (Daniel Kurtzer): Հայտնի է, որ Կուրցերը կողմնակից է եղել Իսրայելի հանդեպ ճնշումների գործադրմանը, որպեսզի վերջինը իսրայելական հասարակությանը նախապատրաստի մերձավորարևելյան հիմնահարցի վերաբերյալ հետագա հավանական զիջումներին²⁵:

Ըստ Կուրցերի՝ իսրայելա-պաղեստինյան հակամարտության լուծումն առանց Երուսաղեմի հարցը բանակցությունների օրակարգ մտցնելու իրատեսական չէ: «Անհնար է բանակցությունների արդյունքում լուրջ առաջընթաց արձանագրել՝ չքննարկելով Երուսաղեմի հարցը», - այս հայտարարությունը Դ. Կուրցերն արել է Ժողովրդի քաղաքականության մշակման հրեական ինստիտուտի (JPPPI) կողմից կազմակերպած գիտաժողովի ժամանակ²⁶:

Հրեական մամուլի բարձրացրած աղմուկից տպավորություն է ստեղծվում, որ Օբամայի խորհրդականը կողմ է արտահայտվել Երուսաղեմի բաժանմանը: Իրականում նա խոսել է միայն Երուսաղեմի հարցը օրակարգ մտցնելու մասին, այլ ոչ թե՝ կարգավիճակի:

Կուրցերը նաև քննադատորեն է արտահայտվել նախկին նախագահներ Բ. Քլինթոնի և Ջ. Բուշ ավագի հանդեպ՝ մեղադրելով նրանց Իսրայելի նկատմամբ ոչ բավարար խստություն ցուցաբերելու մեջ, իսկ Բ. Քլինթոնի կողմից նշանակված մերձավորարևելյան բանագնաց Դենիս Ռոսին՝ բացահայտ հրեամետության մեջ:

Իսրայելի և Մերձավոր Արևելքի հարցերով Բ. Օբամայի խորհրդատուներն են նաև Թոնի Լեյքը, Դեն Շապիրոն, հրեա միջնորդ Էրիկ Լիննը և Դենիս ՄաքԴոնուհը

²⁴ Jun 17, 2008 21:09 | Candidly Speaking: The Barack Obama enigma and the Jews By ISI LEIBLER, jpost

²⁵ <http://web.israelinsider.com/Views/12927.htm>, (June 18, 2008) Dennis Ross, Daniel Kurtzer slam Bush's Mideast policy, By Anshel Pfeffer, 14/05/2008,

²⁶ Obama advisor: Jerusalem must be included in peace talks, By Anshel Pfeffer, Haaretz , 13/05/2008

(Denis McDonough), որը նաև քարոզարշավի արտաքին քաղաքականության ընդհանուր համակարգողն է:

Ավելացնենք, որ Օբամայի թիմում են Իսրայելի այնպիսի ջատագույններ, ինչպիսիք են «Նոր հանրապետություն» (The New Republic) պարբերականի խմբագիր Մարտի Պերեցը և Ամերիկա-իսրայելական հանրային գործերով կոմիտեի (AIPAC) գանձապահ Լիի Ռոզենբերգը:

Դիրքորոշումներն Իսրայելի հանդեպ

AIPAC-ի գիտաժողովի ելույթի ժամանակ Բ. Օբաման նշեց, որ նախագահ ընտրվելու պարագայում նա ձեռնամուխ կլինի Իսրայելի և ԱՄՆ-ի միջև փոխըմբռնման հուշագրի կնքմանը, որով Իսրայելին՝ որպես օգնություն, հաջորդ տասնամյակների ընթացքում կտրամադրվի 30 մլրդ ԱՄՆ դոլար, որը ներդրվելու է Իսրայելի անվտանգության համակարգի մեջ՝ առանց այլ պետությունների հետ պայմանավորվածությունների: Ռազմական համագործակցության բնագավառում Բ. Օբաման խոստացավ ընդլայնել հակահրթիռային պաշտպանության ծրագրերը, ինչպես նաև առաջարկեց Իսրայելին ռազմական սարքավորումներ տրամադրել այն նախապայմաններով, որոնցով դրանք տրվում են ՆԱՏՕ-ի գործընկերներին: Եվ, ի վերջո, Օբաման խոստացավ պաշտպանել «Իսրայելի ինքնապաշտպանվելու իրավունքը» ՄԱԿ-ում և ամբողջ աշխարհում²⁷:

Իսրայելի հետ համագործակցությունը Բ. Օբաման չի սահմանափակում միայն ռազմական ոլորտով: Ըստ Օբամայի՝ անհրաժեշտ է ընդլայնել համատեղ հետազոտական ծրագրերը էներգիայի այլընտրանքային աղբյուրների հայտնաբերման և մշակման գործում:

Բ. Օբաման, խիստ գնահատականներ և զգացմունքային արտահայտություններ թույլ տալով Հյուսիսային Կորեայի և Իրանի միջուկային ծրագրերի շուրջ, շարունակում է. «Իմ նախագահության պարագայում այն պետությունները, որոնք չեն ստորագրի Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը, ինքնաբերաբար պետք է ենթարկվեն միջազգային խիստ պատժամիջոցների»²⁸:

Ելույթը հետաքրքիր է նաև այն տեսանկյունից, որ ԱՄՆ-ի անկյունաքարային և հիմնական դաշնակիցներից մեկը Մերձավոր Արևելքում՝ Իսրայելը, վերը նշված պայմանագրի անդամ չէ:

Պետք չէ գերագնահատել կամ թերագնահատել ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքականության վրա հրեական լոբբիի ազդեցությունը, սակայն այս հանգամանքների հետ անխուսափելիորեն հաշվի են նստում Բ. Օբամայի թիմակիցները:

²⁷ Obama's Speech at the AIPAC Conference , Published June 4, 2008

²⁸ Տես Բ. Օբամայի 2007 թ. հոկտեմբերի 3-ի ելույթը Չիկագոյի Դեփոուլ (DePaul) համալսարանում:

Մի կողմից Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը չստորագրած պետությունների հանդեպ պատժամիջոցների խստացման մասին հայտարարություններն այդ երկրների շարքում Իսրայելի դե ֆակտո ներկայության դեպքում կարելի է համարել Օբամայի թիմի բացթողումը, քանի որ այս հանգամանքը պատեհ առիթով կարող է համապատասխան ուժերի ձեռքում դառնալ խաղաքարտ, իսկ մյուս կողմից՝ դժվար է և, գրեթե անհնար, մոտ ապագայում պատժամիջոցների կիրառումը Իսրայելի հանդեպ:

Բ.Օբամայի շտաբի տարածած տեղեկատվության համաձայն՝ Ամերիկա-իսրայելական հանրային գործերով կոմիտեի առջև ներկայացված էլույթը պատրաստվել էր արդեն հիշատակված Դանիել Կուրցերի և Դեննիս Ռոսսի, ինչպես նաև Բ. Քլինթոնի վարչակազմում ազգային անվտանգության խորհրդականի տեղակալի պաշտոնը զբաղեցրած Ջեյմս Շտեյնբերգի կողմից:

Էլույթի կապակցությամբ հրեական *Հասրեց* պարբերականի Միացյալ Նահանգների թղթակից Շմուել Ռոզները հրապարակեց, որ Օբաման 7500 հրեական ազդեցիկ կազմակերպությունների պատվիրակներին ներկայացավ «ուժեղ, ինչպես Քլինթոնը, աջակցող, ինչպես Բուշը և ընկերական, ինչպես Ջուլիանին»²⁹:

Ընդհանրապես թեկնածուների էլույթների վերլուծությունը հնարավորություն է տալիս նկատել, որ արտաքին քաղաքականության ոլորտում երկու թեկնածուներն էլ գրեթե չեն տարանջատում Իսրայելի և ԱՄՆ-ի շահերը:

Իսրայելա-պաղեստինյան հիմնահարց

Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման վերաբերյալ հանրապետական և դեմոկրատական թեկնածուների դիրքորոշումները գրեթե չեն տարբերվում: Նրանք երկուսն էլ էլքային են ընդունում լուծման «երկու պետություն» սկզբունքը, այսինքն՝ երկու անկախ, ինքնավար և միմյանց անվտանգությանը չսպառնացող Պաղեստինի և Իսրայելի պետությունների գոյակցությունը:

Ջ. Բուշին գրված հայտնի նամակում³⁰ Օբաման շարադրել էր նաև իսրայելա-պաղեստինյան հակամարտության³¹ լուծման տակտիկական մի քանի դրույթներ: Մասնավորապես, նա նշել է, որ լուծման համար անհրաժեշտ է ավելի մեծ թվով արաբական երկրներ ներգրավել գործընթացին, ինչը, ըստ նրա, կարող է արտահայտվել երկու ճանապարհով. առաջինը՝ լայնածավալ ֆինանսական աջակցություն ցուցաբերել Պաղեստինի Ինքնավարությանը՝ հնարավորություն

²⁹Տե՛ս Rosner's Blog, Shmuel Rosner Haaretz Chief U.S. Correspondent, www.haaretz.com/rosner

³⁰ Տե՛ս Obama's letter to Bush June 24, 2008,

<http://www.aipac.org/Publications/SourceMaterialsCongressionalAction/ObamaLetter062408.pdf>

³¹ Հայտնի է նաև, որ Օբաման երկար ժամանակ ջերմ հարաբերություններ է ունեցել Պաղեստինի ազատագրման կազմակերպության (ՊԱԿ) ակտիվիստ, գիտնական և Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ռաշիդ Խալիդի և նրա ընտանիքի հետ: Վերջինս Կոնգրես ընտրվելու կապակցությամբ զբաղվել է Օբամայի համար ֆոնդերի հայթայթմամբ:

ստեղծելով բարելավել պաղեստինյան ժողովրդի ապրուստի պայմանները: «Սաուդյան Արաբիան և, մասնավորապես, Օոցի նավթարդյունաբերող այլ երկրները բավականաչափ միջոցներ ունեն նշանակալի ներդրում կատարելու իսրայելա-պաղեստինյան խաղաղության գործում ... և մենք պետք է քաջալերենք նրանց նման որոշումներ կայացնելու համար», - գրել էր Օբաման³²:

Արաբական երկրների օգնության երկրորդ տարբերակը կարող է լինել աջակցությունը պաղեստինցիներին և իրենց սեփական ժողովուրդներին՝ նախապատրաստելով նրանց խաղաղության և Իսրայելի հետ հարաբերությունների բարելավմանը:

Ադրադառնալով պաղեստինյան տարածքներում տիրող փաստացի երկիշխանությանը՝ Բ. Օբաման նշել է, որ օրինական է ճանաչում միայն Սահմուդ Աբբասի իշխանությունը: Բ. Օբաման իր անհամաձայնությունը հայտնեց նախկին նախագահ Ջիմմի Բարթերի մերձավորարևելյան նախաձեռնությունների վերաբերյալ, երբ վերջինը այցելեց Գազայի հատված, բանակցություններ վարեց Համասի առաջնորդների հետ և քննադատեց Իսրայելին՝ անվանելով այն ապարտեիդի երկիր:

Բ. Օբաման կոչ արեց հակամարտող կողմերին հավատարիմ մնալ Անապոլիսյան համաձայնության սկզբունքներին՝ հեշտացնել պաղեստինցիների ազատ տեղաշարժը, բարելավել տնտեսական իրավիճակը Արևմտյան ափում և դադարեցնել նոր բնակավայրերի կառուցումը:

Իսրայելա-պաղեստինյան հակամարտության համատեքստում Օբամայի կողմից առանձին ուշադրության են արժանացել Համասը և վերջերս Մեքքայում ձեռքբերված Ֆաթհ-Համաս համաձայնությունը³³:

Օբաման վերահաստատել է Համասին առաջարկվող երեք կետերը՝ ճանաչել Իսրայելի գոյության իրավունքը, հրաժարվել բռնություններից, ընդունել նախկինում Իսրայելի և Պաղեստինյան Ինքնավարության միջև ձեռքբերված համաձայնությունները, և մտահոգություն հայտնել արդեն հիշատակված Մեքքայի համաձայնության վերաբերյալ, քանի որ այն խախտում է վերոնշյալ սկզբունքները և միայն երկիմաստ խոստմամբ «հարգում» նախկին համաձայնությունները, ինչի արդյունքում Համասին շնորհվում է լեգիտիմություն:

Իսրայելա-պաղեստինյան հակամարտության անկյունաքարերից է նաև Երուսաղեմի կարգավիճակի հարցը: Ինչպես նշվեց, Օբամայի թիմակիցները տարբեր առիթներով հայտարարել են, որ առանց Երուսաղեմի կարգավիճակի քննարկման անհնար է տարածաշրջանում խաղաղության հասնել:

³² St' u Obama's letter to Bush June 24, 2008,

<http://www.aipac.org/Publications/SourceMaterialsCongressionalAction/ObamaLetter062408.pdf>

³³ 2007 թ. փետրվարի 6-8 Մեքքայում Սաուդական իշխանության նախաձեռնությամբ հանդիպում կազմակերպվեց պաղեստինյան Համաս և Ֆաթհ խմբավորումների պատվիրակությունների միջև, որի ընթացքում ձեռքբերվեց համաձայնություն ազգային համերաշխության կառավարություն կազմելու վերաբերյալ:

Մակայն այս հռետորությունը բնորոշ էր նախընտրական արշավի սկզբին: AIPAC-ի գիտաժողովի ժամանակ Օբաման հայտարարեց, որ Երուսաղեմը շարունակելու է մնալ Իսրայելի անբաժան մայրաքաղաքը, ինչը, բնականաբար, անմիջապես իր բացասական արձագանքը գտավ արաբական միջավայրում, որին ի պատասխան՝ Օբամայի շտաբի խոսնակը ստիպված էր պարզաբանումներ տալ՝ վերաձևակերպելով Օբամայի ասածը, որ «Երուսաղեմի ապագան որոշելու են ներգրավված երկու կողմերը»³⁴:

Նշենք նաև, որ Օբաման, ինչպես նաև մյուս նախագահական թեկնածուները, հանդիսանալով 2006թ. «Պաղեստինյան հակաահաբեկչական գործողության»³⁵ համահովանավոր՝ կոչ է արել Պաղեստինի ղեկավարությանը ճանաչել Իսրայելը, դադարեցնել բռնությունները և ավելի լուրջ վերաբերել տարածաշրջանում անվտանգությանն ու խաղաղությանն ուղղված բանակցություններին:

Իսրայելա-սիրիական խաղաղության գործընթաց

Իր ելույթների ժամանակ Բ. Օբաման դրական է խոսել ութամյա ընդմիջումից հետո վերսկսված իսրայելա-սիրիական խաղաղության բանակցային գործընթացի մասին: Բանակցությունների առանցքն է 1967թ. Իսրայելի կողմից օկուպացված Գոլանի բարձունքների վերադարձի հարցը: Օբաման մեղադրանքներ է ներկայացրել ներկա վարչակազմին՝ այս գործընթացին ոչ պատշաճ աջակցություն ցուցաբերելու համար: Այս առիթով Օբաման նաև նամակ է հղել Ջ. Բուշին, որում ներկայացրել է իր դիրքորոշումը Իսրայելի և Սիրիայի միջև խաղաղության հաստատման թուրքական նախաձեռնության վերաբերյալ: Մասնավորապես նշել է. «Մա քաջալերող նորություն է և Միացյալ Նահանգների համար երկու կողմերին ձեռք մեկնելու խթան պետք է հանդիսանա, որպեսզի վերջինները բանակցային ճանապարհով կարողանան իրենց նպատակներին հասնել»³⁶:

Ֆրանսիական *Պարի Մատչ* պարբերականին տված հարցազրույցում Բ. Օբաման նշել է, որ իր նախագահության դեպքում ուղիղ բանակցություններ է սկսելու Սիրիայի և Իրանի հետ, քանի որ «տարածաշրջանում կայունությունը ապահովելու համար քննարկումներին պետք է ներգրավված լինեն ոչ միայն ԱՄՆ-ի բարեկամները, այլ նաև նրա թշնամիները»³⁷: Դեպքերի նման զարգացման պարագայում Սիրիան ստիպված է լինելու անցնել լուրջ դիվանագիտական փորձության միջով, քանի որ Սիրիա-ԱՄՆ

³⁴ Candidly Speaking: The Barack Obama enigma and the Jews By ISI LEIBLER, Jerusalem Post Jun 17, 2008

³⁵ «Պաղեստինյան հակաահաբեկչական գործողությունը» (Palestinian Anti-Terrorism Act of 2006) ստորագրվել է 2006թ. դեկտեմբերի 21-ին, որի նպատակն է խթանել և զարգացնել ժողովրդավարական ինստիտուտները Պաղեստինի Ինքնավարության իշխանության տակ գտնվող տարածքներում:

³⁶ Տե՛ս Obama's letter to Bush June 24, 2008,

<http://www.aipac.org/Publications/SourceMaterialsCongressionalAction/ObamaLetter062408.pdf>

³⁷ Obama would talk with Iran and Syria, Jan 31, 2008 22:25 | Updated Feb 1, 2008 8:46, By JERUSALEM POST STAFF AND AP

հարաբերությունների բարելավումը անխուսափելիորեն վտանգելու է Սիրիայի ռազմական դաշինքը Իրանի հետ: Սա իր հերթին նաև կխախտի ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում՝ վերացնելով կամ փոքրացնելով Սիրիայի տարածքի օգտագործման հնարավորությունը Հիզբուլլահին³⁸ և Համասին զենք ու զինամթերք մատակարարելու համար:

Իբրև առաջին քայլ՝ Սիրիան պետք է կյանքի կոչի ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի թիվ 1701 բանաձևը: Ըստ Բ. Օբամայի՝ Սիրիան կարող է նաև գործընկեր լինել Իրաքի կայունացման հարցում:

Նույն պարբերականի հարցազրույցում նա մտադրություն է արտահայտել գազաթնաժողով հրավիրել մուսուլմանական պետությունների ղեկավարների մասնակցությամբ, ուր պետք է քննարկվեն Արևմուտքի և Իսլամական աշխարհի միջև մեծացող անջրպետը վերացնելուն ուղղված հարցերը:

* * *

ԱՄՆ-ի նախագահական թեկնածուների ելույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեկնածուները հիմնականում անդրադառնում են մերձավորարևելյան հակամարտությունների լուծման խնդիրներին և, որպես հետևանք, նախագահական թեկնածուների ելույթներում «Մերձավոր Արևելքը» սահմանափակվում է պաղեստինա-իսրայելական և սիրիա-իսրայելական հակամարտությամբ: Նրանց ելույթներում շատ մակերեսային տեղ են զբաղեցնում մերձավորարևելյան տարածաշրջանի խաղացող այլ պետությունները, ինչպիսին են Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը և այլն:

Ինչպես արդեն նշվել է, Օբաման մատնանշում էր այս երկու խաղացողների դերի բարձրացման անհրաժեշտությունը տարածաշրջանային հակամարտությունների լուծման գործում: Մյուս կողմից Մերձավոր Արևելքի նավթ արդյունահանող պետությունները, հիմնականում Սաուդյան Արաբիան, խիստ մտահոգված են զարոգարչավի ընթացքում Բ. Օբամայի հայտարարություններով, որ իր նախագահության դեպքում տասը տարվա ընթացքում ԱՄՆ-ի տնտեսությունը վերջնականապես կդադարի կախված լինել մերձավորարևելյան նավթից: Բ. Օբաման այս տեսակետը վերահաստատեց նաև ՄակՔեյնի հետ երրորդ և վերջին դեբատներում³⁹: Չնայած այս հանգամանքին, ըստ Economist պարբերականի անցկացրած ինտերնետային հարցմանը, սաուդացիների 99 % համակրում է Օբամային⁴⁰:

Նախագահական թեկնածուների ելույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ Մերձավոր Արևելքի վերաբերյալ հատվածներում մակերեսային է խոսվում

³⁸ Բ. Օբաման բացառել է Հիզբուլլահի հետ բանակցությունների որևէ հնարավորություն:

³⁹ Տե՛ս Presidential debate transcript, New York, October 15, 2008.

http://www.cfr.org/publication/17541/presidential_debate_transcript_new_york.html, տե՛ս նաև Al-Watan պարբերականի խմբագրականը, հունիսի 6, 2008

⁴⁰ <http://www.economist.com/vote2008/>

(բացառությամբ Իրաքի, որը առանձին կետ է կազմում էլույթներում) ահաբեկչության մասին: Թեկնածուները բավարարվում են ընդհանուր ձևակերպումներով «ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտության» վերաբերյալ:

Ամփոփելով ԱՄՆ-ի նախագահական թեկնածուների էլույթներում ու գործունեության մեջ մերձավորարևելյան հակամարտություններին վերաբերող նյութը՝ կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող տարածաշրջանի հիմնախնդիրների լուծման հարցը դեմոկրատական թեկնածուի ընտրվելու պարագայում կարող է նոր խթան ստանալ, սակայն այդ ճակատում հաջողությունների մասին կարող ենք խոսել միայն Օբամայի հավանական վարչակազմում պետքարտուղարի պաշտոնը զբաղեցնողի անունն իմանալիս: Եթե այդ պաշտոնում հայտնվի Օբամայի մերձավորարևելյան ներկա խորհրդականներից որևէ մեկը, ապա հնարավոր է, որ սկանսատես լինենք մերձավորարևելյան հիմնախնդիրներին առնչվող մոտեցումների փոփոխությունների: Միայն սույն թվականի նոյեմբերին պարզ կլինի, թե ինչպիսի փոփոխություններ են սպասվում Մերձավոր Արևելքում:

ԻՐԱՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՄՆ 2008Թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՄՐՅԱՊԱՅՔԱՐՈՒՄ

Ս. Գրիգորյան

Իրաքի պատերազմը 2008թ. ԱՄՆ նախագահական մրցապայքարում ամենաթեժ ու հակասական հարցերից է: Վերջնափուլում պայքարող դեմոկրատ թեկնածու Բարաք Օբամայի և հանրապետական Ջոն ՄակՔեյնի տարաձայնություններն ու հակադիր մոտեցումներն այս խնդրի շուրջ բավական լարվածությունն ու հետաքրքրությունն են ստեղծում ընտրապայքարում:

Խնդրի ներկայացումը թեկնածուների կողմից

Եթե 2002թ. Արիզոնայի սենատոր Ջ. ՄակՔեյնը քվեարկել էր Իրաքում պատերազմ սկսելու օգտին՝ պատճառաբանելով, թե Սադամ Հուսեյնը «առաջին կարգի սպառնալիք է», ապա Իլլինոյի սենատոր Բ. Օբաման կտրականապես դեմ էր իրաքյան պատերազմին՝ պնդելով, որ Սադամից ազատվելու համար պատերազմ անհրաժեշտ չէ: Ավելին, ՄակՔեյնը մշտապես քննադատում էր Բուշի վարչակազմը՝ Իրաք բավարար չափով ռազմական ուժ չուղարկելու պատճառով: 2007թ. նա պաշտպանեց Իրաք հավելյալ զորք ուղարկելու նախագիծը և դեռևս շարունակում է պնդել, որ ամերիկյան զորքերն Իրաքում պետք է մնան մինչև իրական հաղթանակ:

Իրաքյան պատերազմի մշտական քննադատ Օբաման բացառում է ռազմական ճանապարհը Իրաքում որևէ հարց լուծելու համար: «Զորքերը պետք է դուրս բերել ոչ թե վեց ամսից կամ մեկ տարուց, այլ հիմա», - հայտարարում էր Օբաման⁴¹:

Փորձենք մանրամասնել՝ ինչ է իրաքյան պատերազմը, որոնք են դրա հետևանքները, արդյունքներն ու լուծումներն ըստ երկու թեկնածուների:

Բարաք Օբամա

Բ. Օբամայի համոզմամբ, իրաքյան պատերազմը որևէ դրական արդյունքի չի հանգեցրել: Նա իր հոետորության մեջ պարբերաբար կրկնում է, որ այդ պատերազմի հիմքում ոչ թե իրական պատճառներ են, այլ քաղաքական գործիչների հավակնությունները:

Իրաքի հարցում նա մեղադրում է ոչ միայն Բուշի անձնակազմին, այլև ԱՄՆ-ի կոնգրեսին, այդ թվում՝ իր կուսակիցներին, ովքեր 2003թ. քվեարկել են պատերազմի օգտին: Մինչդեռ, Օբամայի պնդմամբ, Ազգային հետախուզական գնահատման զեկույցն Իրաքի մասին ընդհանրապես համոզիչ չի եղել՝ լի չափազանցված ու կեղծ տվյալներով:

Պատերազմի հետևանքներն, ըստ Օբամայի, ակնհայտ են: Նախ՝ այն թուլացրել ու անարդյունավետ է դարձրել պայքարն ալ-Կաիդայի ու տալիբների դեմ: Ամերիկացիների

⁴¹ Տե՛ս Բարաք Օբամայի ելույթն Իլլինոյում, 2006թ., նոյեմբերի 20:

ձախողված քաղաքականությունը հնարավորություն է տվել ալ-Կաիդային համայրել իր ուժերը, իսկ նրա ղեկավարությունն անվտանգություն է վայելում Պակիստանում՝ Իրաքից հազարավոր մղոններ հեռու:

Օբամայի կարծիքով, սա պատերազմ է մի երկրի դեմ, որն իրական վտանգ չէր ներկայացնում և կապ չուներ 9/11-ի հետ: Մինչդեռ այդ պատերազմում զոհվել է 4.000 ամերիկացի, ծախսվել մոտ 1 տրիլիոն դոլար, այն դեպքում, երբ նախապես հայտարարվել էր, թե պատերազմը կարժենա 50-60 մլրդ դոլար:

Պատերազմը համարձակ է դարձրել Իրանին, որը լուրջ մարտահրավերներ է նետում Մերձավոր Արևելքում Ամերիկայի շահերին՝ զարգացնելով իր միջուկային ծրագիրն ու սպառնալով ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելին:

Խոստացված «Նոր Մերձավոր Արևելքը» դեռևս հեռու է իրականությունից, քանի դեռ Համասն իշխում է Գազայում, իսկ Սադր քաղաքում ծածանվում են Հիզբուլլահի դրոշները:

Իրաքի պատերազմը համարձակ է դարձրել նաև Հյուսիսային Կորեային, որը նոր միջուկային զենք ստեղծեց և 2006-ին նույնիսկ փորձարկեց այն:

Այս պատերազմն ուղղակիորեն հարվածել է ԱՄՆ-ի քաղաքացու շահերին: Երբ ԱՄՆ-ի քաղաքացին 4 անգամ ավելի է վճարում՝ իր մեքենան լիցքավորելու, նա վճարում է Իրաքի պատերազմի համար: ԱՄՆ-ի հասարակությունը վճարում է Իրաքի պատերազմի համար, երբ Ազգային զվարդիան օգնության չի հասնում Լուիզիանայի փոթորկի կամ Արևմտյան Վիրջինիայի ջրհեղեղի ժամանակ:

Իրաքի պատերազմում ծախսվող ամսական մոտ 10 մլրդ դոլարը կարող էր օգտագործվել՝ հոգալու 450.000 ամերիկացու առողջական կարիքները, վարձելու 30.000 տարրական դպրոցի ուսուցիչ, քոլեջը հասանելի դարձնելու մոտ 300.000 ուսանողի համար:

Այս ամենի պատճառով ոչ միայն ամերիկացիները, այլև աշխարհը կորցրել է վստահությունն ԱՄՆ-ի նկատմամբ⁴²:

2007թ. Իրաք հավելյալ 21.500 զորք ուղարկելը նպատակ ուներ հաշտեցնել Իրաքի քաղաքական առաջնորդներին և կայունություն հաստատել, ինչը, Օբամայի պնդմամբ, տեղի չի ունեցել մինչ օրս: Իրաքի առաջնորդները դեռևս ի վիճակի չեն քաղաքական կայունություն հաստատել երկրում, արդյունավետ օգտագործել նավթադոլարները: Իսկ եթե բռնություններն ու ընդվզումները կրճատվել են, ապա միայն 2006թ. համեմատ:

Անարդյունավետ են գործում Իրաքի անվտանգության ուժերը, որոնք չեն կարողանում պահպանել գոնե այն, ինչ ձեռք են բերել ամերիկյան ուժերը: Ինչ վերաբերում է բռնությունների նվազմանն Անբարի մարզում, ինչը Բուշի վարչակազմի ու ՄակՔեյնի կողմից հաճախակի մեկնաբանվում է որպես մեծ հաջողություն, ապա դա ոչ թե զորքերն ավելացնելու, այլ Իրաքի սուննի ցեղերի ու ամերիկյան ուժերի միջև

⁴² Տե՛ս Օբամայի ելույթը Չարլսթոունում. 2008թ. մարտի 20:

բանակցության արդյունքն է: Մա ակնհայտորեն ցույց է տալիս, որ լուծումներն Իրաքում ոչ թե ռազմական են, այլ քաղաքական:

Ի՞նչ է առաջարկում Բարաք Օբաման:

ԱՄՆ-ի նախագահ դառնալու դեպքում Օբաման անմիջապես սկսելու է ամերիկյան զորքերի դուսբերումն Իրաքից: Դա կատարվելու է 16 ամսվա ընթացքում և ավարտին է հասցվելու 2010թ. ամռանը: Ուժերը նախ կտեղափոխվեն անվտանգ, ապա՝ անկայուն վայրերից:

Իրաքում կլինի ամերիկյան ուժերի որոշակի ներկայություն՝ սահմանափակ առաքելություններով՝ հետապնդելու ալ-Կաիդայի դեռևս ակտիվ ուժերին, պաշտպանելու ամերիկյան դիվանագիտական ու զինվորական անձնակազմը և, մինչև քաղաքական կայունության վերջնական հաստատումը, մարզելու Իրաքի անվտանգության ուժերը:

Ուժերի դուսբերմամբ միայն հնարավոր կլինի Իրաքի առաջնորդներին մղել քաղաքական հաշտության և նրանց պատասխանատու դարձնել երկրում կայունություն հաստատելու գործում:

Իրաքի պատերազմն ավարտելն անհրաժեշտ է Աֆղանստանում լիակատար պայքար մղելու համար: Օբամայի ծրագրի համաձայն՝ Աֆղանստան կուղարկվի մոտ 9000 հավելյալ զորք՝ օժանդակելու ՆԱՏՕ-ի ուժերին:

Օբաման Իրաքի վերաբերյալ իր գրեթե բոլոր ելույթներում համոզում է, որ ԱՄՆ-ի համար թիվ մեկ խնդիրը ոչ թե Իրաքն է, այլ Պակիստանն ու Աֆղանստանը: Նա հայտարարում է, որ Եվրոպայի օգնությամբ կվերամշակի հակաահաբեկչական ռազմավարությունը՝ ավելի կենտրոնանալով Աֆղանստանում ու Պակիստանում ալ-Կաիդայի ուժերը ոչնչացնելու, քան իրաքյան պատերազմի վրա:

Այնուհետև Օբաման ձեռնամուխ է լինելու Իրաքում ազգային հաշտեցման գործին: ՄԱԿ-ի միջոցով ստեղծվելու է սահմանադրական մարմին, որը ներկայացուցիչներ է ընդգրկելու Իրաքի հասարակության տարբեր շերտերից՝ կառավարությունից և դրանից դուրս: Խնդիրն այն է, որ 2005թ. ընդունված սահմանադրությունը շի'ա-քուրդ համաձայնության արդյունք է և հաշվի չի առնում սուննիների շահերը: Նոր մարմինը գործելու է այնքան ժամանակ, քանի դեռ Իրաքում չեն լուծվել դաշնայնության, նավթակամուտների բաշխման և «ապաբա'ասավորման» հարցերը:

Հաջորդը Մերձավոր Արևելքում խնդիրների լուծումն է դիվանագիտական ուժով:

«Պետք է գործել անմիջական դիվանագիտությամբ՝ առանց նախապայմանների՝ ի տարբերություն Բուշ-Չեյնի դիվանագիտության՝ խոսել մեր բարեկամների հետ և արհամարհել մեր թշնամիներին: Բանեցնել իրական, ուղղակի և շարունակական դիվանագիտություն», - հայտարարում է Օբաման:

Օբաման միջնորդելու է քուրդ և թուրք առաջնորդների երկխոսությանը, ստիպելու է սուննիական երկրներին, ինչպիսիքն են Սաուդյան Արաբիան է, օգտագործել իրենց ազդեցությունը Իրաքի սուննիներին հաշտության մղելու համար:

Ահաբեկչության դեմ պայքարելու համար Օբաման ստիպելու է Իրանին, Սաուդյան Արաբիային, Սիրիային կասեցնել մարտիկների, զենքի ու ֆինանսական ռեսուրսների հոսքը Իրաք: Օբաման կոշտ դիվանագիտություն է վարելու Սիրիայի ու Իրանի նկատմամբ՝ նրանց հղելով Իրաքի ներքին գործերին չմիջամտելու հստակ ուղերձը:

Մշակվելու է տարածաշրջանային երկարատև համագործակցության ռազմավարություն, որը ոչ միայն նպաստելու է Իրաքի կայունությանն ու տարածաշրջանային ինտեգրմանը, այլև կասեցնելու է հարևան երկրների հավակնություններն այդ երկրի նկատմամբ:

Հաջորդ հրատապ խնդիրն Իրաքի հումանիտար ճգնաժամի վերացումն է: Ներկայում ավելի քան 2 մլն իրաքցի սեփական երկրում չունի մշտական բնակություն, ավելի քան 2 մլն իրաքցի ապրում է Իրաքի սահմաններից դուրս, ամսական մահանում է մոտ 1000 իրաքցի, Բաղդադի փողոցներում մշտական են մահացու բախումները տարբեր խմբավորումների միջև: Այսինքն՝ հումանիտար ճգնաժամը, որն, ըստ նախագահ Բուշի, վրա է հասնելու ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո, գոյություն ունի այսօր:

Ճգնաժամը վերացնելու նպատակով ստեղծվելու է միջազգային խումբ, փախստականներին տրվելու է նվազագույնը 2 մլրդ դոլարի չափով ֆինանսական օգնություն: Օբաման միջնորդելու է, որ ՄԱԿ-ը, ԵՄ-ն, Արաբական երկրների լիգան ակտիվացնեն իրենց ջանքերն Իրաքին օժանդակելու հարցում:

ԱՄՆ-ի պետքարտուղարությունը խոստացել է 7000 իրաքցի փախստականների մուտքի թույլտվություն ԱՄՆ, սակայն երկիր է ներս թողել ընդամենը 190 փախստականի:

Կվերանայվի իրաքցիներին ապաստան տալու քաղաքականությունը: Կոալիցիոն գործընկերներ Մեծ Բրիտանիան, Ավստրալիան, Իտալիան, Իսպանիան, Նիդերլանդները, Դանիան և Ճապոնիան չնչին գործողություններ են կատարել՝ կասեցնելու հումանիտար ճգնաժամը, նրանք, ինչպես նաև ԱՄՆ-ի դաշնակիցներ Սաուդյան Արաբիան ու Քուվեյթը, պետք է շոշափելի ներդրում ունենան ճգնաժամը վերացնելու գործում⁴³:

Մրանք են Իրաքի խնդիրն առնչվող Օբամայի մոտեցումներն ու լուծումները, որոնք արմատապես տարբերվում են նույն խնդրի վերաբերյալ հանրապետական Ջոն ՄակՔեյնի դիրքորոշումներից:

⁴³ www.nytimes.com/2008/07/14/opinion/14obama.html

Չոն ՄակՔեյն

ՄակՔեյնը երբևէ կասկած չի հայտնել Իրաքի պատերազմի անհրաժեշտության վերաբերյալ:

Իսկ ձախողումներն, ըստ նրա, պայմանավորված են պատերազմական սխալ ռազմավարությամբ, մասնավորապես, Իրաքում գործերի ոչ բավարար քանակությամբ և համընդգրկուն ու պրագմատիկ պլանի բացակայությամբ:

Դեռ 2003թ.-ից ՄակՔեյնը պնդում էր, որ Իրաքում հաջողություն ունենալու համար պետք է այնտեղ ուղարկել մեծ քանակությամբ զորք, հակառակ դեպքում ԱՄՆ-ը «առճակատվելու է երկարատև լրջագույն խնդրի»:

Հաջորդ չորս տարվա ընթացքում ՄակՔեյնը մշտապես խոսում էր Իրաքում նոր ռազմավարություն սկսելու անհրաժեշտության մասին: «Իրաքում պետք է ավելացնել թե՛ ծովային, թե՛ հատուկ ուժերը՝ իրականացնելու հարձակողական գործողություններ: Մենք չենք կարող հասնել որևէ քաղաքական նպատակի, քանի դեռ Իրաքը շարունակում է մնալ վտանգավոր գոտի... Եվ պարզ ճշմարտությունն այն է, որ Իրաքում չունենք բավարար քանակությամբ զորք մեր ռազմական խնդիրները լուծելու համար»⁴⁴:

ՄակՔեյնն առաջիններից էր, որ ողջունեց 2007թ. 21.500 զորքի տեղափոխումն Իրաք:

2008թ. հունվարի 10-ին Wall Street Journal-ում ՄակՔեյնի ու նախկին դեմոկրատ Ջոզեֆ Լիբերմանի համատեղ հոդվածը՝ «The Surge Worked» («Զորքերի ավելացումը արդյունք տվեց») վերնագրով, արդարացնում է Իրաք հավելյալ զորք ուղարկելու քաղաքականությունը⁴⁵: Ըստ ՄակՔեյնի՝ նոր ռազմավարությունը տվել է շոշափելի արդյունքներ. 2007թ. հունվարից մինչև 2008թ. մարտ Իրաքում բռնությունները նվազել են 90%-ով, քաղաքացիական ու կռալիցիոն ուժերի մահացությունը կրճատվել է 70%-ով, տեղի է ունենում քաղաքական հաշտության գործընթաց, «Իրաքի զավակները»՝ մոտ 90 հազ. սուննի իրաքցիներ, և այլ շարժումներ պայքարում են ահաբեկչական խմբավորումների դեմ:

Առաջիկայում Իրաքում երկու կարևոր ընտրություններ են տեղի ունենալու՝ 2008թ. վերջին տեղական ինքակառավարման, իսկ 2009թ.-ին՝ ազգային կառավարության ընտրությունները: Ամերիկյան ուժերի համար, ՄակՔեյնի համոզմամբ, առաջնային է լինելու ազատ ու անվտանգ ընտրությունների ապահովումը:

Հաջորդ կարևորագույն խնդիրն Իրաքի տնտեսության վերականգնումն է, որն անվտանգության գլխավոր երաշխիքներից է:

Տարածաշրջանային անվտանգություն ստեղծելու նպատակով Սիրիան ու Իրանը պետք է ենթարկվեն միջազգային ուժեղ ճնշման, որպեսզի դադարեցնեն օժանդակությունն ահաբեկիչներին:

⁴⁴ Sen. John McCain, Remarks To Council On Foreign Relations, Washington, DC 11/5/03

⁴⁵ http://online.wsj.com/article/SB119992665423979631.html?mod=opinion_main_commentaries

ԱՄՆ-ի նախագահ ընտրվելու դեպքում, ՄակՔեյնն ամերիկյան ուժերն Իրաքից կաշխատի դուրս բերել մինչև 2013թ., սակայն դա կլինի միայն իրական հաջողության դեպքում: Հակառակ պարագայում ամերիկյան զորքերն այնտեղ կմնան այնքան ժամանակ, մինչև կհաստատվի վերջնական կայունություն:

«Խոստանալ ամերիկյան զորքերի դուրսբերում Իրաքից, հաշվի չառնելով դրա ողբերգական հետևանքները, մեր կենսական շահերը և Մերձավոր Արևելքի ապագան, մեծագույն անպատասխանատվություն է: Դա ղեկավարման ձախողում է», - հայտարարում է հանրապետական թեկնածուն⁴⁶:

Զորքերի դուրսբերման աննպատակահարմարությունն ապացուցելու համար ՄակՔեյնը հաճախ է բերում Բասրայի օրինակը: Պատերազմի սկզբում Իրաքի հարավը հսկվում էր բրիտանական ուժերի կողմից: Համապատասխան քանակի զորք չունենալու պատճառով Բասրայի անվտանգությունն աստիճանաբար վատթարացավ, բրիտանացիները նահանջեցին, և շիական զինված ուժերը իրենց ձեռքը վերցրին Բասրան: 2007թ. մարտին Իրաքի վարչապետ Նուրի Քամալ ալ-Մալիքին հարձակում կազմակերպեց Բասրայում, սակայն իրաքյան զինուժը կարճ ժամանակ անց ձախողեց մարտական գործողությունները: Ամերիկյան հատուկ նշանակության ուժերի և ռազմական փորձագետների ջանքերով Բասրայում վերականգնվեցին իրաքյան ուժերի դիրքերը, նրանց տրամադրվեցին օդուժ, ռազմական մանրամասն ինֆորմացիա և հետախուզական տվյալներ: Արդյունքում իրաքյան անվտանգության ուժերը Բասրայում անցան իշխանության և այժմ վերահսկում են քաղաքը: Օրինակը պարզ է՝ զորքերի շուտափույթ դուրսբերումը նպաստելու է բռնությունների ակտիվացմանը:

Սեպտեմբերի 4-ին հանրապետականների համագումարի ելույթում ՄակՔեյնն Իրաքի ապագայի վերաբերյալ հնչեցրեց հետևյալը. «ԱՄՆ-ի հաջորդ նախագահը պետք է հստակորեն ցույց տա, որ սատարում է ոչ թե առանձին գործիչների ու անձերի, այլ ամբողջական համակարգի: ԱՄՆ-ի կողմից տրվող ռազմական ու ֆինանսական օգնությունը պետք է ուղղված լինի միայն կառավարական արդյունավետ համակարգի ստեղծմանը»:

Ապա ՄակՔեյնը նշեց, թե որոշ տեղեկությունների համաձայն, Իրաքի կառավարությունը ճնշում է «Իրաքի զավակներին» և խոչընդոտում նրանց ինտեգրումն Իրաքի անվտանգության ուժերին: «Եթե Մալիքին շարունակի սատարել նման նեղ օրակարգ, ապա համապատասխանաբար պետք է սահմանափակվի մեր օժանդակությունը՝ ներառյալ տեխնիկական խորհրդատվությունն ու զենքի վաճառքը»:

ՄակՔեյնի համար Իրաքը հակահաբեկչական պայքարի կենտրոնական ճակատն է⁴⁷: Պարտվել Իրաքում կնշանակի հաղթանակ շնորհել իսլամիստական

⁴⁶ <http://www.johnmccain.com/Informing/Issues/FDEB03A7-30B0-4ECE-8E34-4C7EA83F11D8.htm>

⁴⁷ An Enduring Peace Built on Freedom Securing America's Future, John McCain, *Foreign Affairs*, November/December 2007

ուժերին և՛ Իրաքում, և՛ Աֆղանստանում ու Պակիստանում: Հաղթել Իրաքում նշանակում է զսպել Իրանին, Համասին ու Հիզբուլլահին:

Այսպիսով, ԱՄՆ-ի հաջորդ նախագահի խնդիրն, ըստ ՄակՔեյնի, պետք է լինի ոչ թե «իրաքյան պատերազմը ավարտելը, ինչպես ասում է Օբաման, այլ այդ պատերազմում հաղթելը»:

* * *

Երկու թեկնածուների դիրքորոշումներում էլ նկատելի է որոշակի «փոփոխականություն»:

Այսպես՝ 2007թ. փետրվարին, երբ Իրաքում բռնություններն իրենց գագաթնակետին էին հասել, Օբաման հայտարարում էր, որ նախագահ դառնալու դեպքում զորքերն Իրաքից դուրս է բերելու անմիջապես, քանի որ դրանք որևէ կերպ չեն նպաստում Իրաքում կայունության հաստատմանը:

Այսօր, երբ Իրաքում, չնայած բազմաթիվ չլուծված հարցերի, որոշակի կայունություն է հաստատվել, և հաճախ է խոսվում Իրաքում ամերիկյան ուժերի հրամանատար Դեյվիդ Փետրեուսի հաջողությունների մասին, Օբամայի հռետորությունը տեղին չի թվում:

Դեմոկրատ թեկնածուի վերջին ելույթներում զորքերի դուրսբերման ռազմավարության որոշակի քայլերի մասին չի խոսվում: Այս հարցում Օբամայի միակ խոսուն արտահայտությունը հետևյալն է. «Ելքն Իրաքից այնքան զգույշ պետք է լինի, որքան անզգույշ էր մուտքն այնտեղ»: Մա նշանակում է, որ Օբաման բոլոր դեպքերում կազմակերպելու է զորքերի փուլային ու աստիճանական դուրսբերում: Դա արտահայտվում է զորքերի դուրսբերման 16-ամսյա ծրագրում, որում, սակայն, Օբաման չի մանրամասնում ելքի ընթացքը:

Հաճախ տպավորությունն այն է, որ Օբաման խոստանում է այն, ինչ ընտրազանգվածը ցանկանում է լսել: Սակայն քարոզարշավի երկրորդ մակարդակում միայն խոստանալը բավարար չէ. կարևոր է խոսել նաև դրանք իրականացնելու ճանապարհների մասին: Հակառակ դեպքում վերացական ու նույնիսկ անհավատալի է, թե ինչպես է Օբաման հաշտեցնելու քուրդ և թուրք առաջնորդներին, ինչպես է օգտագործելու Մաուդյան Արաբիայի ազդեցությունը Իրաքի սուներիներին հաշտության մղելու համար կամ ինչպես է զսպելու Իրանի ազդեցության աճը Իրաքից հեռանալու դեպքում:

Իսկ ընտրազանգվածը ցանկանում է լսել հստակ ռազմավարության մասին: Դրա համար նախ՝ անհրաժեշտ է ներկայացնել հստակ ժամանակագրություն՝ ոչ միայն որպես օրացույց, այլև ռազմավարություն:

Օբամայի ռազմավարության մյուս կարևոր կետն է ցույց տալ, որ Իրաքից հեռանալ չի նշանակում հեռանալ Մերձավոր Արևելքից: Ավելին, Իրաքից դուրս գալը պետք է առավել արդյունավետ դարձնի տարածաշրջանային համագործակցությունը, ուժեղացնի ԱՄՆ-ի տարածաշրջանային դիրքերը:

Հանրապետական թիմն ակտիվորեն շահարկում է վերջին շրջանում Իրաքի համեմատաբար կայուն իրավիճակը, ինչը կարող է նրանց կողմը գրավել դեռևս չկողմնորոշված ընտրագանգվածին, հատկապես այն հատվածին, որը շատ հարցերում վստահում է Օբամային, սակայն Իրաքի ու ազգային անվտանգության հարցերում կասկածներ ունի:

Հանրապետական ՄակՔեյնը սկզբից նեթ դեմ է եղել զորքերի դուրսբերման համար որևէ ժամանակացույցի հաստատմանը: Մակայն եթե սկզբում նա ամերիկյան զորքերի առավել քան հիսունամյա ներկայությունը Գերմանիայում, Հարավային Կորեայում ու Ճապոնիայում հարմար մոդել էր համարում նաև Իրաքի համար, ապա վերջին ելույթներում հաճախ նշում է, որ որևէ մեկը չի ցանկանում Իրաքում մշտական ներկայություն հաստատել:

Սա, իհարկե, պայմանավորված է նաև իրաքյան կողմի դժգոհություններով, որոնք ավելի սրվեցին այս տարվա հուլիսին «ուժային համաձայնության կարգավիճակի» (SOFA) մասին Վաշինգթոնի ներկայացրած առաջարկով: Այն նախատեսում էր անորոշ ժամանակով ամերիկյան ուժերի ներկայություն Իրաքում: Առաջարկը չընդունվեց Իրաքի իշխանությունների կողմից, որոնք պնդում են զորքերի դուրսբերման վրա մինչև 2011թ.: Իսկ վերջին քանակությունների արդյունքում Վաշինգթոնը հայտարարեց մինչև 2009թ. փետրվար Իրաքից 8000 զինվորի դուրսբերման մասին:

Հանրապետականների համագումարում հնչեցրած ելույթում ՄակՔեյնն ասաց, որ ԱՄՆ-ի հաջորդ նախագահը չպետք է ուղերձ հղի, ըստ որի, Իրաքում ամերիկյան զորքերի մշտական ներկայություն է անհրաժեշտ: Իրաքի առաջնորդների մեծ մասը ռազմական օգնություն է ցանկանում մի քանի տարով, բայց ոչ մշտական ներկայություն և ոչ ավելին, քան խորհրդատվական աջակցություն:

ՄակՔեյնի համար խիստ կարևոր է ցույց տալ, որ Իրաքում հնարավոր է իրական հաղթանակ, որը պետք է արտահայտվի ոչ միայն ռազմական, այլև Իրաքի ներքաղաքական վիճակի կայունությամբ, բոլորի շահերի ներկայացմամբ, ինչն, իհարկե, դժվար է շիաների մեծամասնության պայմաններում:

* * *

Ընտրապայքարի ընթացքում երկու թեկնածուներն էլ փոխադարձ մեղադրանք են հնչեցնում միմյանց նկատմամբ: ՄակՔեյնը Օբամային մեղադրում է իրաքյան պատերազմի արդյունքներն անտեսելու մեջ. «Օբաման խոսում է ամեն գնով զորքերը դուրս բերելու մասին, բայց ոչ երբեք հաղթելու»: Հանրապետական թեկնածուն իր մրցակցին համարում է դեռևս անպատրաստ, ոչ հասուն՝ գլխավոր հրամանատար դառնալու համար ⁴⁸:

⁴⁸ Տե՛ս Ջոն ՄակՔեյնի ելույթը Հանրապետականների ազգային համագումարում, 2008թ. սեպտեմբերի 4, Սենթ, Փոուլ Մինոսետա:

Ազգային անվտանգության հարցում Օբամային ուղղված մեղադրանքների պատասխանն այն է, որ Բուշն ու ՄակՔեյնն Իրաքում հաղթելու ռազմավարություն չունեն, ունեն միայն այնտեղ մնալու ռազմավարություն⁴⁹:

Մինչ ՄակՔեյնը բարձրահունչ պաթոսով խոսում է «իրական հաղթանակի» մասին, բարձրաձայնում, որ «Իրաքում չի կարելի պարտվել», Օբաման տալիս է հաղթանակի այլ մեկնաբանություն. Իրաքը կատարյալ վայր չի դառնալու, իսկ ԱՄՆ-ը չունի անսահմանափակ ռեսուրսներ՝ դրան հասնելու: ԱՄՆ-ը չի կարող ոչնչացնել ալ-Կաիդայի բոլոր հետևորդներին, ի սպառ չեզոքացնել Իրանի ազդեցությունը, ուստի հաղթանակը ոչ թե զինաթափ ու հանձնված թշնամին է, այլ Իրաքին այնպիսի կառավարություն թողնելը, որը պատասխանատվություն կստանձնի երկրի ապագայի համար, կկանխի բախումները տարբեր սեկտաների միջև, կհավաստիացնի, որ ալ-Կաիդան այլևս սպառնալիք չէ:

Եթե ՄակՔեյնն Օբամային մեղադրում է «պարտվողի» քաղաքականություն բանեցնելու մեջ, ապա Օբաման քննադատում է մրցակցին կեղծ հոետորության մեջ, որով հանրապետականը փորձում է արդարացնել իրաքյան ձախողված քաղաքականությունը:

Ազգային անվտանգությունն ու հակահաբեկչական պայքարը համարվում են Օբամայի «թույլ կետերը»: Օբաման պատերազմների չի մասնակցել՝ ի տարբերություն այս ասպարեզում բազմափորձ ՄակՔեյնի, Իրաք այցելել է երկու անգամ, մինչդեռ նրա մրցակիցը՝ ութ անգամ:

Սակայն դեմոկրատ թեկնածուն սրան հակադրում է Աֆղանստանի ու Պակիստանի վերաբերյալ իր ծրագրերը՝ պնդելով, որ ԱՄՆ-ի ազգային անվտանգությանն առաջին հերթին սպառնում է իրավիճակն Աֆղանստանում ու Պակիստանում: Նա հայտարարում է. «Ես վերջ կտամ այս պատերազմին պատասխանատու կերպով և ավարտին կհասցնեմ պայքարն ալ-Կաիդայի ու Աֆղանստանի դեմ: Մենք Ռուզվելտի կուսակցությունն ենք, մենք Քենեդիի կուսակցությունն ենք: Ուրեմն՝ ինձ մի՛ ասեք, թե դեմոկրատները չեն պաշտպանելու այս երկիրը, թե դեմոկրատներն անվտանգություն չեն ապահովելու: Որպես գլխավոր հրամանատար՝ ես երբեք չեմ երկմտելու այս պետությունը պաշտպանելու գործում»⁵⁰: Օբաման բազմիցս նշել է, որ Իրաքի պատերազմին դեմ լինել չի նշանակում դեմ լինել բոլոր պատերազմներին կամ հարկ եղած դեպքում ռազմական ուժի կիրառմանը:

Չնայած ՄակՔեյնը միշտ փորձում է ներկայացնել իրեն որպես բարեփոխիչ և այլախոհ, այդուհանդերձ երկու թեկնածուներից Օբաման է ընկալվում որպես «փոփոխություններ» բերող:

⁴⁹ Տե՛ս Բ. Օբամայի ելույթը Վաշինգթոնում, 2008թ., հուլիսի 15:

⁵⁰ Տե՛ս Բ. Օբամայի ելույթը Դեմոկրատների ազգային համագումարում, 2008թ., օգոստոսի 29, Կոլորադո, Դենվեր:

Մակայն դրանում հաջողության հասնելու համար Օբաման ավելի շատ պետք է խոսի ոչ թե անցյալի, այլ ապագայի մասին, ոչ թե իրաքյան պատերազմի սխալների, այլ այն ճանապարհների մասին, որոնցով նա կհասնի պատերազմի ցանկալի ավարտին: Իրաքի հարցում սա է, հավանաբար, ընտրողի հիմնական պահանջն Օբամայից:

Իրաքի խնդիրը մի քանի անգամ բարդանում է Իրանի խնդրի ֆոնին: Եթե ՄակՔեյնը համոզված է, որ Իրաքից զորքերի դուրսբերումը նոր առիթ է տալու Իրանին՝ ազդեցությունը տարածաշրջանում տարածելու, ապա Օբաման կարծում է, որ Իրաքում ամերիկացիների անհաջող ներկայությունն է, որ Իրանին գործելու հնարավարություններ է տալիս:

Ամերիկյան զորքերի դուրսբերումը կարող է նպաստել Իրաքում Իրանի ազդեցության աճին ու ակտիվ ներկայությանը: Դա իր հերթին կարող է սրել հարաբերություններն Իրանի ու Մաուդյան Արաբիայի միջև: Այդ դեպքում ԱՄՆ-ն առճակատվում է այն հարցին, թե ինչպես պետք է սատարել Մաուդյան Արաբիային: Այդ երկրում զորքեր տեղակայելը ցանկալի չէ ԱՄՆ-ի ու Մաուդյան Արաբիայի համար: Մակայն առավել անցանկալի է Իրանի գերակայության հաստատումն Արաբական թերակղզում:

Հարցի լրջությունը պատկերացնում են երկու թեկնածուներն էլ, և կա այն քողարկված գիտակցությունը, որ Իրաքից դուրս գալն այնքան դժվար է, որքան այնտեղ մնալը: Երկու պարագայում էլ անցանկալի զարգացումներն անխուսափելի կարող են լինել:

Իրաքում չեն բացառվում կտրուկ շրջադարձերը, որոնք անկասկած հանգեցնելու են հարցի վերաբերյալ դիրքորոշումների փոփոխմանը: Այն, ինչ խոստացվում է այսօր՝ ընտրություններից առաջ, հետագայում կարող է ընդհանրապես չհամապատասխանել աշխարհաքաղաքական պայմաններին: Այդ դեպքում, նոր զարգացումների ու հանգամանքների ֆոնին, հաջորդ ընտրապայքարի ընթացքում թեկնածուն կխոստանա այն, ինչը կնպաստի նրա վերընտրվելուն:

ԻՐԱՆԸ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐՈՒՄ

Տ. Մկրտչյան

2008թ. ամերիկյան նախագահական ընտրություններում Իրանի թեման մեծ կարևորություն է ներկայացնում. այն միայն խաղաղության և պատերազմի հարց չէ: Թեկնածուների մոտեցումներն իրանական քաղաքականության վերաբերյալ կարող են նախանշել ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության հետագա ուղղվածությունը:

«Իրանական հարցը» նոր չէ. այն եղել է և մնում է ամերիկյան արտաքին քաղաքականության մարտահրավերներից մեկը: Իրանի Իսլամական Հանրապետության հետ ԱՄՆ-ի հարաբերությունների և հատկապես նախագահական թեկնածուների կողմից Իրանի խնդրին առնչվող դիրքորոշումները պարզաբանելուց առաջ կարևոր է հստակ ձևակերպել, որ «իրանական հարցը» մարմին առավ 1979թ. Իսլամական Հեղափոխության և Իսլամական Հանրապետության սկզբնավորմամբ: Բնական էր, որ ԱՄՆ-ի և Շահական Պարսկաստանի միջև ինտենսիվ հարաբերություններից հետո, արդեն նոր ձևավորված դուալիստական՝ թեոկրատական-հանրապետական, իսլամական-իրանական այս նոր պետության հետ հարաբերությունների ձևավորման համար փոխադարձ նոր մոտեցումներ պետք է որդեգրվեին:

Այդ հարաբերությունները, կամ կարելի է ասել դրանց բացակայությունը, արդեն մոտ երեք տասնամյակ ընթանում են իրանական կողմի՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ժխտողական վերաբերմունքի ներքո և տարածաշրջանային ու ներքին հարցերի լուծման սահմանափակ և զգուշավոր ռեսուրսների օգտագործման իրանական մոտեցման համատեքստում:

«Իրանական հարցը» միայն ներկա վարչակազմի հետ հարաբերությունների կարգավորման խնդիր չէ, այն ժամանակի ընթացքում ձեռք է բերել մի շարք այլ բաղադրիչներ.

- Իրանի միջուկային խնդիր, որը միջուկային զենքի չտարածման կարևորագույն սկզբունքի խախտման և նոր համաշխարհային իրողությունների պատճառ կարող է դառնալ,
- Միջուկային հարցը ժամանակի ընթացքում դարձել է համաշխարհային մրցավազքում Իրանի Իսլամական Հանրապետության կարևորագույն զենք,
- Իրանի ռեսուրսները և աշխարհագրական դիրքի կարևորությունը նրան դարձրել են տարածաշրջանային և գլոբալ համագործակցության, ընդհանուր անվտանգության ապահովման տեսանկյունից կարևորագույն դերակատար,
- Իրանական հարցը նաև ներկա համաշխարհային քաղաքական, քաղաքակրթական, հասարակական, տնտեսական հարաբերությունների նորմերից տարբերվող, սակայն մինչև այսօր իր ադապտացիոն հնարավորություններով աչքի ընկնող մի զուգահեռ համակարգի գոյություն է...

Այս շարքը հնարավոր է շարունակել, սակայն ամենից կարևորն է հասկանալ, որ ժամանակ առ ժամանակ բարձրաձայնվում է «իրանական հարցի» այս կամ այն բաղադրիչը, հատկապես միջուկային զենքի ծրագիրը, և որ այսօր կարծես իրանական հարցի լուծման համապարփակ և բազմակողմ մոտեցումը դեռ չի ուրվագծվում հորիզոնում:

Փաստորեն, ամերիկյան և իրանական արտաքին քաղաքականությունների սկզբունքներն այսօր խիստ հակադրության մեջ են մի քանի հարթություններում: ԱՄՆ-ը այսօր Իրանը դիտարկում է իբրև «անվերահսկելի» պետություն, որը «տարածաշրջանային անկայունության աղբյուր» է և անմիջական վտանգ է ներկայացնում ԱՄՆ դաշնակիցների և ամերիկյան շահերի համար: Այս ամենն ավելի է սրվում Իրանի միջուկային ծրագրի և Աֆղանստանում ու Իրաքում նրա գործողությունների ֆոնին: Իսկ հատկապես 2008թ. ռուս-վրացական օգոստոսյան դեպքերից հետո ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների լարվածության համատեքստում առավել կարևորվում են Իրան-Ռուսաստան, Իրան-տարածաշրջանային այլ երկրներ համագործակցության հնարավոր զարգացումները:

Իսկ Իրանի տեսանկյունից Միացյալ Նահանգները տարածաշրջանային և գլոբալ հեգեմոն ուժ է, որը հաստատվել է Պարսից Օղոցում, Աֆղանստանում, Իրաքում՝ տարածաշրջանի ոչ միայն նավթային, այլև մնացած պաշարների ձեռնահասությունը ապահովելու համար միայն:

Չնայած այն հանգամանքին, որ իրաքյան պատերազմը և ԱՄՆ-ի տնտեսական հարցերը ավելի առաջնային են համարվում հատկապես նախընտրական պայքարում, արտաքին քաղաքականության տեսանկյունից Իրանը շարունակում է մեծ կարևորություն ներկայացնել հատկապես Բուշ Կրտսերի պաշտոնավարումից ի վեր, և հնարավոր չէ անտեսել այս հարցի վերաբերյալ այսօրվա նախագահի թեկնածուների մոտեցումները. թերևս հարկ է նշել, որ դրանք միայն նախընտրական փուլում արված հայտարարություններ և դիրքորոշումներ են:

Իրանի Իսլամական Հանրապետությունը իր միջուկային ծրագրով շարունակում է ԱՄՆ-ի ներկա և հաջորդ վարչակազմի առջև ծառայած արտաքին քաղաքականության վտանգավոր մարտահրավերներից մեկը մնալ:

Ուրանի հարստացմանը զուգընթաց՝ Իրանի նկատմամբ որդեգրվելիք ամերիկյան քաղաքականությունն, իհարկե, մեծ ազդեցություն կգործի վարչակազմի անվտանգության և արտաքին քաղաքականության այլ ոլորտների վրա (Իրաք և Աֆղանստան, մերձավորարևելյան խաղաղության գործընթաց, Ռուսաստանի և Չինաստանի հետ հարաբերություններ, զանգվածային միջուկային զենքի չտարածման գործընթաց, էներգետիկ անվտանգություն, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ներգրավվածություն այդ բանակցություններում, միջատլանտյան հարաբերություններ):

Նախընտրական փուլում Ամերիկայի նախագահական թեկնածուների իրանական քաղաքականության մասին դատողությունները, ընդհանուր մոտեցումների համատեքստում լինելով, առավել ուժգնանում են հատկապես միջազգային կարևոր իրադարձությունների արդյունքում, ինչպիսին են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրանի միջուկային հարցի շուրջ քննարկումները և պատժամիջոցների բանաձևերի ընդունումը, երկրորդ՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության զեկույցները, Ամերիկայի Ազգային հետախուզական գնահատում (National Intelligence Estimate-NIE)՝ 16 հետախուզական ծառայությունների համատեղ գնահատականը, և այլն:

Բուշի վարչակազմը տարիներ շարունակ պնդել է, որ Իրանը ակտիվորեն զարգացնում է ուրանի հարստացման իր ծրագիրը: Բացի այդ, 2007թ. մարտին ՄԱԿ-ի ընդունած երկրորդ բանաձևով տնտեսական պատժամիջոցների կիրառումը նույնպես չստիպեց իրանական կողմին դադարեցնել իր միջուկային ծրագրերը, ինչը հանգեցրեց ԱՄՆ-ի նախագահական ընտրապայքարի սկզբում նախագահի թեկնածուների կողմից խիստ սպառնալիքների առատությանը, որը հիմնականում հիմնված էր նախընտրական պայքարում արված քաղաքական նախնական հայտարարությունների վրա:

«Բեկումնային» իրադարձություններից էր 2007թ. դեկտեմբերի 3-ին ամերիկյան Ազգային հետախուզական գնահատման հրապարակած նոր զեկույցն Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ, որը մի շարք լրատվամիջոցների կողմից դիտարկվեց իբրև «անսպասելի»: Հիշեցնենք, որ NIE-ն արտահայտում է Իրանի միջուկային ծրագրերի առնչությամբ ԱՄՆ բոլոր տասնվեց հետախուզական գործակալությունների կոնսենսուսային տեսակետը:

Զեկույցի կարևոր եզրահանգումներից մեկն այն է, որ 2003թ. աշնանը Իրանը դադարեցրել է իր միջուկային զենքի ծրագիրը (2005թ. նույն NIE-ի կողմից հրապարակված զեկույցից ուղիղ երկու տարի առաջ), սակայն հավաստիացվում է, որ Իրանը շարունակում է միջուկային զենք արտադրելու համար զարգացնել տեխնիկական հնարավորությունները: Հիշենք, թե ինչ էր ասված NIE-ի 2005թ. զեկույցում. «Իրանը ներկայում զարգացնում է իր միջուկային զենքի ծրագիրը՝ հաշվի չառնելով միջազգային պարտավորություններն ու ճնշումները»:

Զեկույցն առաջին հայացքից ԱՄՆ-ի նախագահ Բուշի և պետդեպարտամենտի գործողությունների և հռետորության դեմ մի փաստաթուղթ է, որը, սակայն, հնարավորություն է տալիս Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման քաղաքականությունը շարունակել: Մյուս կողմից այն մի փաստաթուղթ է, որն անհրաժեշտության դեպքում հեշտությամբ կարող է փոխվել, կրկնվել կամ 2005թ. զեկույցի հիմքով վերամշակվել ու դառնալ 2007թ. զեկույցին հակառակ մի փաստաթուղթ:

Հիշենք, որ 2002թ. հենց NIE-ի իրաքյան միջուկային զենքի վերաբերյալ զեկույցն էր, որը չհամապատասխանելով իրականությանը, (պատերազմական

գործողություններից հետո միայն հերքվեցին այդ զեկույցի արդյունքները) հիմք հանդիսացավ Իրաքի վրա ամերիկյան հարձակման համար:

Այս նոր զեկույցն իհարկե զգալիորեն նվազեցրեց Իրանի և ԱՄՆ-ի միջև միջուկային հարցի շուրջ ռազմական բախման հնարավորությունը կամ հավանականությունը մոտ ապագայում, սակայն պետք է հստակ պատկերացնել, որ այս ամենը կարող է կրել շատ կարճաժամկետ բնույթ, և դա կարծես համապատասխանում է այս պահի ամերիկյան շահերին⁵¹:

Ամերիկյան նեոկոնսերվատորներն այս ամենը բնութագրում են իբրև Բուշի կողմից Իրանի միջուկային խնդիրը հաջորդ «ադմինիստրացիայի վրա գցելու» քաղաքականություն:

Սակայն մեկ հանգամանք ևս պետք է հստակեցնել. որքանով է հիմնավորված ներկա վարչակազմի՝ Իրանական հարցի լուծման դանդաղումը, այն դեպքում երբ հավաստիացվում է, որ Իրանի կողմից մեկ-երկու տարում միջուկային զենք ստեղծելու հավանականությունը մեծ է:

ԱՄՆ-ի հաջորդ նախագահի թեկնածուներ դեմոկրատ Բարաք Օբամայի և հանրապետական Ջոն ՄակՔեյնի իրանական քաղաքականության շուրջ արված հայտարարությունների և մոտեցումների ներկայացումը կարող է որոշակիորեն վերհանել տարածաշրջանային զարգացումների համատեքստում հնարավոր զարգացումների ուղեծիրը:

Դեմոկրատ Բարաք Օբամա

Օբամայի համար «Իրանը ծայրահեղ արմատական թեոկրատիա է», որը «հովանավորում է ահաբեկչությունը և տարածաշրջանային ագրեսիան»: Սակայն Օբաման թեկնածուներից միակն է, որը պաշտպանում է բարձր մակարդակում Իրանի հետ բանակցություններ վարելու գաղափարը:

2007թ. հուլիսի 23-ին կայացած բանավեճի ժամանակ⁵² նա ասել է, որ կհանդիպի այնպիսի երկրների նախագահների հետ, ինչպիսին են Իրանը, Սիրիան, Վենեսուելան, Կուբան և Հյուսիսային Կորեան: Նույն ամսին նա իրանական քաղաքականության առնչությամբ պարզաբանել է. «Մենք պետք է կարողանանք ցույց տալ Իրանին և հատկապես Իրանի ժողովրդին, թե ինչ կարող են նրանք ստանալ արմատական փոփոխությունների արդյունքում՝ տնտեսական ներգրավվածություն, անվտանգության

⁵¹ Բազմաթիվ վերլուծաբաններ և նույնիսկ քաղաքական շրջանակներ համարում են, որ ԱՄՆ-ի համար նոր ռազմական գործողությունները Մերձավորարևելյան տարածաշրջանում մոտ ապագայում կարող են լինել աղետալի, իսկ նախկին ռազմական միջոցներով հարցի լուծման հայտարարությունները, թերևս, շարունակվում են, սակայն այսօրվա համաշխարհային գործընթացները՝ թե քաղաքական, թե՛ ռազմական, թե՛ տնտեսական, ստիպում են ԱՄՆ-ի ապագա վարչակազմին որդեգրել առավել մեղմ ու դիվանագիտական և համաշխարհային համագործակցության միջոցներով հարցերի լուծման հնարավոր տարբերակներ:

⁵² Democratic Presidential Debate,

http://www.cfr.org/publication/13876/democratic_debate_transcript_cnnyoutube.html

երաշխիքներ և դիվանագիտական հարաբերություններ. այսինքն՝ մենք պետք է նախ փորձենք «քաղցրաբլիթի» քաղաքականություն վարել (օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցություն միջուկային ծրագրից հրաժարվելու դեպքում), իսկ եթե այնպես ստացվի, որ Իրանը միջուկային զենք ունենալու սահմանագծին մոտ լինի, ապա այդ ժամանակ միայն կմտածենք «ճիպոտի» կիրառման հնարավորությունների մասին»⁵³:

Դեռ 2007թ. ապրիլին նախագահական դեմոկրատական ներկուսակցական բանավեճի ժամանակ Օբաման ասել է. «Ես կարծում եմ մեզ համար սխալ կլինի պատերազմ սկսել Իրանի դեմ», իսկ 2007թ. դեկտեմբերի 3-ին Ազգային հետախուզության գնահատման զեկույցից հետո, համաձայն որի՝ Իրանն իր միջուկային ծրագրերը դադարեցրել էր դեռ 2003թ., Օբաման ավելի հաստատուն դարձավ իր այս պնդման մեջ: Նա համարում է, որ սա լավ հիշեցում է նույն Ազգային հետախուզության գնահատման՝ Իրաքի վերաբերյալ 2002թ. զեկույցի մասին և խորհուրդ է տվել Կոնգրեսի անդամներին այս անգամ լավ ուսումնասիրել հետախուզության հրապարակած գնահատականը մինչև նախագահին ռազմական ուժ կիրառելու արդարացում տալը:

Հատկանշական է, որ նախագահի բոլոր թեկնածուները, խոսելով Ամերիկա-իսրայելական հասարակական հարցերով կոմիտեի ֆորումում, իրենց ելույթում անդրադառնում են ԱՄՆ-ին, Իսրայելին և ողջ աշխարհին սպառնացող հենց իրանական վտանգին:

Իրանի միջուկային զենքի ծրագրի վերաբերյալ Բարաք Օբաման շատ խիստ է արտահայտվում. «Ամբողջ աշխարհը պետք է ջանք չինայի և դադարեցնի Իրանի՝ ուրանի հարստացման ծրագիրը և կանխի Իրանի միջուկային զենք ունենալու հնարավորությունը: Շատ վտանգավոր է, երբ միջուկային զենքը հայտնվում է ռադիկալ թեոկրատիայի ձեռքում»⁵⁴:

Այդ նույն ելույթի ժամանակ Օբաման կրկին անգամ նշում է ռազմական հնարավորության տարբերակի չբացառված լինելու հանգամանքը: «Մենք չենք կարող բացառել որևէ տարբերակ, ներառյալ ռազմական գործողությունները, անընդհատ և ազրեսիվ դիվանագիտությունը պետք է զուգորդված լինի կոշտ պատժամիջոցներով՝ որպես միջուկային զենք ունենալու Իրանի հնարավորությունը կանխելու մեր հիմնական մեթոդ: Իրանի միջուկային զենքը կապակայունացնի տարածաշրջանը և սկիզբ կդնի նոր սպառազինությունների վազքի»:

2008թ. փետրվարի դեմոկրատական բանավեճի ժամանակ Օբաման ասել է. «Ամերիկայի Միացյալ Նահանգների համար շատ կարևոր է խոսել ոչ միայն իր ընկերների, այլև թշնամիների հետ, ներառյալ Իրանի»: Այս ամենը վկայում է Օբամայի՝

⁵³ Sten Obama, Barack, "Renewing American Leadership," Foreign Affairs, July/August 2007,

<http://www.foreignaffairs.org/20070701faessay86401/barack-obama/renewing-americanleadership.html>

⁵⁴ Sten Բարաք Օբամա, American Israel Public Affairs Committee (AIPAC) Policy Forum-ի ելույթը 2007թ Մարտի 2ին, Չիկագո, Բլլինոյ:

առնվազն նախընտրական փուլում դիվանագիտական քայլերին դիմելու մտադրության հաստատականության մասին:

Օբաման, որն ավելի քիչ փորձառություն ունի արտաքին քաղաքականության բնագավառում, քան իր հակառակորդ հանրապետական Ջոն ՄակՔեյնը, 10-օրյա այց է կատարում Մերձավոր Արևելք և Եվրոպա, դրանով փորձելով բարձրացնել իր վարկանիշը՝ միջազգային հարցերում կոմպետենտություն ցուցադրելու միջոցով: Փորձ է անում նաև հեռանալ Բուշի վարչակազմին հատուկ միակողմ քաղաքականության ուղղվածությունից՝ փոխարենը շեշտելով ԱՄՆ-ի ընկերների և դաշնակիցների հետ բազմակողմ հարաբերությունների կարևորությունը:

Օբամայի այցը Գերմանիա, Ֆրանսիա և Մեծ Բրիտանիա հիմնականում ուղղված էր միջատլանտյան հարաբերությունների ուժեղացմանը. համաձայն նրա՝ «հարաբերությունները պետք է հիմնված լինեն համագործակցության և խնդիրների լուծմանն ուղղված համատեղ գործողություններով՝ պաշտպանելու «մեր ընդհանուր անվտանգությունը և առաջ մղելու մեր ընդհանուր հումանիզմը»:

Պատահական չէ, որ հենց Եվրոպայում նա իր գործընկերների հետ քննարկել է նաև տարածաշրջանային խնդիրները՝ ներառյալ իրանականը: Այս այցելությունների արդյունքում Օբաման ավելի ուղղակի հայտարարություններ է արել և հստակեցրել մինչ այդ նրա դիրքորոշումները՝ հատկապես Իրանի միջուկային ծրագրի մասին: Իսրայելում նա ասել է, որ «աշխարհը պետք է կանխի Իրանի միջուկային զենքի ձեռքբերման հնարավորությունը»:

Իսկ Բեռլինում 200000 մարդու առջև նա շեշտել է, որ ԱՄՆ-ը և Եվրոպան պետք է ուղղակի ուղերձներ հղեն Իրանին առ այն, որ Իրանը պետք է հրաժարվի իր միջուկային ձգտումներից:

Նիկոլյա Սարկոզիի հետ մամուլի ասուլիսի ժամանակ Օբաման Իրանին կոչ է արել ընդունել ԵՄ Տրոյկա + 3 առաջարկը և չսպասել մինչև հաջորդ ԱՄՆ նախագահի գալը, քանի որ «Ճնշումները դեռ նոր են սկսվում»: Աջակցելով Բուշի՝ Ուիլյամ Բրընսին Ժնևյան 5+1-ի հանդիպմանը ուղարկելու որոշմանը, նա ասել է, որ Իրանը պետք է այդ քայլը լրջորեն ընդունի:

Հուլիսին Ժնևյան 5+1 ձևաչափով հանդիպմանը Ամերիկայի ներկայացուցչի մասնակցությունը կարևորագույն քայլ էր, քանի որ մինչ այդ ԱՄՆ-ը հայտարարել էր, որ երբեք բանակցությունների չի նստի իրանցիների հետ մինչև Իրանը չդադարի իր միջուկային ծրագիրը: Այս քայլը կարծես նաև խափանում է Օբամայի կողմից ներկա վարչակազմի վարած քաղաքականության նկատմամբ քննադատությունը՝ անուղղակիորեն օգնելով ՄակՔեյնին: Հիշենք նաև, որ այս քայլին նախորդել էին ԱՄՆ-ի կողմից Իրանում դիվանագիտական գրասենյակ բացելու մասին հայտարարությունները:

Այս քայլերը Սպիտակ տունը համարում է «տակտիկական», սակայն արդյո՞ք սրանք միայն կարճաժամկետ տակտիկական քայլեր են, թե՞ իրոք վարչակազմը փորձ է

անում փոխել կուրսը և մեղմացնել իր դիրքորոշումը Իրանի, Հյուսիսիային Կորեայի և «Չարի առանցքի» այլ երկրների նկատմամբ:

Փաստորեն Օբաման, չբացառելով ռազմական լուծման հնարավորությունը, կողմ է արտահայտվում Իրանի՝ «ծայրահեղ արմատական թեոկրատիայի» հետ բարձր դիվանագիտական հանդիպումներին, միջազգային հանրության հետ համատեղ ջանքերով առավել խիստ պատժամիջոցների կիրառմանը և միջուկային զենքի ձեռքբերման իրանական ջանքերի անգիջում խափանմանը:

2008թ. մարտին Օբաման ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից նոր բանաձևի ընդունման առնչությամբ հույս է հայտնել, որ այս անգամ այդ բանաձևը ավելի խիստ կլինի Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ, քան 2006թ. և 2007թ. մարտի բանաձևերը, չնայած միևնույն ժամանակ ասել է, որ հասկանում է, որ Ռուսաստանը և Չինաստանը չեն համաձայնի պատժամիջոցների ուժեղացմանը:

Հասկանալի է, որ Իրանի միջուկային ծրագրի հետ կապված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը և հատկապես դրանց կողմից առավել խիստ պատժամիջոցները ամեն անգամ հույս են ներշնչում, որ Իրանի ղեկավարությունն այս անգամ կենթարկվի և զիջումների կզնա, սակայն արդեն 2008թ. սեպտեմբերի 27-ին ընդունված ՄԱԿ-ի թվով չորրորդ բանաձևը, որը նոր պատժամիջոցներ չի սահմանում, այլ միայն վերահաստատում է նախորդ երեք բանաձևերի պահանջների անհապաղ իրականացման անհրաժեշտությունը, ցույց է տալիս մեկ բան, որ Իրանը կարծես թե չի գնում զիջումների և կամ բավարարված չէ զիջումների գնալու դիմաց առաջարկվող պայմաններով:

Հանրապետական Չոն ՄակՔեյն

Նախագահի թեկնածու սենատոր ՄակՔեյնն իր 2007թ. նոյեմբերի ելույթներից մեկի ժամանակ հայտարարել է, որ Ամերիկյան կարիք ունի այնպիսի նախագահի, որը կկարողանա վերակենդանացնել երկրի նպատակներն ու դիրքն աշխարհում, հաղթանակ տանել ահաբեկիչ թշնամիների դեմ, որոնք վտանգում են ազատությունները տանը և դրսում, և որը կկարողանա կառուցել կայուն խաղաղություն⁵⁵: Անդրադառնալով վերջին տարիների ոչ ճիշտ կառավարմանն ու անհաջողություններին Իրաքում՝ նա ասել է, որ այդ ամենը ցույց տվեց, որ Ամերիկյան պետք է պատերազմի դիմի միայն համապատասխան ռազմական պատրաստվածության և հաջողության իրատեսական և համակողմանի ծրագիր ունենալու դեպքում⁵⁶:

⁵⁵ Stu` John McCain, An Enduring Peace Built on Freedom: Securing America's Future, Foreign Affairs, November/December 2007

⁵⁶ Նույն տեղում:

ՄակՔեյնի ինտերնետային կայքում տեղակայված ինֆորմացիայի համաձայն՝ «Իրանը դիկտատուրա է, որը աջակցում և խրախուսում է բռնություններն Իրաքում» և «մարզում է ամենից ագրեսիվ շիական բնակչությանը»⁵⁷:

Մերձավոր Արևելք կատարած ճանապարհորդության ժամանակ Ջ.ՄակՔեյնն անհանգստություն էր հայտնել «Հիզբուլլահի իրանական աջակցության և նրա վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ Իրանի ձգտումների վերաբերյալ»: Նա սովորաբար ասում է, որ Իրանում ռազմական ուժի կիրառումը կլինի վերջին հնարավոր տարբերակը, բայց երբեք այդ հարցը «սեղանի վրայից չի վերցվի»:

Հետաքրքրական է 2008թ. հունիսի 2-ին Ջ.ՄակՔեյնի՝ Վաշինգթոնում Ամերիկա-իսրայելական հասարակական գործերով կոմիտեի (American Israel Public Affairs Committee, AIPAC) քաղաքականության մշակման կոնֆերանսի ելույթը, որը նվիրված էր իրանական խնդրին: Խոսելով անվտանգության մասին՝ նա ասում է. «Իրանն այսօր մնում է ահաբեկչության գլխավոր հովանավորն աշխարհում և վտանգում է ողջ Մերձավոր Արևելքը՝ Բասրայից Բեյրութ»:

ՄակՔեյնը, ինչպես և Բարաք Օբաման, Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ունի իր անզիջում մոտեցումը. «Թեհրանի միջուկային զենքի ստեղծման շարունակական ծրագրերը անընդունելի վտանգ են ներկայացնում, որը մենք չենք կարող թույլ տալ: Միջուկային զենքի ձեռքբերմամբ Իրանն իրեն ավելի ազատ կզգա ահաբեկիչներին հովանավորելու և իր յուրաքանչյուր թշնամու վրա հարձակվելու տեսանկյունից»:

«Մեր բոլորի մտքում թեհրանյան ռեժիմի կողմից սպառնացող վտանգներն են: Իրանի նախագահը հայտարարում է, որ «կջնջի քարտեզի վրայից Իսրայելը» և առաջարկում է, որ Իսրայելի հրեա ժողովուրդը վերադառնա Եվրոպա: «Իրանական ռեժիմն այսօր ուղղակիորեն սպառնում է Իսրայելի և ԱՄՆ-ի շահերին», այսպես է արտահայտվել Ամերիկա-իսրայելական հասարակական գործերով կոմիտեի (American Israel Public Affairs Committee, AIPAC) առջև:

Ինչ վերաբերում է Իրանի հետ խոսելու և բանակցությունների միջոցով հարցի լուծման մոտեցմանը, ՄակՔեյնն ասել է. «Առանց նախապայմանների Իրանի նախագահի կամ հոգևոր գերագույն առաջնորդի հետ սեղանի շուրջ նստելուց առաջ, մենք պետք է ստեղծենք իրական համաշխարհային ճնշում, որը կլինի խաղաղ, սակայն կկարողանա փոխել նրանց ճանապարհը, որով նրանք ընթանում են»⁵⁸: Նա նաև ավելացնում է, որ իրականում, եթե հիշենք, մի շարք ամերիկյան վարչակազմեր փորձել են խոսել Իրանի հետ, և դրանցից ամենից ավելի մեծ թափով՝ Քլինթոնի վարչակազմը: Մակայն Իրանը մերժում է յուրաքանչյուր ամերիկյան փորձ»:

⁵⁷ Տե՛ս՝ <http://www.johnmccain.com/>

⁵⁸ Տե՛ս՝ American Israel Public Affairs Committee, AIPAC կոնֆերանսի ելույթը, Հունիսի 2, 2008:

Իրանի խնդրի լուծման համար ՄակՔեյնը, ինչպես և Բարաք Օբաման, հայտարարում է. «Մենք նաև պետք է աջակցենք տարածաշրջանային այն երկրներին, որոնք ավելի շատ են անհանգստացած Իրանի քաղաքականությամբ և համագործակցենք մեր եվրոպական դաշնակիցների հետ: Նրանք կարող են օգնել պատժամիջոցների կիրառման հարցում, ինչը թանկ կնստի ռեժիմի առաջնորդների վրա՝ ներառյալ նրանց վիզաներ չտրամադրելը և նրանց միջոցների սառեցումը»:

ՄակՔեյնը, Իրաքը համարելով «ահաբեկիչների պոտենցիալ ապաստարան», որը լուրջ վտանգ կներկայացնի ԱՄՆ-ի, Իսրայելի և մյուս ընկեր-դաշնակիցների անվտանգության համար, ներխուժման և ներթափանցման հնարավորություն կստեղծի Իրաքի հարևանների համար՝ հատկապես նկատի ունենալով Իրանը: ՄակՔեյնը հայտարարել է. «Մենք չպետք է թույլ տանք դա: Մենք չպետք է թողնենք տարածաշրջանը քառսի մեջ և չպետք է թույլատրենք ահաբեկչական բռնություն կամ պատերազմ»:

2007թ. հուլիսին ՄակՔեյնը պաշտպանել է սանկցիաների և ներդրումների սառեցման քաղաքականությունը: Ըստ ՄակՔեյնի՝ հարցի ռազմական լուծմանը պետք է դիմել միայն ծայրահեղ դեպքում, այսինքն՝ երբ չեն լինի Իրանի միջուկային զենքի ստեղծման զարգացման հնարավորությունները կանխելու այլ տարբերակներ:

ՄակՔեյնը 2007թ հոկտեմբերի 16-ին տված հարցազրույցի ժամանակ ասել է, որ չի կարծում, թե Իրանի հետ բախումը այդքան անխուսափելի է և համարում է, որ ԱՄՆ-ը կարող է փորձել դիվանագիտական միջոցներով հարցի կարգավորումը մինչև ռազմական գործողությունների դիմելը: Նա ասել է. «Կա միայն մեկ ավելի վատ բան, քան ռազմական գործողություններն Իրանի դեմ, և դա միջուկային զենքով զինված Իրանն է»: Նա նաև դեմ է արտահայտվում առանց նախապայմանների բանակցային գործընթաց սկսելուն՝ հատկապես «տարածաշրջանի երկու դիկտատուրաների՝ Իրանի և Սիրիայի հետ»⁵⁹:

ՄակՔեյնը պատժամիջոցների կիրառման իր ծրագիրն ունի. «Մենք պետք է սեփականաշնորհենք պատժամիջոցներն Իրանի դեմ՝ սկսելով համաշխարհային ապակապիտալացման (ներդրումների սառեցման կամ դուրս բերման) մի արշավ: Ինչքան շատ մարդիկ, ձեռնարկատիրություններ, թոշակային ֆոնդեր և ֆինանսական ինստիտուտներ աշխարհով մեկ իրենց կապիտալները դուրս բերեն այն ընկերություններից, որոնք աշխատում են Իրանի հետ, այնքան ռադիկալ էլիտան, որը ղեկավարում է այսօր այդ երկիրը, ավելի քիչ հեղինակություն կվայելի: Տարիներ առաջ քաղաքակիրթ ազգերի բարոյական հստակությունը և հաստատակամությունը միասնական հանդես եկան ապակապիտալացման մի արշավով Հարավային Աֆրիկայի դեմ՝ դրանով ազատելով այդ ժողովրդին չար ապարտեիդից: Մեր օրերում մենք պետք է օգտագործենք այդ նույն ուժը և բարոյական հաստատակամությունը Իրանի

⁵⁹ McCain, John, "Strategy for Victory in Iraq," <http://www.johnmccain.com/Informing/Issues/fdeb03a7-30b0-4ece-8e34-4c7ea83f11d8.htm>

վարչակազմի դեմ և օգնենք պաշտպանել Իսրայելի մարդկանց և խաղաղությունն աշխարհում»⁶⁰:

Փաստորեն, չնայած այս հարցի նկատմամբ թեկնածուների կողմից վերբալ մակարդակում որոշակի տարբերություններին՝ այնուամենայնիվ, նրանք բոլորն էլ բացահայտ դեմ են Իրանին որևէ կերպ միջուկային զենքի ձեռքբերման հնարավորություն տալուն: Այդ համատեքստում բոլոր թեկնածուներն էլ գտնում են, որ ռազմական լուծումը շարունակում է «սեղանին մնալ»: Այս հարցի վերաբերյալ թեկնածուների միասնականությունը դիտարկվում է իբրև իրանական ներկա ռեժիմի և ամերիկյան քաղաքական մշակույթ-մտածելակերպի միջև եղած սկզբունքային անհամաձայնությունների և տարբերությունների համատեքստում, որոնց միջև տարբերությունները հասկանալուն ուղղված քայլերը կարծես արդյունավետ չեն:

Վերոնշյալ տարբերությունները և նմանությունները հաշվի առնելով՝ այնուամենայնիվ կարծես այսօր ԱՄՆ-ում միայն երկու տարբերակ է քննարկվում իրանական հարցի վերաբերյալ. ինչպես Բուշ Կրտսերը, ՄակՔեյնը, նաև Օբաման Իրանի համար տեսնում են երկու ելք. «Իրանը կամ կփոխի իր պահվածքը և վերաբերմունքը և ամբողջովին կինտեգրվի միջազգային հանրությանը, կամ կշարունակի իր միջուկային ծրագրի զարգացումը և ստիպված կլինի դիմակայել անընդհատ աճող ճնշումներին և պատժամիջոցներին, որոնք կկիրառվեն միջազգային հանրության կողմից»:

Կարևոր է նաև որոշակի ուշադրություն դարձնել Ամերիկայի հաջորդ նախագահի թեկնածուների կողմից ընտրված երկրորդ դեմքերի՝ փոխնախագահների՝ իրանական քաղաքականության հարցում ունեցած դիրքորոշումների վրա:

Դեմոկրատական փոխնախագահի թեկնածու՝ սենատոր Ջոզեֆ Բայդենը մշտապես կողմնակից է եղել Իրանի հետ հարաբերություններում ռեալիստական հաշվեկշիռ-քաղաքականությանը:

Նա կոչ է արել իրագործել Իրանի նկատմամբ «կոորդինացված միջազգային պատժամիջոցներ»՝ ավելացնելով. «Մենք պետք է իրականացնենք այս ճնշումները՝ ներկայացնելով մանրակրկիտ, դրական տեսլական ԱՄՆ-Իրան հարաբերությունների համար, եթե Իրանը իհարկե ճիշտ քայլեր անի»:

Բայդենը, ինչպես և մնացածը, չի թաքցնում Իրանի հետ պատերազմի հավանականությունը, սակայն Իրանի հետ պատերազմը համարում է «ոչ միայն վատ, այլև աղետալի երևույթ»:

Բայդենը նաև սպառնացել էր իմփիչմենտի գործընթաց սկսել նախագահ Բուշի դեմ, եթե վերջինը Իրանի դեմ պատերազմ սկսի առանց կոնգրեսի կողմից հաստատում ստանալու:

⁶⁰ Տես՝ Ջոն ՄակՔեյնի Վաշինգթոնում Ամերիկա-իսրայելական հասարակական գործերով կոմիտեի (American Israel Public Affairs Committee, AIPAC) քաղաքականության կոնֆերանսի ելույթը, 2008թ հունիսի 2-ին:

Օգոստոսի 27-ին Դեմոկրատական համագումարի ելույթում նա անդրադարձել է իրանական հարցին նման ձևակերպմամբ. «Արդյո՞ք մենք պետք է վստահենք Ջոն ՄակՔեյնին, եթե նա ժխտում է Իրանի հետ խոսելու փորձերը և հարցադրում անում, «ինչի՞ մասին պետք է խոսենք», թե՞ վստահենք Բարաք Օբամային, ով ասում է, որ մենք պետք է խոսենք Իրանի հետ և հստակ ցույց տանք Իրանին, որ նրա ղեկավարությունը պետք է փոխվի: Այսօր արդեն յոթ տարի ժխտումից հետո նույնիսկ Բուշի վարչակազմն է ընդունում, որ պետք է խոսել Իրանի հետ, քանի որ դա է լավագույն ճանապարհը մեր անվտանգության ապահովման համար»⁶¹:

Հանրապետական փոխնախագահի թեկնածու Սառա Փեյլինն ասել է. «Միջուկային Իրանը Մահմուդ Ահմադինեժադի նախագահության ժամանակ կլինի չափազանց վտանգավոր աշխարհի յուրաքանչյուր մարդու համար»: Այս և նման հայտարարությունները կարծես մեկ անգամ ևս շեշտում են ամերիկյան կողմի՝ Իրանի ներկա քաղաքական ռեժիմի նկատմամբ անվստահության և խնդիրների լուծման հիմնական խոչընդոտ դիտարկելու դիրքորոշումը:

2008թ. սեպտեմբերին ABC News-ին տված հարցազրույցի ժամանակ Փեյլինն ասել է, որ ԱՄՆ-ը և իր դաշնակիցները պետք է «դիվանագիտական ճնշումներ» իրականացնեն Իրանի նկատմամբ, որպեսզի կարողանան երաշխիքներ ունենալ, որ Իրանը միջուկային զենք ձեռք չի բերի: «ԱՄՆ-ը պետք է «հետևողական լինի» և «իրականացնի» ճնշումները Իրանի նկատմամբ. մենք չենք կարող նահանջել»: Այն հարցին, թե ինչպես պետք է ԱՄՆ-ը վարվի, եթե Իսրայելը հարձակվի Իրանի միջուկային կարողությունների վրա, Փեյլինն ասել է. «ԱՄՆ-ը չի կարող կասկածի տակ դնել այն քայլերը, որոնք Իսրայելը կձեռնարկի իրեն պաշտպանելու համար»:

Եթե փորձենք ընդհանրացնել և գնահատել երկու թեկնածուների ելույթները Իրանի հարցում, պարզ է դառնում, որ խորքային «անհերքելի» կամ «անփոփոխ» ոչինչ չի ասվում, որը հնարավոր չլինի փոխել հետագայում քաղաքականության իրագործման փուլում. որ բնեռն էլ, որ որդեգրելու լինեն՝ սկսած «առանց նախապայմանների բանակցություններից» (Բարաք Օբամա), ավարտած «ոչ մի դեպքում բանակցությունների սեղանի շուրջ չնստել մինչև միջուկային ծրագրի ողջ գործընթացի դադարեցումը» (Ջոն ՄակՔեյն):

Այս համատեքստում նախագահի թեկնածուների կողմից «Իրանական հարցի» լուծման ռազմական տարբերակը պետք չէ բացառել. թեև այն ավելի անզիջում և հավանական է ՄակՔեյնի, և առավել քիչ հավանական Օբամայի նախագահ դառնալու

⁶¹ Տե՛ս Դեմոկրատական համագումարին Բայդենի փոխնախագահի պաշտոնում իր թեկնածության ընդունելության ճառը, available at: http://www.cfr.org/publication/17079/bidens_nomination_acceptance_speech_democratic_convention.html

դեպքում: Սա, թերևս, համաշխարհային հարաբերություններում նոր քառասյին իրավիճակի կհանգեցնի:

Ակնհայտ է, որ եթե ամերիկյան նախագահի թեկնածուները այս նախընտրական փուլում փորձում են իրենց այս կամ այն հարցի շուրջ ունեցած տարբերությունների վրա շահել ընտրողների ձայները, այնուամենայնիվ ստիպված են լինելու իրականում դիմակայել արտաքին քաղաքականության խնդիրներին՝ հաշվի առնելով երկրի թե՛ ներքին տնտեսական, քաղաքական, ռազմական հնարավորությունները, թե՛ փոփոխությունները արտաքին բազմակողմ հարաբերություններում:

ՔՃՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ≥ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՆԱԽՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Ս. Համազասայան

Հոդվածում դիտարկվում են Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակաշրջանները նկարագրող երկու առանցքային փաստաթղթեր՝ Ֆ. Ռուզվելտի շարլոտսվիլյան և Ու. Չերչիլի ֆուլտոնյան ելույթները, անդրադարձ է կատարվում այն «դիցաստեղծային» ազդեցությանը, որ վերջիններս թողել են հանրային գիտակցության ձևավորման վրա: Հոդվածում փորձ է արվում նաև բացահայտել ժամանակակից քաղաքական միջերի առանձնահատկությունները և դրանց զարգացման դինամիկան:

Նախաբան

Դեմոկրատիա (ժողովրդավարություն) հասկացության բազում սահմանումներն ու մեկնաբանությունները ցույց են տալիս ոչ միայն փիլիսոփայական, քաղաքական մտքի զարգացումը, այլև ժողովրդավարության՝ որպես պետական կառավարման ձևի վերափոխումները՝ սկսած հին Հունաստանում և կայսրության վերածված Հռոմում ժողովրդավարական գաղափարների ձևավորումից մինչև ժողովրդավարության ժամանակակից դրսևորումներ: Այսօր հաճախ դեմոկրատիան մեկնաբանվում է իբրև ազատ և ուղղակի ընտրությունների միջոցով իշխանության ձևավորման մեխանիզմի ապահովում: Ժողովրդավարություն հասկացությունը միատարր չէ, այն ասես բազում թելերից հյուսված գործվածք լինի: Տվյալ դեպքում այդ «թելերը» կոնկրետ գաղափարներ են, ինստիտուտներ, որոնք միահյուսված են յուրաքանչյուր ժողովրդի մշակութային, պատմական և աշխարհագրական ժառանգության խճանկարի մեջ:

Անգլոսաքսոնյան ժողովրդավարության հիմքերը անդրադառնում են դեռևս 1215թ. ստորագրված Ազատությունների մեծ խարտիային: Այս փաստաթուղթը իր անմիջական արտացոլումն է գտել 1776թ. ԱՄՆ-ում ընդունված անկախության հռչակագրում: Ամերիկյան ժողովրդավարությունը, որն իր վրա կրել է Մեծ Բրիտանիայում ձևավորված ժողովրդավարական ինստիտուտների ազդեցությունը, ձևավորման պատմական առանձնահատկությունների հետևանքով որոշակիորեն տարբերվում է արևմտաեվրոպական ժողովրդավարության դրսևորումներից:

Այսպես, ամերիկյան ժողովրդավարության հիմքում ընկած ազատության գաղափարը այնքան լայն ու համապարփակ իմաստ է ձեռք բերել, որ այսօր բազմաթիվ հրապարակումներում, ելույթներում «ժողովրդավարությունն» ու «ազատությունը» հաճախ վերածվում են հոմանիշների: Սկզբնական շրջանում ամերիկյան ազատության գաղափարը զգալի չափով խարսխված էր տնտեսական ազատությունների գաղափարի

վրա: Մակայն այս համատեքստում էական նշանակություն է ունեցել նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը իր պատմական ուղին սկսել է իբրև նոր ձևավորվող պետություն, և արևմտաեվրոպական ժողովրդավարության հիմք հանդիսացող հավասարության գաղափարը այս պարագայում իր գերակա տեղը զիջել է «ազատության» գաղափարին, տնտեսական ազատությունների երաշխավորման ձգտումը ժամանակի ընթացքում վերաճել է քաղաքացիական իրավունքների և անհատի ազատության սկզբունքի գերակայության:

20-րդ դ. ԱՄՆ-ի ազդեցության ընդլայնման արդյունքում ժողովրդավարական սկզբունքները անկասելիորեն սկսեցին տարածվել ազդեցության համապատասխան գոտիներում, ժողովրդավարական նորմերի ընդունումն ու պահպանումը՝ նույնացվել «քաղաքակրթություն» հասկացության հետ:

20-րդ դ. երկրորդ կեսին ժողովրդավարությունը սուկ պետական կառավարման ձևից վերածվեց արտաքին քաղաքականության կարևորագույն գործոնի: Ձեռք բերելով արտաքին ազդեցության որոշակի լծակներ՝ այս փուլում ժողովրդավարացման գործընթացը դառնում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը:

Ընդհանուր առմամբ, 20-րդ դ. ամերիկյան արտաքին քաղաքական ռազմավարությունը կարելի է բնութագրել երկու ուղղվածությամբ. պարփակում ամերիկյա մայրցամաքի սահամաններում, որը դրսևորվում է իզոլյացիոնիստական գաղափարախոսությամբ և ամերիկյան արժեքների, գաղափարների, նաև, ամենալայն իմաստով, ամերիկյան արտադրանքի՝ այդ թվում նաև ժողովրդավարության ամերիկյան մեկնաբանության պրոպագանդամբ և տարածմամբ: Անցումը մեկ ռազմավարությունից մյուսին ամերիկյան քաղաքական գործիչները հիմնավորում են հիմնականում ոչ միայն աշխարհաքաղաքական, տնտեսական կամ այլ նկատառումներով, այլ այն առանձնահատուկ առաքելությամբ, որն ունի իրենց պետությունը, որը պետք է իրականացվի հանուն կայունության, անվտանգության պահպանման, ինչպես նաև հանուն ամերիկյան գերակա արժեքների՝ ժողովրդավարության և հիմնարար ազատությունների պաշտպանության:

Ժողովրդավարության ամերիկյան մեկնաբանման իմացաբանական հիմքերը: Ֆ.Դ. Ռուզվելտի շարլոտսվիլյան ելույթը

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն առաջ էր բերել խոր անտարբերության ալիք անգամ հաղթանակած երկրներում և գրեթե անխուսափելիորեն այդ փուլին հաջորդեցին մեծ դեպրեսիայի տարիները, ինչը և հանգեցրեց ԱՄՆ-ում իզոլյացիոնիստական գաղափարախոսության նոր ալիքի բարձրացման: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն այդ տարիներին մեծապես պայմանավորված էր վերոնշյալ գաղափարախոսությամբ: Դեռ ավելին, պացիֆիստական շարժումը խորը

արմատներ գցեց՝ տարածելով այն գաղափարը, որ ԱՄՆ-ը պետք է զերծ մնա համաշխարհային գործընթացներին ակտիվ միջամտելուց:

Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը որոշակիորեն բեկում մտցրեց մինչ այդ երկրում տիրող տրամադրությունների մեջ: Նման զարգացումների լույսի ներքո, ԱՄՆ-ի կառավարությանն անհրաժեշտ էր հասարակության աջակցությունը՝ համաշխարհային գործընթացներին կրկին ակտիվորեն միջամտելու համար:

Այսպիսով, ԱՄՆ-ի իշխանությունների՝ մասնավորապես նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտի առջև դրված էր քաղաքական ռազմավարության փոփոխությունը հիմնավորելու, գործողությունները լեգիտիմացնելու անհրաժեշտությունը:

1940թ. հունիսի 10-ին էլույթ ունենալով Վիրջինիա նահանգում՝ Շարլոթսվիլում, ԱՄՆ-ի նախագահը հանդես է գալիս իզոլացիոնիզմի սուր քննադատությամբ և փաստորեն ազդարարում համաշխարհային գործընթացներ ԱՄՆ-ի վերստին մուտք գործելու մասին: Հիմնավորելով իզոլացիոնիզմից հրաժարվելու անհրաժեշտությունը՝ Ֆ. Ռուզվելտը հղում է ամերիկյան պետության և հասարակության հիմնարար արժեքներին՝ ազատությանն ու ժողովրդավարությանը, մասնավորապես նշելով, որ այն հարցը, թե «ինչ է սպասում ապագայում ոչ միայն մեր երկրին, այլ նաև թե ինչ ապագա է սպասում բոլոր ժողովուրդներին ու երկրներին, որոնք ապրում են ժողովրդավարական կարգի ներքո, մտահոգում է ամերիկյան երիտասարդ սերնդին»⁶²: Իր շարլոտսվիլյան էլույթում ԱՄՆ-ի նախագահը շեշտը դնում է այն հանգամանքի վրա, որ վտանգը սպառնում է ազատության և ժողովրդավարության գաղափարներին ընդհանրապես:

«Մենք բոլորս պետք է գիտակցենք մի պարզ ճշմարտություն. մենք, իբրև ժողովրդ, և սա վերաբերում է ամերիկյան բոլոր ժողովուրդներին, համոզված ենք, որ ուժի և ատելության աստվածների հաղթանակը կվտանգի ժողովրդավարական ինստիտուտների գոյությունը արևմուտքում, և մեր համերաշխությունն ենք հայտնում այն ժողովուրդներին, որոնք այսօր իրենց կյանքն ու արյունն են ոթում այդ ուժերի դեմ պայքարում»⁶³:

Ակնհայտ է, որ օգտագործելով «ուժի և ատելության աստվածներ» արտահայտությունը և անդրադառնալով ժողովրդավարության ինստիտուտների պահպանման գերակա խնդրին՝ նախագահ Ֆ. Ռուզվելտը որոշակիորեն պատկերում է բարի և չար ուժերի բախումը՝ քաղաքական դիցաստեղծման կանոնների համաձայն:

Որպեսզի քաղաքական միջբլ վերածվի քաղաքական գործընթացի գործուն բաղադրիչի, այն պետք է մշակվի պատմական պահի իրավիճակին համահունչ⁶⁴:

⁶² Edited by Melvin I. Urofsky, Basic Readings in US Democracy. United States Information Agency. Division for the Study of the United States, Washington D.C. 1994. p. 311.

⁶³ Նույն տեղում՝ էջ 312.

⁶⁴ Н. Шестов, Политический миф: теперь и прежде, Олма -Пресс. Москва 2005, стр.139

Ցանկացած միֆի ընկալման համար անհրաժեշտ է համապատասխան միջավայր: Տարբեր քաղաքական պայմաններում, տարբեր պատմական իրավիճակներում կիրառվում են միֆաստեղծման այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համահունչ են տվյալ պայմաններին⁶⁵:

Դիցաստեղծման գործընթացը կարող է արտացոլվել ինչպես ճառերում, ելույթներում, գեղարվեստում, այնպես էլ տարբեր ծեսերում, հասարակական տարբեր արարողություններում և այլն⁶⁶: Միֆաստեղծման նպատակով կիրառվում են այն ընդհանուր տեխնոլոգիական միջոցները, որոնց մասին խոսել է Է. Կասսիրերը, այն է՝ լեզվի գործառույթի փոփոխություն, համապատասխան քաղաքական արարողություններ, կանխատեսումների իրականացում:

Ընդհանրապես քսաներորդ դարի քաղաքական տեխնոլոգիաների զարգացման մեջ մեծ տեղ է գրավել քաղաքական միֆերի ստեղծումը: Պետք է առանձնացնել հատկապես այն հանգամանքը, որ այդ միֆերի առանցքն է կազմում ժողովրդավարություն հասկացությունը, որը լայնորեն «գովազդվում» է նաև այսօր:

Այն հարցը, թե ինչու է ժամանակակից քաղաքական տեխնոլոգիաներում անմիջական անդրադարձ կատարվում միֆերին, դիցաստեղծմանը, լուսաբանման կարիք ունի: Առանձնացվում է այն հանգամանքը, որ միֆերում աշխարհն առավել հասկանալի է ու ըմբռնելի: Սա, թերևս միֆի ամենատեսակի հատկանիշներից է: Ահա թե ինչու իրենց ելույթներում քաղաքական գործիչները հաճախ դիմում են նման միջոցների՝ իրենց խոսքն առավել վառ ու ազդեցիկ դարձնելու նպատակով:

Միֆը ընդհանրացված պատկերացում է իրականության մասին, որն իր մեջ ընդգրկում է բարոյական կողմնորոշիչներ՝ միավորելով իրականությունը և առեղծվածայինը: Համեմատությունների անցկացման միջոցով ի հայտ են բերվում որոշակի նմանություններ անցյալի փորձի հետ և վերոնշյալ զուգահեռների միջոցով իրավիճակը կրկին որոշակի դիցաբանական հարթություն մեջ է ներկայացվում:

Էական իռացիոնալ տարր կրող միֆերը վերածվում են ավանդույթի բաղադրիչների և կարևոր դեր են խաղում հասարակական կարգի լեգիտիմացման գործում, մասնավորապես իդեոկրատիկ պետություններում: Միֆերի կառուցվածքը և դրանց ընկալումը հասարակության կողմից խոր հետազոտության առարկա է հանդիսացել: Ստրուկտուրալիզմը, ձևավորվելով իբրև փիլոսոփայական ուղղություն, մեծապես նպաստել է այս երևույթի ուսումնասիրությանը:

Ժամանակակից քաղաքական միֆերը չեն կարգավորում կամ արգելում որևէ գործողություն: Դրանք ավելի շուտ վերափոխում են մարդկանց, որպեսզի հետո կարողանան կառավարել վերջիններիս գործողությունները: Քաղաքական միֆերը, ինչպես նկատում է վերլուծաբան Ս. Կարա-Մուրզան, գործում են այնպես, ինչպես

⁶⁵ նույն տեղ.՝ էջ 143

⁶⁶ European Journal of Social Theory 9(3) Rethinking Political Myth; The Clash of Civilizations as a Self-Fulfilling Prophecy; Chiara Bottici and BenoSt Challand. p 320.

ճագարի վրա հարձակվելուց առաջ ազդում է վիշապ օձը. նրանք պարզապես քարացնում և անշարժացնում են իրենց զոհին⁶⁷:

Քաղաքական միջերը տարբերվում են դիսկուրսի մյուս տեսակներից նրանով, որ ա) խտացված կերպով վերարտադրում են իրողության կարևորագույն ասպեկտները, բ) ներկայացվող պատկերացումները կիսում են որոշակի խմբի ներկայացուցիչներ, գ) անդրադառնում են հատկապես քաղաքական այն իրողությանը, որում գտնվում է տվյալ խումբը⁶⁸:

Պարզելու համար՝ արդյոք շարադրված այս կամ այն տեքստը, նյութը քաղաքական միջ է թե ոչ, անհրաժեշտ է անդրադառնալ ոչ միայն դրա մշակմանը, ստեղծմանը, այլ առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե ինչպե՞ս է այն ընկալվում⁶⁹: Նշենք նաև, որ քաղաքական միջերը այն մեխանիզմներն են, որոնց միջոցով մենք ընկալում ենք աշխարհը, նայում ենք աշխարհին ու գործում տվյալ հասարակական խմբի շրջանակներում⁷⁰:

Քաղաքական միջ ենք անվանում դիսկուրսի այն տեսակը, որը «հանրային հիշողության» մեջ պահպանում է ժողովրդի ձեռք բերած փորձը, որն իր հերթին անմիջականորեն կապված է վերջինիս ինքնակազմակերպման և կառավարման ինստիտուտների գործունեության հետ:

Քաղաքական միջերն իրենց կառուցվածքում պարունակում են.

1. որևէ իրավիճակային նախատիպ, որը կապված է հասարակական կարգավորմանն առնչվող միջոցառումների իրականացման հետ կամ պարտադրման հետ (եթե... ապա... օր.՝ եթե ժողովրդավարական չես, ուրեմն քաղաքակիրթ չես),
2. էմպիրիկ ճանապարհով ստացված և նախատիպով ամրապնդված որևէ կոնկրետ փորձի բովանդակություն (օր.՝ եթե քաղաքակիրթ չես այսինքն՝ ժողովրդավար չես ու տիրապետում ես մասսայական բնաջնջման զենքին, ապա սպառնում ես միջազգային հանրության անվտանգությանը),
3. այլաբանական կերպարներ, որոնց ֆունկցիոնալ, խորհրդանշական իմաստը հարադրում է «ցանկալին» «անհրաժեշտի» հետ⁷¹:

Հասարակական գիտակցության տեսանկյունից քաղաքական միջերը ծառայում են իբրև քաղաքական որոշումների լեգիտիմացման միջոց:

Քաղաքական միջի հիմնական ֆունկցիաներն են.

⁶⁷ www.kara-murza.ru

⁶⁸ European Journal of Social Theory 9(3). 3Rethinking Political Myth; The Clash of Civilizations as a Self-Fulfilling Prophecy, Chiara Bottici and BenoSt Challand. p 320,

⁶⁹ տես՝ նույն տեղում

⁷⁰ տես՝ նույն տեղում էջ 321

⁷¹ В. Полосин, Миф, религия, государство, Ладамир, М., 1999, стр. 169.

1. ընդհանրական քաղաքական փորձի պահպանումը այլաբանությունների միջոցով, որոնք և համադրվում են բացարձակ կայունության մասին պատկերացման հետ (օր.՝ Ք. Փաուելի կողմից մշակված «մերժյալ երկրների» թեզը, Ռ. Ռեյգանի «չարիքի կայսրություն» և Ջ. Բուշի «չարիքի առանցք» ձևակերպումները),
2. տվյալ փորձի վերարտադրումը գաղափարախոսության մեջ և քաղաքական ծեսերում (օր.՝ ինսուգուրացիոն ելույթներ, ժողովրդավարության տարածումն իբրև անվտանգության ապահովման անհրաժեշտ պայման),
3. հասարակության, առանձին սոցիալական խմբերի և միավորումների ցանկությունների ու պահանջների համադրումը համընդհանուր փորձառության հետ, որոնք ընդհանրացված են մինչև նախատիպերի մակարդակ⁷²:

Շարլոտսվիլյան ելույթում նախագահ Ֆ. Ռուզվելտը մասնավորապես նշում է. «Այսօր՝ 1940թ. հունիս ամսի տասներորդ օրը, ամերիկյան ժողովրդավարության առաջին ուսուցչի կողմից հիմնադրված համալսարանում մենք մեր հույսի աղոթքն ենք հղում առ Աստված բոլոր նրանց համար, ովքեր օվկիանոսի մյուս ափում խիզախորեն իրենց ազատության համար պայքար են մղում»⁷³:

Սա մի յուրահատուկ կոչ է աջակցելու այն երկրներին, որոնք պայքարում են նացիստական Գերմանիայի դեմ՝ հետևելով չարիքի դեմ ռուզվելտյան հռետորությանը, և այս կոչում հիմնական շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ վտանգված է ազատությունն ու ժողովրդավարությունը, և որ համաշխարհային հանրության առջև ծառայած վտանգը չեզոքացնելու պատմական առաքելությունն ընկել է ամերիկյան ժողովրդի ուսերին: Ֆ.Ռուզվելտը շեշտադրում է այն գաղափարը, թե տարածվող, ինչպես ինքն է անվանում, «ուժի փիլիսոփայությունը» ոչ մի կերպ չի կարող արմատներ գցել ու որևէ հիմք ունենալ այն ժողովրդի կյանքում կամ ապագա պատմության մեջ, որի ակունքները հասնում են ժամանակակից ժողովրդավարության բնօրրաններ Ջեյմսթաուն⁷⁴ և Փլիմութ Ռոք⁷⁵: «Նրանք, ովքեր սերում են հինավուրց այս սերմնացանից, և նրանք, ովքեր այստեղ են հաստատվել ավելի ուշ, չեն կարող անտարբեր մնալ օվկիանոսի մյուս ափում գտնվող իրենց նախնիների հայրենիքում ազատության

⁷² В. Полосин, Миф, религия, государство, Ладамир, М., 1999, стр. 171

⁷³ Edited by Melvin I. Urofsky Basic Readings in US Democracy.. United States Information Agency. Division for the Study of the United States, Washington D.C. 1994. p.314.

⁷⁴ Ինչպես Արևելքն ունի իր Մեքքան՝ Երուսաղեմը, այդպես էլ Ամերիկայի սրբավայրերից են հայրենասիրության և ազատատենչության տաճարները, որոնցից է Ջեյմսթաունը:

⁷⁵ Փլիմութը Մասաչուսեթս նահանգի հարավարևելյան հատվածում գտնվող քաղաքներից է, որը Նյու Ինգլանդում եվրոպացիների առաջին մշտական բնակավայրն է եղել: Այստեղ ժամանածները անգլիացի սեպարատիստներ էին, որոնք 1620 թ.-ին հիմնեցին Փլիմուսի գաղութը Նյու Ինգլանդում: 17-րդ դարի առաջին տարիներին սակավաթիվ անգլիացի մաքրակրոններ հեռացան անգլիական եկեղեցուց, քանի որ գտնում էին, որ այն ավարտին չի հասցնում ռեֆորմացիայի գործը:

ոչնչացման հանդեպ»⁷⁶: «Մեր ժողովրդի սերը ազատության հանդեպ զորավոր է և ամուր նան այսօր»⁷⁷,- շեշտում է իր ելույթում նախագահը:

Հարցի մեկ այլ կողմին անդրադառնալիս նա առանձնացնում է այն փաստարկը, որ չեզոք դիրքը, չմիջամտելը անկասելիորեն սպառնում են ԱՄՆ-ի պետական անվտանգությանը՝ իբրև ժողովրդավարական սկզբունքների և ազատության պահապանի:

«Մենք երբեք չենք հրաժարվի մեր սահմանների ներսում ժողովրդավարությունը շարունակաբար գործի դնելու սկզբունքից, սակայն միևնույն ժամանակ, այդ արժեքների տարածումը ողջ աշխարհում ազգային անվտանգության խնդիր է»,- նշում է նախագահն իր խոսքում (այս սկզբունքը, ի դեպ, չի կորցրել իր արդիականությունը ամերիկյան ժամանակակից արտաքին քաղաքականության մեջ):

Այս ելույթում ոչ միայն ձևակերպվեցին այն հիմնարար արժեքները, որոնց պաշտպանության համար իրեն պատասխանատու է համարում ԱՄՆ-ը, այլ նաև ազդարարվեց ԱՄՆ-ի հրաժարումը չեզոք դիրքից, իզոլյացիոնիզմի գաղափարախոսությունից:

Իր շարլոտսվիլյան ելույթում Ֆ. Դ. Ռուզվելտը առանձնահատուկ շեշտ է դնում այն հանգամանքի վրա, որ իզոլյացիոնիզմը վտանգավոր և անգամ մղձավանջային հետևանքներ կարող է ունենալ ամերիկյան ժողովրդի համար: «Շատերն այսօր էլ, անշուշտ, դեռ այն ակնհայտ խաբկանքի մեջ են, թե ԱՄՆ-ը կարող է վերածվել անվտանգ, ապահով, մեկուսացած կղզու մի աշխարհում, ուր իշխում է ուժի փիլիսոփայությունը: Նման կղզու ստեղծումը թերևս նրանց երազանքն է, ովքեր այսօր էլ հանդիսանում են իզոլյացիոնիզմի ջատագովր: Սակայն ինձ համար, ինչպես և ամերիկացիների մեծամասնության համար, նման «կղզին» թվում է գիշերային մղձավանջ, ուր մարդիկ զրկված են ազատությունից»:

«Անցած մի քանի տարիների և հատկապես վերջին երեք օրերի իրադարձություններից մենք քաղեցինք սարսափելի դասեր»,-Փերլ Հարբորի հարձակումից երեք օր անց ամերիկյան ժողովրդին հղած իր ուղերձում նշում է ԱՄՆ-ի նախագահը⁷⁸: Վերոնշյալ հարձակումից հետո իզոլյացիոնիզմի դեմ քննադատությունն իր գործնական դրսևորումն է գտնում, և ԱՄՆ-ը մտնում է պատերազմական գործողությունների մեջ:

Քաղաքական միջերի զարգացման միտումները և նախադրյալները Երկրորդ համաշխարհայինի տարիներին

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, բնականաբար, ցանկացած դաշնակցի օժանդակություն ողջունելի էր թե՛ Լոնդոնի, թե՛ Վաշինգթոնի համար,

⁷⁶ նույն տեղում էջ 311-312

⁷⁷ նույն տեղում էջ 314

⁷⁸ FDR: Public Papers, X p 528-530

սակայն այդ դերում Խորհրդային Միության հանդես գալը երկու մայրաքաղաքներում էլ միանշանակ չէր ընկալվում: Ուինսթոն Չերչիլի հայտնի արտահայտությունը՝ «Եթե Հիտլերը հարձակվի դժոխքի վրա, Ներկայացացուչների Պալատում ես առնվազն դրական բնութագիր կներկայացնեմ սատանային»⁷⁹, արտացոլում է այդ ժամանակ ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում տիրող տրամադրությունները: Ֆ. Ռուզվելտն երկրորդ համաշխարհայինի տարիներին հաճախ կրկնում էր. «Վտանգի պահին թույլատրելի է անցնել ճանապարհն անգամ սատանայի ձեռքը բռնած՝ մինչև չհատես կամուրջը»⁸⁰՝ հիմնավորելով կասկածելի դաշնակիցների հետ համագործակցությունը:

Սակայն 1945թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը Պոտսդամում տեղի ունեցած կոնֆերանսում արդեն իսկ ուրվագծվեցին հիմնական բաժանարար կետերը: Ազդեցության գոտիների, պետական սահմանների հստակեցման գործընթացը հանգեցրեց պատերազմի տարիներին երեք պետությունների միջև ձևավորված միասնության խարխլմանը: Բախումը, ձևավորվող անգլոամերիկյան և կոմունիստական բևեռների միջև, գրեթե անխուսափելի էր:

Պոտսդամի հանդիպումը կարևոր էր այն առումով, որ այստեղ առաջին անգամ ԱՄՆ-ը նախագահը Խորհրդային Միության ղեկավարին պաշտոնապես հայտնեց Ամերիկայի կողմից ատոմային ռումբին տիրապետելու մասին: Սա խորհրդային իշխանություններին հասած առաջին պաշտոնական տեղեկություններ էր ատոմային ռումբի ստեղծման աշխատանքների վերաբերյալ: Այսպես կոչված «ատոմային դիվանագիտությունը» նպատակ էր հետապնդում նման հզոր զենքի գոյությունը բացահայտ կամ անուղղակի կերպով օգտագործել՝ բանակցությունների ընթացքում Խորհրդային Միության կողմից որոշակի զիջումների հասնելու համար:

Այսպիսով, Սառը պատերազմը նոր տարր է ձեռք բերում՝ մրցակցություն՝ էլ ավելի հզոր զենք ձեռք բերելու համար, ինչը ուղեկցվում էր շարունակաբար թափ առնող ռազմական մրցակցությամբ: Ծավալված ռազմական մրցակցության հիմնավորման էր ծառայում ուժերի հավասարակշռության պահպանման, ռազմական հզորության կայունության ապահովման հայեցակարգը: Ըստ փոխադարձ երաշխավորված ոչնչացման դոկտրինի (Mutually Assured Destruction), հակամարտող ուժերից յուրաքանչյուրի կողմից ատոմային զենքի կիրառումը կհանգեցներ ոչ միայն հարձակման ենթարկված կողմի, այլ նաև հարձակվողի լիակատար ոչնչացմանը: Այս դոկտրինը մի կողմից ատոմային սպառազինման ոլորտում հավասարակշռության հաստատման անհրաժեշտության մասին էր վկայում, մյուս կողմից ցույց էր տալիս կողմերի խոցելիությունը:

⁷⁹ The Grand Alliance, Boston 1950, pp. 370-371

⁸⁰ John Lewis Gaddis “Strategies of Containment. A critical Appraisal of Postwar American National Security Policy “ Oxford University Press. Oxford New York. 1982.p.3

Կարևորվում է Պոտսդամի հանդիպումը նաև Ճապոնիայում ռազմական ակտիվ գործողությունների դեպքում խորհրդային զորքերի չմասնակցության վերաբերյալ համաձայնության ձեռքբերմամբ: Անշուշտ, ամերիկյան և բրիտանական կառավարությունները քաջ գիտակցում էին, որ խորհրդային ռազմական ներկայությունը Ճապոնիայում հնարավորություն կընձեռի տարածել խորհրդային ազդեցությունը Հեռավոր Արևելքում:

Այս փուլում ԱՄՆ-ը երկու հիմնական խնդիր է ձևակերպում.

- 1) ԽՍՀՄ-ը ազդեցության տարածման հնարավորության սահմանափակումը
- 2) տարաբաժանում մտցնել՝ պատենշ ստեղծելով «յուրայինների» և «օտարների» միջև:

Պոտսդամի կոնֆերանսն ուներ նաև մեկ այլ հստակ նպատակ. այն պետք է ապացուցեր ամերիկյան հանրությանը, որ Թրումենի վարչակազմը գործում է հանուն խաղաղության⁸¹:

Երկրորդ Համաշխարհային տարիների ռուզվելոյան արտաքին քաղաքականությունը քննադատության է ենթարկվում մի շարք պատմաբանների կողմից: Այդ տարիներին Խորհրդային Միությունում ԱՄՆ դեսպան Ուիլյամ Բուլիթը դեռևս քսաներորդ դարի քառասունականների սկզբին մատնանշել էր Ի. Ստալինի և անգլոսաքսոնյան կոալիցիայի ղեկավարների նպատակներում առկա հակասությունները, և մի շարք հույժ գաղտնի հուշագրերի միջոցով ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտին ներկայացրել էր այլընտրանքային ռազմավարության առաջարկ: Հիմնական խնդիրն էր կանխարգելել խորհրդային դիկտատուրայի հաստատումը Արևելյան Եվրոպայում՝ չկորցնելով Խորհրդային բանակի մասնակցությունը նացիստական ուժի դեմ պայքարում: Բուլիթի առաջարկն էր տեղակայել անգլոամերիկյան զորքերը Արևելյան Եվրոպայում և Բալկաններում, նացիստական Գերմանիային դուրս մղելու նպատակով և այդպիսով ետ պահել կարմիր բանակը Եվրոպայից: «Պատերազմը փորձ է պայքարի միջոցով հասնել քաղաքական նպատակների,- Ռուզվելտին գրում է Բուլիթը,-մեր գործողությունները ծրագրելիս մենք պետք է այդ նպատակները հաշվի առնենք»⁸²:

Երկրորդ համաշխարհային տարիներին թերևս միայն ԱՄՆ-ը կարող էր իրեն թույլ տալ աշխարհաքաղաքական ծրագրավորումը: Դրան էր նպաստում ոչ միայն երկրի աշխարհագրական մեկուսացվածությունը կոնֆլիկտի հիմնական թեժ կետերից, այլև պատերազմի մնացած սուբյեկտների՝ առաջին հերթին Գերմանիայի ռազմավարական անպաշտպանությունը⁸³:

Խորհրդային Միությունը փորձում էր պետական անվտանգության և սահմանների պահպանման քողի ներքո ձևավորել սոցիալիստական ճամբար, ԱՄՆ-ն էլ իր հերթին փորձում էր տնտեսական միջոցների կիրառմամբ, ինչն ի դեպ ԱՄՆ-ի

⁸¹ Robert H. Ferrel. Harry S. Truman: a life. University of Missouri Press. Columbia 1994. p. 204.

⁸² John Lewis Gaddis. Strategies of Containment. A Critical Appraisal of Postwar American National Security Policy. Oxford University Press 1982 p. 5

⁸³ С. Переслегин, Самоучитель игры на мировой шахматой доске, М.-СПб, 2005, стр. 15

արտաքին քաղաքականության բնորոշ տարրերից է, Արևմտյան և Արևելյան Եվրոպայում հաստատել իր ազդեցությունը՝ քողարկվելով ժողովրդավարության տարածման գաղափարով: Իրականում, երկու պետությունների ղեկավարներն էլ պարզապես գիտակցում էին դեռ 1942 թ. Հալֆորդ Մակկինդերի «երկրագնդի սրտի» (heartland), վերաբերյալ թեզի կարևորությունը: Մակկինդերի տեսության համաձայն, հենց Կենտրոնական և Արևելյան Եվրոպան է հանդիսանում երկրագնդի սիրտը: Նա հետևյալ կերպ էր ձևակերպել աշխարհաքաղաքականության հիմնական օրենքը. «Ով վերահսկում է Արևելյան Եվրոպան, տիրում է հարթլանդին, իսկ ով գերիշխում է հարթլանդում, գերիշխում է համաշխարհային կղզիներում, նա, ով գերիշխում է համաշխարհային կղզիներում, տիրում է աշխարհին»⁸⁴: Իբրև ավելի գործնական ռազմավարական մոտեցման օրինակ՝ այս համատեքստում անհրաժեշտ է նշել Ջ. Քեննանի հայտնի գաղտնի նամակը, որտեղ հեղինակը նշում է. «Ամեն գնով պետք է խուսափել, որ խորհրդային միության ձեռքն ընկնեն Հոենոսի հովիտը, բրիտանական ու Ճապոնական կղզիները»⁸⁵:

Այսպիսով, հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի հիմնական եվրասիական աշխարհաքաղաքական կենտրոնների տարանջատումը, դրանց պաշտպանությունը Խորհրդային Միության ազդեցության տարածումից հանդիսանում էին Ամերիկայի Միացյալ Նահանգների աշխարհաքաղաքական ռազմավարության հայեցակարգի հիմնարար ասպեկտներից մեկը: Սառը պատերազմի չորս տասնամյակների ընթացքում Ամերիկայի Միացյալ Նահանգների հիմնական խնդիրն էր կանխել Եվրասիա մայրցամաքի շուրջ երկու երրորդում գերիշխող գաղափարախոսական ուժի հետագա տարածումը, քանի որ բացարձակ առաջնությունը Եվրասիայում հավասարազոր կլիներ բացարձակ գերակայությանը ողջ աշխարհում⁸⁶:

Պատերազմի սկզբնական շրջանում առանձնակի ժամանակ չկար մտածելու լեգիտիմության խնդրի մասին, սակայն հետագայում դժգոհության ալիքի առաջացումը դարձավ օրախնդիր հարց ԱՄՆ-ի կառավարության համար:

Լեգիտիմության ապահովումն անհրաժեշտ է ինչպես գերիշխող, այնպես էլ ենթարկվող կողմին: Առաջինը ձգտում է արժանանալ համընդհանուր ընդունելության, քանի որ այն հաղորդում է վստահություն, որոշակի առաքելություն իրականացնելու զգացում: Իսկ վերջիններիս այն անհրաժեշտ է արդարացնելու համար այն հանգամանքը, որ իրենք ենթարկվողի դերում են՝ այդ կարգավիճակին հարմարվելու գործընթացը հեշտացնելու համար⁸⁷: Քաղաքական գործունեության լեգիտիմությունն ապահովելու նպատակին կրկին ծառայում է քաղաքական միջերի ստեղծումը:

⁸⁴ А. Дугин, Основы геополитики: геополитическое будущее России, М., 2000, стр. 55

⁸⁵ Кеннан Дж. Дипломатия Второй мировой войны глазами американского посла в СССР Джорджа Кеннана - М., Центрполиграф, 2002. стр 254

⁸⁶ З. Бжезинский, Выбор: мировое господство или глобальное лидерство, Москва 2005, срт. 62-63

⁸⁷ см. там же стр..189.

ԱՄՆ նախագահի պաշտոնում Ֆ. Ռուզվելտին հաջորդած Հ. Թրումենը հետևողականորեն փորձում էր խորհրդային կողմին պարտադրել կատարել Ազատագրված Եվրոպայի վերաբերյալ ստորագրված հայտարարագրի պայմանները: Վերոնշյալ խնդիրների քննարկումը Պոտսդամի կոնֆերանսում վերածվում է տոտալիտար իշխանության և կառավարման ժողովրդավարական ձևերի վերաբերյալ իմացաբանական բանավեճի: Սակայն, եթե Ֆ. Ռուզվելտը հիմնականում մտահոգված էր երկու գերտերությունների հարաբերություններում առկա խնդիրներով, ապա Հ. Թրումենի համար գլխավորը կոմունիզմի և էլ ավելի անորոշ հասկացության՝ «հակակոմունիզմի» միջև առկա կոնֆլիկտն էր: Այդ ժամանակ արդեն, և հաջորդած ամիսների ընթացքում առավել հաճախակի, առաջ էր քաշվում այն հարցը անգամ, թե արդյոք ԱՄՆ-ը շատ մեծ հույսեր չի կապում ռուսական զորքերի հետ՝ նացիստական Գերմանիայի հանդեպ հաղթանակ տանելու գործում⁸⁸:

Ընդհանրապես «սառը պատերազմ» տերմինը ստեղծված էր նկարագրելու համար այն իրավիճակը, որի համար նախ և առաջ բնորոշ էր փոխադարձ թշնամանքն ու վախը: Վերոնշյալ զգացումներն ընկած էին երկու գերտերությունների մի շարք պատմական և քաղաքական հակասությունների հիմքում և շատ դեպքերում խթանվում էին միջերով, ինչի արդյունքում թշնամանքը վերածվում էր ատելության⁸⁹: Այդ միջերից հիմնականը՝ «դավադրությունների տեսությունը», իրականությունը բացատրելու թերևս ամենահարմար և գործուն միջոցներից է: Դավադրությունների տեսությունը դիցաբանական գիտակցության արդյունք է, և այստեղ առկա են ցանկացած միջի պարտադիր տարրեր, կերպարներ. «չարագործներ», «դավադրության զոհեր» (զոհ կարող է դառնալ ոչ միայն առանձին անհատը, այլև ամբողջ ժողովուրդը), ինչպես նաև «դրական հերոսը», որը պայքարում է թշնամու դեմ և բացահայտում դավադրությունը⁹⁰:

Ֆուլտոնյան ելույթը, «երկաթե վարագույրը» և «առաքելության» միջի ձևավորումը:

Անգլոամերիկյան դաշինքի արտաքին քաղաքականության հայեցակարգերն արտացոլված են Սառը պատերազմի սկիզբը նախանշող և վաղասառըպատերազմյան շրջանի միտումները պատկերող մի շարք փաստաթղթերում, որտեղ ակնհայտ երևում են չարիքի դեմ համախմբվելու, «բարու» ու «չարի» բևեռներ ձևավորելու միտումները:

Այս փաստաթղթերի շարքում առանձնակի կարևորվում է Ուինսթոն Չերչիլի 1946թ. ֆուլտոնյան ճառը: Եթե Ֆ. Ռուզվելտի շարլոտսվիլյան ելույթը ազդարարեց ԱՄՆ-ի՝ իզոլյացիոնիզմից հրաժարվելու մասին, ապա Ուինսթոն Չերչիլի հանրահայտ ֆուլտոնյան ելույթը սառը պատերազմի ազդարարն է: Ամեննին էլ պատահական չէ, որ իր վերոնշյալ ելույթում Չերչիլը նույն հռետորաբանությունն է օգտագործում, ինչը և Ռուզվելտը: Չերչիլը ևս կարևորում է անգլախոս ժողովուրդների միավորման

⁸⁸ John Lewis Gaddis. Strategies of Containment. A Critical Appraisal of Postwar American National Security Policy. Oxford University Press 1982 p. 5

⁸⁹ П. Кальвакоресси, Мировая политика 1945-2000, книга 1., М., 2003, стр. 3.

⁹⁰ А. Цуладзе “Политическая мифология” Москва, 2003 г. стр. 176

անհրաժեշտությունը՝ հանուն ժողովրդավարության և անվտանգության պաշտանության: «Անհրաժեշտ է, որ մտքի կայունությունը, նպատակների աներերությունը և որոշումների պարզությունն ու հստակությունն առաջնորդեն անզլախոս ժողովուրդների վարքագիծը խաղաղ օրերին այնպես, ինչպես պատերազմի ժամանակ»⁹¹, - իր ելույթում շեշտում է Ու. Չերչիլը:

Երբ 1945թ. մայիսի 9-ին պատերազմն ավարտվեց, Խորհրդային ու արևմտյան գորամիավորումները տեղակայված էին Եվրոպայի կենտրոնական հատվածի որոշակի դիրքերում: Հենց այս սահմանագծին էլ իջեցվեց «երկաթե վարագույրը»՝ բաժանելով Երկիր մուրակը երկու բևեռների: Ուշագրավ է, որ ընդհանրապես երկաթյա վարագույրը թատրոնում ծառայում էր հրդեհի դեպքում դերասաններին և բեմի դեկորները կրակից պաշտպանելու համար: Սակայն «երկաթյա վարագույր» այսօրվան այս դեպքում ամենին չէր նշանակում, որ վարագույրի մյուս կողմում գտնվող երկրները միայն իզոլացվելու են և պաշտպանվելու: Սա նշանակում էր, որ անհրաժեշտ միջոցներ են կիրառվելու «վարագույրից այն կողմ» բռնկված հրդեհի տարածումը կանխարգելելու և հնարավորինս արագ մարելու համար: «Բայթիկ ծովից՝ Շտետինից, մինչև Տրիեստե՝ Ադրիատիկի ափեր, իջեցվել է երկաթյա վարագույրը: Եվ հենց այդ երկաթյա վարագույրի ետևում են գտնվում կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հինավուրց մայրաքաղաքները»⁹²:

Ֆուլտոնյան իր հանրահայտ ելույթում Ու. Չերչիլն առաջ քաշեց ամբողջ անզլո-ամերիկյան արտաքին քաղաքականության համար առանցքային մի թեզ, ըստ որի անզլախոս ժողովուրդները Խորհրդային Միության և երկաթյա վարագույրից այն կողմ գտնվող երկրների նկատմամբ հստակ առաքելություն ունեն: Սակայն եթե սա չերչիլյան հռետորության համաձայն անզլախոս ժողովուրդների մենաշնորհն է, ապա ամերիկյան քաղաքական գործիչները այս առաքելության իրականացման առաջատարի դերը վերագրում են ԱՄՆ-ին: Ու. Չերչիլն իր ելույթում նշում է. «Եթե ամբողջ անզլախոս ընկերակցությունը միավորվի Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, այդ միավորման մեջ ներառելով այն ամենն, ինչ ենթադրում է համագործակցությունը օդում, ծովում, ցամաքում, գիտության, արդյունաբերության բնագավառներում, ու նաև միավորեն բարոյական, հոգևոր ուժը, չի լինի որևէ անհանգստացնող, անապահովության զգացում առաջացնող ուժ, հակառակը, կտիրի ապահովության, վստահության գերիշխող զգացում»⁹³:

«Ես չեմ կարծում, որ Ռուսաստանն այսօր ցանկանում է պատերազմ: Նրանց ցանկությունն է վայելել պատերազմի պտուղները՝ իրենց իշխանության և դոկտրինների անսահմանափակ տարածումը: Սակայն, այն, ինչի շուրջ մենք պետք է խորհենք այսօր, քանի դեռ ժամանակը թույլ է տալիս, նոր պատերազմի կանխարգելումն է և բոլոր

⁹¹ <http://www.fordham.edu/halsall/mod/churchill-iron.html>

⁹² նույն տեղում

⁹³ նույն տեղում

երկրներում, հնարավորինս արագ, ազատության և ժողովրդավարական պայմանների հաստատումն է»⁹⁴:

Ու. Չերչիլի ելույթում մատնանշվում են անվտանգության գաղափարին մարտահրավեր նետած երկու երևույթներ. առաջինը՝ նոր պատերազմի վտանգն է, որը կապված է ատոմային ռումբի տարածման հետ, երկրորդը՝ չարիքի բռնապետությունն է: Այս համատեքստում նախկին դաշնակիցը այլևս կրողը չէ համապատասխան արժեքների ու, հետևաբար, «երկաթե վարագույրի» այն կողմում հայտնված պետությունները և ավելի ուշ «չարիքի կայսրություն» կնիքը ստացած Խորհրդային Միությունը վերածվում են ժողովրդավարական պետությունների հիմնական թշնամիների:

Վերջաբան

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության մեջ արմատական փոփոխություններ ազդարարող փաստաթղթերի համադրությունը կարևորվում է թերևս ոչ միայն այդ ժամանակահատվածի պատմական, քաղաքական համատեքստի վերաբերյալ հնարավորինս համապարփակ պատկերացում կազմելու առումով, այլ նաև առկա ընդհանրությունները վերհանելու, «ժողովրդավարություն» հասկացության համատեքստային փոփոխությունները դիտարկելու տեսանկյունից: Սակայն հարց կարող է առաջանալ, թե ինչու՞ է շեշտը դրվել հենց շարլոտսվիլյան և ֆուլտոնյան ելույթների վրա: Թերևս ընտրությունը պայմանավորված է առաջին իսկ հայացքից աչք զարնող ընդհանրություններով, հատկապես եթե հաշվի առնենք այն համգամանքը, որ վերոնշյալ ելույթները, սկիզբ դնելով շրջադարձային մի փուլի, միննույն ժամանակ պատերազմների ազդարարներ են, պատերազմներ, որոնք ֆորմալ առումով նույն հիմքով են ազդարարված:

Ինչպես կարող ենք նկատել, Երկրորդ համաշխարհայինի տարիներին ձևավորված միֆերի հիմքում ընկած էր «ժողովրդավարություն» հասկացությունը, որը որոշակի փոխակերպումների արդյունքում մեծապես նույնացվել է ազատությանը:

Համաշխարհային պատմության համար բեկումնային նշանակության այս ելույթները որոշիչ դեր խաղացին 20-րդ դ. երկրորդ կեսի պատմության ընթացքի վրա, հասկացությունների ու երևույթների, արժեքային համակարգերի վերափոխումների վրա: Անշուշտ կան ոչ պակաս կարևոր նշանակության ելույթներ, սակայն վերջիններս առանձնանում են այն առումով, որ եզակի ազդեցություն են թողել ժողովրդավարություն հասկացության ժամանակակից ընկալման ձևավորման վրա:

⁹⁴ նույն տեղում

ՔԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐԹԱԿՆ ԱՌԱՆՑ ԻՐԱՆԻ

*(Քննարկում Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնում)
4 սեպտեմբերի, 2008թ.*

Օգոստոսի 13-ին՝ վրաց-ռուսական (հարավօսական) ռազմական հակամարտության գրեթե ավարտին, Մոսկվայում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը համագործակցության մի նոր նախաձեռնությամբ հանդես եկավ, որը ստացավ «Կովկասյան կայունության և համագործակցության հարթակ» անվանումը: Մասնակիցներն են հարավկովկասյան երեք պետությունները՝ Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, Ռուսաստանի Դաշնությունը և նախաձեռնության հեղինակ Թուրքիան: Այս համագործակցության կարևորագույն նպատակներից մեկը անվտանգության որակապես նոր համակարգի ստեղծումն է: Որքանո՞վ է իրատեսական նման նախաձեռնությունը, և արդյո՞ք հանարավո՞ր է այն իրագործել առանց Իրանի մասնակցության:

(Չակերտներով առանձնացված յուրաքանչյուր պարբերություն առանձին մասնակցի խոսքն է)

«Փորձենք խոսել անցուդարձի մասին և գնահատել, թե որքանով է իրական այդ անվտանգության համակարգի ստեղծումը, իրատեսական քաղաքականությունն են արդյո՞ք բանակցությունները, որ տեղի են ունենում այս օրերին, վրացիների և ադրբեջանցիների, ադրբեջանցիների և թուրքերի, թուրքերի և ռուսների միջև: Սեպտեմբերի 6-ին Հայաստան է գալու Ա.Գյուլը, և քննարկվելու է այդ հարցը: Որպեսզի կարողանանք հասկանալ, թե որքանով է այս նախագիծն իրատեսական, պետք է նախ հաշվարկել շահերը: Ո՞վ ինչ շահ ունի տարածաշրջանում, և ո՞ւմ շահերին է սա հակասում»:

«Ակներև է, որ առաջին հերթին սա հակասում է Իրանի շահերին: Իրանցիները լուռ են, ոչինչ չեն ասում: Կան տարբեր մեկնաբանություններ այդ առիթով, օրինակ՝ իրանցիները կարող են վիճակը ձեռնադրել համարել, քանի որ ուշադրությունն իրենցից շեղվել է՝ հնարավորություն տալով աշխատել ուրանի հարստացման վրա: Մյուս կողմից, սեպտեմբերի 3-ին Թեհրան է ժամանել *Ատոմատրոյէքսպորտի* ղեկավարը, և Շանհայի համագործակցության կազմակերպության պայմանավորվածությունների հիման վրա համաձայնության են եկել, որ 2009թ. արդեն Բուշեհրն անպայման գործարկվելու են»:

«Այսօր Հարավային Կովկասը հայտնվել է ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի շահերի բախման գոտում: Մեկը՝ գլոբալ, իսկ մյուսը՝ եվրասիական, այսինքն՝ տարածաշրջանային

անվտանգության համակարգ է: Հնարավոր է արդյոք ստեղծել երրորդ անվտանգության համակարգը ենթատարածաշրջանային մակարդակի վրա»:

«Կովկասը բոլորի կողմից դիտվում է վերջին գիծ: Կովկասն իր կառույցներով եվրոպական է: Իսկ Իրանը դրանից դուրս է: Թուրքիան, որքան էլ արևելյան երկիր է, Եվրոպայի մեջ է դիտվում: Այսինքն՝ համակարգերը ստեղծվում են Եվրոպայի սահմանագծին: Այստեղ կարևոր է հասկանալ, թե առաջարկը որտեղից է գալիս, Թուրքիայի՞, թե՞ օվկիանոսի այն կողմից և այլն»:

«Տարածաշրջանում համակարգեր կամ կառույցներ ստեղծելու նարրատիվ, դիսկուրսներ գոյություն ունեն: Կան օրինակ ֆանտաստիկ կառույցներ ստեղծելու գաղափարներ, կան քիչ թե շատ ռեալ կառույցների գաղափարներ: Առաջինը «Կովկասյան տուն» ստեղծելու գաղափարն էր, որ առաջ քաշեց Շևարդնաձեն: Երկրորդը «Black Sea Economic Cooperation» կազմակերպությունն էր: Հետո ստեղծվեց ԱՊՀ-ն, ապա՝ ՎՈՒԱՄ-ը և այլն: Եղել են նաև ուրիշ գաղափարներ, ինչպես օրինակ Մայքլ Լեմերսոնի գաղափարը: Նպատակը տարածաշրջանային կոնֆլիկտները լուծելու համար որևէ կառույցի օգտագործումն էր: Այդպիսի նախաձեռնություններ եղել են Աշոտ Մանուչարյանի, Սուրեն Զոյանի, այստեղ գտնվող որոշ հեղինակությունների կողմից, օրինակ՝ «Կովկասյան Շվեյցարիա» ստեղծելու գաղափարը և այլն: Գերմանացի խորհրդարանական Շեպինգը նույնպես նման գաղափար ուներ: Սակայն ոչ մեկն էլ չի իրագործվել, բացի NGO-ի մակարդակի գաղափարներից:

Ահա այս համատեքստում մենք ականատես ենք ևս մեկ գաղափարի ծնունդի: Եթե սա լիներ մինչև օգոստոսի 8-ը, մեծ ուշադրություն չէր գրավի, ինչպես, ասենք, ուշադրություն չեն գրավում ԵԱՀԿ-ի նախաձեռնությունները, որոնք սովորական են դարձել: Սակայն Հայաստանի նախագահական ընտրությունների արդյունքների, ֆուտբոլային խաղի ու օգոստոսյան պատերազմի համատեքստում այս առաջարկը դառնում է հետաքրքիր:

Կան ինտեգրալ կամ մասնակցային կառույցներ, ինչպես ՄԱԿ-ը, որին մասնակցում են աշխարհի բոլոր երկրները: Եթե պոստմոդեռնիստական տեսակետով նայենք, ապա գոյություն ունի Representative People's Organization, որում ընդգրկված են բոլոր այն ազգերը, որոնք չկան ՄԱԿ-ում: Մյուս տեսակը դաշինքներն են: ՆԱՏՕ-ն ու ՀԱՊԿ-ն դաշինքներ են: Դրանք որոշակի՝ հիմնականում քաղական, ռազմավարական շահ հետապնդող կառույցներ են:

Այս պայմանական բաժանումը հաշվի առնելով՝ կարելի է հասկանալ, թե ՆԱՏՕ-ն ինչու է կորցրել իր իմաստը Մառը պատերազմից հետո: Այն դաշինքից սկսեց դառնալ հավաքական կազմակերպության, նույն կերպ՝ ԵՄ-ն: Իհարկե, իդեալ պոլիտիկի տեսակետից, ոչ այլանսային հավաքական կազմակերպություններն ավելի ուժեղ են, քան այլանսային կազմակերպությունները, որոնք ավելի նեղ տակտիկական նպատակներ են հետապնդում և որոշ ժամանակ անց պետք է փլվեն: Իսկ ոչ դաշինքային

կազմակերպությունները իրենցից կառավարման մոդել են ներկայացնում: Սակայն իրական աշխարհում ոչ ոք այդքան կամք չի ունեցել, որպեսզի «չայլանսանա» պատերազմների ավարտից հետո:

Այն, որ Ռուսաստանը ճանաչեց Հարավային Օսիայի ու Աբխազիայի անկախությունները, անդառնալի քայլ է: Մինչև սեպտեմբերի 11-ը թվում էր, որ համաաշխարհային քաղաքականության մեջ բոլոր կողմերը խուսափում էին անդառնալի արարքներից: Սեպտեմբերի 11-ը ստեղծեց Աֆղանստանի պատերազմը, Իրաքի պատերազմը, որոնք անդառնալի քայլեր էին, Կոսովոյի անկախության ճանաչումը, որը ևս անդառնալի քայլ էր:

Հիմա՝ Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը արտաքինապես թվում է անդառնալի արարք, եթե Ռուսաստանն իրոք լուրջ է տրամադրված այս հարցի հանդեպ: Բայց մյուս կողմից, Ռուսաստանի ճանաչումը գուցե մեծ նշանակություն չունենա՝ հաշվի առնելով, օրինակ, Հյուսիսային Կիպրոսի ճանաչումը Թուրքիայի կողմից, որը լուրջ հետևանքներ չունեցավ: Իսկ եթե ունենար, ապա աշխարհը կփոխվեր, իսկ դա կնշանակեր, որ Թուրքիայի այս առաջարկը հիմնավոր առաջարկ է: Այդ առումով, եթե Թուրքիան լուրջ է, Իրանին կարելի էր հրավիրել՝ մասնակցելու նախագծին: Ավելին, Հարավային Օսիան, Աբխազիան և Լեռնային Ղարաբաղը նույնպես պետք է ներառվեն այս պակտի մեջ՝ գուցե ոչ լրիվ ստատուսով, կոմպրոմիսային մասնակցությամբ, և այդ դեպքում դա կլիներ հավաքական կառույց: Իսկ ԱՄՆ-ը ու ԵՄ-ը կլինեին այդ կառույցի ամֆիթատրոնը:

Նմանատիպ նախկին կառույցներում Ռուսաստանը, Թուրքիան և Իրանն են եղել առաջնային դիրքերում: Այս անգամ Թուրքիան է անում առաջարկը, և եթե նա որպես ուժեղ դաշնակից ձեռք բերի Ռուսաստանին, ապա նրանք երկուսով կլինեն առաջնային, իսկ Հարավային Կովկասը կմղվի երկրորդական դիրք»:

«Կարելի է մի քանի դիրքորոշում սահմանել այս հարցի շուրջ:

Առաջինը՝ այն, ինչ կատարվեց վերջին տասը տարիների ընթացքում ԱՄՆ-ի կողմից, միջազգային նորմերի միակողմանի ինտերպրետացիաների, կրկնակի ստանդարտների ինտենսիվ օգտագործման և ուժի գործադրման արդյունք է: Կան ուժեր, որոնք փորձում են ռեգիոնալ մակարդակով «քոփի-փեյսթ» անել այն, ինչը ԱՄՆ-ը իրականացնում է գլոբալ մակարդակով:

Երկրորդ՝ որքան էլ ԱՄՆ-ը շարունակում է մնալ գլոբալ ուժ, փորձը ցույց է տալիս, որ եթե ռեգիոնալ ուժերից մեկը գնում է ծայրահեղ քայլերի, ԱՄՆ-ի գործողության հնարավորությունները սահմանափակ են, ասենք՝ ԱՄՆ-ը միանգամից չհասավ Վրաստանին փրկելու: Այսինքն՝ ԱՄՆ-ի հակազդեցությունն ունի իր որոշակի սահմանները: Ռեգիոնալ և գլոբալ ուժերի միջև կա ժամանակային ինտերվալ, որը գուցե ԱՄՆ-ը փորձի կրճատել:

Մյուսը՝ որքան էլ ԵՄ-ը տնտեսապես զարագացած է ու բարգավաճ, այն ևս մեկ անգամ փաստեց, որ աշխարհաքաղաքական առումով շարունակում է մնալ

լուսանցքային: Եվ ԵՄ-ի վերջին հայտարարություններն այն մասին, որ դադարեցնում է բանակցությունները Ռուսաստանի հետ, իրականում հենց ԵՄ-ի շահերին են հակասում, քանի որ դրանց կիզակետում են Ռուսաստանի գազի արտահանումը և եվրոպական ապրանքների համար ռուսական շուկայի բացումը:

Ռուսաստանի համար սա թեստ է, որի միջոցով նա կորոշի, թե իր ուժը մինչև ո՞ր է հասնելու: Եվ այդ ուժը կլինի ավելի մեծ, քան Արևմուտքն է կարծում և ավելի փոքր, քան ռուսներն են կարծում: Շահայի կազմակերպության մեջ ընդգրկված երկրները հակահեգեմոնիկ դիրքորոշում ունեցող երկրներ են, և նրանց համագործակցությունը ավելի շատ տակտիկական բնույթ ունի, քան թե ռազմավարական: Մյուս կողմից դա Ռուսաստանին ձեռնտու է, քանի որ այս երկրները, ասենք՝ Չինաստանը, ԱՄՆ-ի հետ ինչ-որ սակարկություններ են անելու, ինչը ԱՄՆ-ի տեսանկյունից թանկացնելու է Ռուսաստանին սահմանափակելու հնարավորությունները:

Գալով Իրանին՝ պետք է ասել, որ Իրանի համար շատ վտանգավոր իրավիճակ է: Իրանը կարող է կորցնել իր ռեզիոնալ ազդեցությունը ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Պարսից Ծոցում և Մերձավոր Արևելքում: Օրինակ՝ այս օրերին Դոհայում տեղի է ունենում Պարսից ծոցի անվտանգության խորհրդի հանդիպումը, որին Իրանը հրավիրված չէ որպես դիտորդ: Բավական ակտիվ են սիրիա-իսրայելական բանակցությունները Թուրքիայի միջնորդությամբ: Սրանք Իրանին երկկողմանի ճնշելու միջոցներ են: Կարելի է հարցադրում անել. արդյո՞ք Իրանին պետք է միջուկային զենք առանց աշխարհաքաղաքական դիրքի, ինչպես Հարավային Կորեայի դեպքում է:

Բնականաբար, Իրանի նման իրավիճակը փակուղային է մեզ համար: Այս պահի դրությամբ մենք փակուղի ենք արևելք-արևմուտք ճանապարհին, իսկ Իրանի փակվելու դեպքում մենք փակուղի կդառնանք հյուսիս-հարավ ճանապարհի վրա: Մեզ համար իդեալականն այն է, որ երկու ճանապարհներն էլ խաչաձևվեն և իրար հետ աշխատեն:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա թե՛ Մերձավոր Արևելքում, թե՛ Հարավային Կովկասում նրա դերը բարձրացնելու հնարավորություն է տրված: Թե ինչ աստիճանի դա կհասնի, պայմանավորված է ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Իրանի հակազդեցությամբ»:

«Իրանը Կովկասյան պակտ ստեղծելու առաջարկին չի պատասխանել գուցե նաև այն պատճառով, որ լուրջ չի ընդունում դա: Այս դաշինքի ստեղծման գաղափարը հիմնված է մի կոնցեպտուալ սխալի վրա: Ստացվում է այնպես, որ գոյություն ունի Կովկաս կոչված ռեզիոնը: Մինչդեռ իրականությունն այն է, որ նման ռեզիոն գոյություն չունի: Ռեզիոնալիզացիայի տեսությունն այն է, որ ռեզիոնում ընդգրկված տարրերը պետք է միավորված լինեն մեկ ընդհանուր շահով կամ մեկ ընդհանուր վտանգով: Սակայն այս 5 պետությունները, որոնք պետք է ընդգրկվեն այդ պակտի մեջ, չունեն ընդհանուր շահ, կամ գոյություն չունի մեկ ընդհանուր վտանգ այդ 5-ի համար, որը նրանց կմիավորեր: Եթե կա վտանգ, ապա այն ընդհանուր է միայն երկու կամ երեք պետությունների համար, սակայն ոչ հինգի: Չկա ռեզիոնը, որի վրա հնարավոր կլիներ զարգացնել նման դաշինք: Սա պարզապես վերնից դրված մի կոնստրուկտ է»:

«Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Եվրամիությունը ինչ-որ նպատակ ունեին այս ամենի մեջ և հասել են դրան, թե՛ ոչ: Որո՞նք են Թուրքիայի դրդապատճառները:

Պրովոկատիվ ձևով եթե խոսենք, ԱՄՆ-ը իր նպատակներին հասել է, քանի որ նրա նավերն այսօր Սև ծովում են: Առավել քան տասը տարի ԱՄՆ-ը ձգտել է լինել Սև ծովում, բայց չի ստացվել: Այսօր արդեն ամերիկյան 18 նավ Սև ծովում է, ևս 3-ը դեռ գալիս են:

Ռուսաստանի նպատակն արդյոք այն էր, որ Հարավային Օսեթիան ու Աբխազիան ճանաչվեն անկախ, թե՛ Ռուսաստանն ունի ավելի լուրջ նպատակներ, որոնց իրականացումը կապված է այս հնգակողմ պակտի հետ:

Թուրքիայի ինչու՞ էր սա պետք: Բարձրացնել իր դե՛րը. հիշեցնենք, որ մի քանի ամիս առաջ Թուրքիան ռեզիոնալ պետություն չէր համարվում՝ ի տարբերություն Իրանի, որը երկու ռեզիոններում էլ գործոն է»:

«Մեկ տեխնիկական հարց. եթե Ռուսաստանը ճանաչում է Աբխազիան ու Օսիան, ապա Ռուսաստանի տեսակետից այստեղ կա հինգ անկախ պետություն:

Մեկ այլ հարց կապված է Ուկրաինայի զարգացումների հետ: Թեև ամերիկյան նավատորմը Սև ծովում է, բայց ամերիկամետ, նատոյամետ նախագահ Յուզենկոն հանկարծ հայտնվեց օդում: Պարզ չէ՝ ինչի վրա է հենվելու ուկրաինա-նատոյական շարժումը, եթե ոչ նախագահի, իսկ նախագահն այսօր ուժ չի ներկայացնում: Գուցե Ռուսաստանի ու ԱՄՆ-ի համար սա զուտ տեխնիկական մի քայլ է, որը թույլ է տալու սկսել ակտիվ փուլը, որի ժամանակ ինչ-որ բաներ կփոխվեն: Միանգամից ինչ-որ բաներ փոխվեցին Ուկրաինայում, այն դեպքում, երբ մի քանի տարի անընդհատ ոչինչ չէր փոխվում: Նման փոփոխություններ կարող են շատ լինել, ասում են՝ հիմա ավելի հավանական է ԱՄՆ-ի հարձակումն Իրանի վրա: Այսինքն՝ վերջին երկու տարիների փակուղային վիճակն ինչ-որ տեղ բացվեց: Բացվեց և՛ Հայաստանի, և՛ Ռուսաստանի, և՛ ԱՄՆ-ի, և՛ Թուրքիայի համար, որն իրեն այլևս նատոյական պետության պես չի պահում, քանի որ խախտեց Մոնտրոյի պայմանագիրը և թույլ տվեց ամերիկյան ռազմանավերին մտնել Սև ծով»:

«Մենք ակտիվորեն քննարկում ենք Կովկասյան պակտի հարցը՝ չհասկանալով, թե այն ինչ է իրենից ներկայացնում: Սա չի վերածվելու միջազգային տարածաշրջանային կազմակերպության՝ առավել ևս անվտանգության ոլորտում: Սա, ըստ էության, շատ մոտ է Սառը պատերազմի տարիներին առաջ եկած ԵԱՀԽ-ի գաղափարին, որի պայմանավորվածությունների մեծ մասը, եթե չասենք բոլորը, քաղաքական նպատակներ ունեին՝ առանց որևէ իրավական հիմքի: Այդ պատճառով էլ այն սկսեց խարխլվել: Գուցե ճիշտ կլիներ պարզել, թե ինչ մեխանիզմներ է ենթադրում այս պակտը, ապա՝ քննարկել մասնակիցների քանակն ու որակը: Առանց հասկանալու,

թե ինչպես են լուծվելու անվտանգության խնդիրները, անիմաստ է խոսել մասնակիցների քանակի կամ նրանց մասնակցության ձևի մասին:

Հակադրվելով այն տեսակետին, որ ԱՄՆ-ը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո երկակի ստանդարտներ է օգտագործում, պետք է նշել, որ երկակի ստանդարտները օգտագործվում են դեռ ՄԱԿ-ի ստեղծումից սկսած: Նաև Խորհրդային Միությունն էր դրանք օգտագործում՝ մասնավորապես ներխուժելով Աֆղանստան: Սա կապված է ուժերի հավասարակշռման հետ. եթե դա խախտվում է, կողմերից մեկը, միջազգային իրավունքի խախտմամբ, ինչ-որ գործելակերպ է որդեգրում:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի վարքագծին Աբխազիայում և Հարավային Օսիայում, ապա նա ռազմական գործողությունները սկսեց միջազգային բոլոր նորմերին համապատասխան: Բայց այն պահից ի վեր, երբ Ռուսաստանը հրաժարվեց դուրս բերել իր զորքերը, որոնք գտնվում էին անվտանգության գոտիներից այս կողմ, այսինքն՝ Վրաստանի տարածքում, նա սկսեց խախտել միջազգային իրավունքը և ձեռք բերված քաղաքական պայմանավորվածությունը՝ մասնավորապես Սարկոզիի և Մեդվեդևի պայմանավորվածությամբ ձեռք բերված սկզբունքները»:

«Քաղաքակրթության զարգացումից, 1945թ. սկսած՝ միջազգային իրավունքը եղել է միջոց՝ արդարացնելու ուժերի բախումները: Եվ այնքանով է դա իրավունք, ինչքանով մասնակիցները համաձայն են, որ այդ իրավունքը լինի: Դա փիլիսոփայական հետաքրքիր պարադոքս է: Նույն տիպի պարադոքս գոյություն ունի Ղարաբաղի կամ Աբխազիայի անկախության հարցում, նույնը՝ նաև պատերազմող ահաբեկչի ու քաղաքակիրթ աշխարհի միջև: Դա տարբեր հաշվարկային համակարգերի բախման պարադոքսն է: Վերջերս Կարեն Գևորգյանը մի հոդված էր գրել, որտեղ ասում էր, որ Շամիլ Բասայևը չեչենների համար, անկախ ամեն ինչից, ազգային հերոս է: Այս պատճառով երկակի ստանդարտներ գոյություն չունեն, գոյություն ունեն բազմակի ստանդարտներ, և գոյություն ունի մարդկանց, պետությունների ու ազգերի պակտ կազմելու, իրենց շահերից ելնելով իրար հետ ընկերանալու, ժամանակավոր սիստեմներ կազմելու ունակություն և իդեալական ձգտում:

Ասվածի լույսի ներքո նոր բովանդակություն է ստանում ԱՄՆ-ի շահերի հարցը կամ Թուրքիայի առեղծվածը՝ վերջինս շարունակում է պաշտպանել Ամերիկայի շահերը, թե՞ ոչ: Այսինքն՝ կարելի է իրավիճակին նայել երկու կամ ավելի տեսանկյուններից:

Ինչ վերաբերում է Կովկասի ռեգիոն լինելուն կամ չլինելուն, ապա այն իրական ռեգիոն է՝ հսկայական շահերի ամբողջությամբ, բայց լրիվ պառակտված է: Իսկ ինչու՞ է ամբողջապես պառակտված: Արդյոք պատճառն այն չէ՞, որ նրան պառակտում են հատուկ ուժերը: Ինչու՞ են պառակտում: Պատճառն այն չէ՞, որ այն կարևոր է:

Այս պայմաններում այն, ինչ Հայաստանն է անում, կոչվում է կոմպլեմենտար քաղաքականություն: Սա նշանակում է, որ պետք է այնպիսի արարքներ ընտրվեն, որոնք միաժամանակ համապատասխանում են մի շարք մակարդակների շահերին,

որպեսզի հնարավոր լինի այդ արարքները կատարել՝ հակառակ դեպքում դրանք չեն իրականանա: Այս համատեքստում իրոք կարևոր չէ, թե որն է այս պակտի բովանդակությունը, որովհետև այսօր ապրում ենք միֆոլոգիական արժեհամակարգերի մեջ, որտեղ կարևոր է մասնակցություն vs. չմասնակցությունը: Այսինքն՝ երբ խոսվում է կովկասյան որևէ պակտի մասին, գլխավոր հարցն այն է, թե ով է մասնակցում և ոչ թե՝ ինչի մասին է պակտը»:

«Այդ դեպքում հարց. ենթադրենք Կովկասյան պակտը ստեղծվեց, և ենթադրենք A պետությունը հարձակվում է B պետության վրա: Ինչ մեխանիզմով է պակտը լուծելու այդ խնդիրը»:

«Երկու կատեգորիաներ կան միջազգային հարաբերությունների տեսության մեջ՝ կայունության ու ստաբիլության հասկացությունները: Ստաբիլությունը ներքին կատեգորիա է՝ հասարակական կայունություն, ներքին անվտանգություն: Կայունությունը արտաքին կատեգորիա է: Արտաքին ուժերի ազդեցությամբ ստեղծվում է կայունություն կամ անկայունություն: Հաշվի առնելով այս երկու կատեգորիաները՝ տեսնում ենք, որ ռեգիոնի հիմնական շահը ստաբիլությունն է, իսկ ռեգիոնում տիրող իրավիճակն անկայուն է: Այսինքն՝ երկու տարբեր շահ կա՝ մեկը՝ ներռեգիոնալ, մյուսը՝ ռեգիոնից դուրս, որն աշխատում է ռեգիոնի ռեգիոնալությունը քայքայելու վրա:

Միջազգային իրավունքը պայմանավորվածությունների համակարգ է, որը բխում է հիմնական, մեծ պայմանավորվածություններից: Իսկ դրանք պատվիրաններն են, որոնք մեծացել, երկարել, շատացել են, ասենք՝ միջուկային զենք չտարածելը այսօրվա պատվիրաններից մեկն է: Դրանից բխում է միջազգային օրենքը: Պատվիրան խախտելը մտնում է մարդու շահերի մեջ. մարդն ամեն դեպքում շնանում է, և դա բնական է: Անբնական է, երբ շնանալը բերում է կոնֆլիկտի: Միջազգային իրավունքը փորձում է հնարավորություն տալ պատժել շնանալու համար, բայց շնանալը ենթադրվում է: Նույն կերպ՝ միջազգային քաղաքականությունը ենթադրում է շահերի բախում և ոչ միայն երկակի, այլև բազմակի ստանդարտների կիրառում: Միջազգային իրավունքը ենթադրում է այնպիսի համակարգ, որը թույլ է տալիս պատժել դրա համար:

Այստեղ ուժերի հարաբերակցության խնդիրը կա. եթե կողմը շատ ուժեղ է, միևնույն է, պատժել հնարավոր չէ: Դրա համար ավելի լավ է դուրս գանք միջազգային իրավունքի հարթությունից և փորձենք քննարկել, թե արդյոք հնարավոր է Կովկասյան պակտի ձևավորումն այն ձևով, ինչպես որ հայտարարվել է, և ի՞նչն է ստիպում Մոսկվային համաձայնել այդ առաջարկին»:

«Այս Պակտը մեռելաձին է: Մեծ տերություններին այն պետք է որոշակի time out վերցնելու համար: Ռուսաստանին այն պետք է ստուգելու, թե իր այսօրինակ գործողություններին Արևմուտքն ինչ արձագանք է տալիս: Թուրքիայի համար սա պետք է ռեգիոնում իր դերը բարձրացնելու համար: Բայց հինգ պետություններն էլ մեկը մյուսի

հետ լուրջ խնդիրներ ունեն: Այս առաջարկը որոշ ժամանակ կքննարվի և կդրվի մի կողմ»:

«Անդրադառնալով այն հարցին, թե ինչ կլինի, եթե A պետությունը հարձակվի B պետության վրա՝ նշենք, որ միանշանակ շահում է C պետությունը, այսինքն՝ հայ-ադրբեջանական պատերազմի դեպքում շահում է Վրաստանը, հայ-վրացական պատերազմի դեպքում շահում է Ադրբեջանը, վրաց-ադրբեջանականի դեպքում՝ Հայաստանը: Այս երեք պետությունների սիստեմը բավական հավասարակշռված է: Հինգ պետությունների դեպքում էլ դա որոշակիորեն կպահպանվի: Համենայն դեպս, մեխանիկորեն բավականին հավասարակշռված սիստեմ է, և հնարարավոր է՝ պակտը ստեղծվի և ոչ թե պարտադիր պատերազմը բացառելու, այլ ինչ-որ կոնֆիգուրացիայով այն սահմանափակելու համար»:

«Ինչ-որ առումով մինչև այս պահը, Կովկասում այդ ստաբիլության պակտը կար, որովհետև Վրաստանը, որոշակի խնդիրներ ունենալով հանդերձ, Ռուսաստանին դիմակայում էր հյուսիսից, Հայաստանը՝ Թուրքիային, նույնը կարելի է ասել Իրան-Ադրբեջան հարաբերությունների մասին: Այսինքն՝ ստաբիլություն կար մինչև այս պակտը, իսկ հիմա պակտը թույլ է տալիս Իրանին դուրս մնալ համակարգից ու դառնալ անկանխատեսելի»:

«Տպավորությունն այն է, որ մենք շատ խորացանք պակտ բառի մեջ: Նախ դա պակտ չէ, այլ պլատֆորմ: Առաջարկը պարզապես համագործակցելն է և կայունություն պահպանելը (կանգ առ Ռուսաստան, մի՛ խորացիր Վրաստանի մեջ, թե չէ Հայաստանը կբարձրացնի Ջավախքի հարցը): Ռուսաստանն էլ հիմա կանգ է առել: Սա երկար չի տևելու, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Իրանը չի մասնակցելու: Իրանն այս հարցին չի էլ անդրադառնա, որովհետև պատմությունից հայտնի է, որ նման հարցերին Իրանը արձագանքում է ասենք 100 տարի անց, բայց արձագանքում է շատ լավ»:

«Իհարկե բարդացնել պետք չէ, սակայն կարևոր է հասկանալ Թուրքիայի այսօրվա վիճակն ու նպատակները: Կարելի է վարկած առաջ քաշել, որ Թուրքիան այսօր խուճապի մեջ է, քանի որ հարցականի տակ են դրված նրա հարաբերությունները Ռուսաստանի հետ. Թուրքիան զենք է մատակարարել վրացիներին, օժանդակել է վրացական տարբեր ռազմական ենթակառուցների զարգացմանը: Սա մի կողմն է, մյուս՝ ավելի վտանգավոր կողմն այն է, որ վտանգված են ենթակառուցվածքները. միայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի հարցը Թուրքիայի համար հսկայական վտանգ է: Բացի այդ, «Երկնագույն հոսքը», որ գալիս է դեպի Թուրքիա, ևս որոշակիորեն կախման մեջ է: Միայն Թուրքիա-Ռուսաստան առևտրային շրջանառության ծավալը 26 մլրդ դոլար է: Սա և՛ Թուրքիայի, և՛ Ռուսաստանի համար հսկայական թիվ է: Այս ամենն այն պայմաններում, երբ Թուրքիան պետք է հստակ կողմնորոշվի՝ թողնելու՞ է ամերիկյան նավերի մուտքը Սև ծով, շարունակելու՞ է կամուրջ լինել Վրաստանի համար, ՆԱՏՕ-ի

ու ԱՄՆ-ի կողմից օգտագործվելու՝ է որպես Վրաստանին քաղաքական ռեսուրս և այլ օժանդակություն տվող, թե ոչ:

Մյուս կողմից՝ քանի որ Բալկանների հարցերն ավարտվեցին, սկսվում են Կովկասի հարցերը: Ռուսաստանն իր քայլն արեց: Մինչ այդ արվել էին բազմաթիվ քայլեր, որոնց դեմը Ռուսաստանն ուզում էր առնել, բայց առանց ռիսկի գնալու: Այդ պատճառով էլ ստեղծվեց Սև ծովի, ինչպես նաև Սև և Կասպից ծովերի արանքում ընկած տարածքների ներկա իրավիճակը: Ռուսաստանի կտրուկ քայլն արդյո՞ք առաջինն է, թե դա այն քայլն է, որով իրավիճակը եկավ ինչ-որ կայուն համակարգի ձևավորման: Եթե այս հարցերին չպատասխանենք, մենք չենք կարող ասել, թե որոնք են լինելու ՀՀ գործողությունները»:

«Այստեղ կարևոր է նաև ամերիկյան պերսպեկտիվը: Հինգ կարևոր կետ կա այդ առումով: Առաջին՝ վերջին իրադարձություններում իրականում հաղթողներ չկան, բոլորը տարբեր աստիճանի պարտվողներ են: Միակ հաղթողը Իրանն է: Որքան առանձին ու հեռու են Մոսկվան ու Վաշինգթոնն իրարից, այնքան դա ձեռնտու և անվտանգ է Իրանի համար: ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների ցանկացած լարում միայն օգնում է Իրանին:

Երկրորդ՝ Բաքու-Թբիլիսիի փակումը թույլ տվեց Ադրբեջանին Իրանի տարածքը օգտագործել որպես պահեստային ճանապարհ: Իրանի համար սա կարևոր էր, որովհետև ցույց տրվեց, որ, անկախ ԱՄՆ-ի ցանկությունից, հարցականի տակ է ԲԹՁ-ի կարողությունը Իրանին մեկուսացնելու և Ռուսաստանը շրջանցելու հարցում: Մյուս պարտվողը, որի մասին շատ չի խոսվում, Իսրայելն է, որի դերն ու ԱՄՆ-ի հետ շատ ակտիվ օրակարգը Վրաստանում բացահայտվեց ու հաստատվեց օգոստոսյան ճգնաժամից հետո:

Մյուս կարևոր կետը, որը հստակեցվեց վրացական ճգնաժամից հետո, այն է, որ ՆԱՏՕ-ի ընդլայնումն այս տարածաշրջանում կանխվեց: Ամերիկյան կողմը միշտ կարծել է, որ Վրաստանը ռազմական մակարդակով դեռևս պատրաստ չէ անդամակցել ՆԱՏՕ-ին, այդ անդամակցությունն ավելի շատ քաղաքական որոշման արդյունք էր: Իսկ հիմա խնդիր է նաև Վրաստանի ֆինանսական իրականությունը, քանի որ Ռուսաստանը փլուզեց ենթակառուցվածքային համակարգը: ՆԱՏՕ-ի համար Վրաստանը մինիմալ համապատասխան վիճակի բերելը հսկայական ֆինանսական ծախսերի հետ է կապված, ինչը ներկայում իրատեսական չէ:

Մի հետաքրքիր և անհանգստացնող կետ ևս. մինչ այժմ ԱՄՆ-ի համար տարածաշրջանի ռազմական կենտրոնը համարվում էր Վրաստանը, սակայն այսօր, հատկապես Չեյնիի՝ Ադրբեջան այցից հետո, ամերիկյան նոր մտտեցումը կարող է լինել այն, որ հավանաբար ԱՄՆ-ի համար Ադրբեջանը պետք է լինի նոր ռազմական կենտրոն՝ որպես կենտրոնասիական ռազմական, կասպյան ուժ՝ Քաշաղանի, Ղազախստանի հետ էներգետիկ օղակներով, և սա անհանգստացնող է:

Երրորդ, Թուրքիային այսօր կարելի է հաղթող ճանաչել, քանի որ նա վերադարձրեց այն, ինչ կորցրել էր: ԱՄՆ-Թուրքիա ռազմական շարունակվող լարվածության շնորհիվ Թուրքիան այսօր կարող է իր ռեզիոնալ ուժը վերականգնել:

Ինչ վերաբերում է Թուրքիայի կայունության պակտի ծրագրերին, ապա Թուրքիան սրանով փորձում է իր ձեռքը վերցնել դիվանագիտական նախաձեռնությունը տարածաշրջանում: Թուրքիայի համար ավելի կարևոր է ոչ թե պակտը և այդ ծրագիրը, այլ պրոցեսը՝ դիվանագիտական ընդգրկումը, օրակարգը, Թուրքիայի առաջնորդությունը և այլն:

Չորրորդ՝ նոր ուղղություն է զարգանում: Կարող է զարգանալ ռուսական մի այնպիսի նախաձեռնություն, երբ ԱՄՆ-ը առաջին անգամ ստիպված լինի ավելի մեծ ուշադրություն դարձնել ՎՈՒԱՄ-ին և այն ամենին, ինչով կարելի է հակազդել Ռուսաստանին: Ադրբեջանն ու Թուրքիան սկզբում վատ ընդունեցին ռազմական ճանապարհով հարցը լուծելու Սահակաշվիլիի քայլը, սակայն ոչ թե այն պատճառով, որ միջոցը ռազմական էր, այլ այն պատճառով, որ Սահակաշվիլին ռազմական լուծման գնաց՝ դեռ պատրաստ չլինելով դրան: Այժմ ադրբեջանցիները, հատկապես ամերիկամետ գեներալները, այսպես են մտածում. «Մենք չենք կրկնելու այդ սխալը. մինչև ռազմական գործողությունների դիմելը, մենք կպատրաստվենք դրանց»: Սա է անհանգստացնող հարցը:

Մյուս կողմից՝ չնայած ԱՄՆ-Ռուսաստան լարված հարաբերությունների մասին մեդիայի հաղորդագրություններին՝ Մինսկի ձևաչափը կասկածի տակ չէ, որովհետև և՛ Ռուսաստանին, և՛ ԱՄՆ-ին ձեռնտու է այդ ձևաչափը մեկ պատճառով՝ կանխել Ադրբեջանին Ղարաբաղի համար պատերազմ սկսելու գործում: Նույնիսկ ռուսներին է ձեռնտու այս status quo-ն՝ ոչ ճանաչել Ղարաբաղը, ոչ էլ վտանգել ներկա status quo-ն: Միննույն ժամանակ Ռուսաստանը ցանկանում է բարելավել հարաբերությունները Բաքվի հետ Հայաստանի հաշվին: Իսկ Հայաստանն այսօր չնչին լծակներ ունի դրա դեմ:

Հինգերորդ՝ ամերիկյան պերսպեկտիվի համար հետևյալ խնդիրները կարևորություն չեն ներկայացնում՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի ճանաչումն իրոք խնդիր չէ ԱՄՆ-ի համար և ոչ էլ՝ առաջնահերթություն: Հարցը ճանաչումով չի ավարտվում, հարցը կավարտվի, երբ Հարավային Օսիան դառնա ՌԴ-ի մաս՝ միանալով Հյուսիսային Օսիային, իսկ Աբխազիայի հարցն ավելի դժվար է և դեռևս՝ չլուծված:

Մյուսը՝ Կովկասը ԱՄՆ-ի համար դեռ այդքան կարևոր չէ, ավելի կարևոր է Կենտրոնական Ասիան: Եթե Ռուսաստանն իրոք ուզենա առձակատել ԱՄՆ-ի հետ, ապա դա կլինի ոչ թե այս տարածաշրջանում, այլ Կենտրոնական Ասիայում, որը չափազանց կարևոր է Աֆղանստանում կատարվող գործողությունների համար: Եթե ուշադրություն դարձնենք, ԱՄՆ-ը օգոստոսի 7-ին ու 8-ին կույր էր կովկասյան իրադարձությունների հարցերում, քանի որ այդ նույն օրերին Պակիստանի նախագահ Մուշարաֆը իմպիչմենտի էր ենթարկվում: ԱՄՆ-ը ավելի շատ այն ռեզիոնում էր, քան այս:

Կարևորն այն է, որ տարածաշրջանային նոր զարգացումները տեղի են ունենալու տնտեսական շահերի հիմքի վրա՝ առևտրային պատերազմ Ռուսաստանի ու Թուրքիայի, ԱՄՆ-ի ու Ռուսաստանի միջև և այլն: Չնայած էներգետիկ հարստությանը՝ Ռուսաստանը թույլ է, որովհետև դեռ չունի զարգացած ենթակառուցվածքներ: Ամերիկացիները սա օգտագործելու են: Դա պատճառ է դառնալու Հայաստանի տնտեսական ճգնաժամի համար՝ սննդամթերքի, գազի գների աճ և այլն:

Ամերիկյան արտաքին քաղաքականության տեսակետից Օբամայի և ՄակՔեյնի ճամբարներում կա այն գոյումը, որ սխալ էր Հայաստանն առանց կովի զիջել Ռուսաստանին, և հնարավոր է, որ նրանց առճակատումը Ռուսաստանի հետ տեղի ունենա Հայաստանում, ինչը շատ վտանգավոր է»:

«Մի նկատառում ասվածի վերաբերյալ. ճիշտ է, Վրաստանի համար ՆԱՏՕ-ն այլևս չկա, սակայն կա Ուկրաինայի խնդիրը, որը շատ կարևոր է: Կարևոր է նաև հետևյալ խնդիրը. 2017թ. ավարտվում է Սևաստոպոլի ռազմախարսխի ժամկետը, դա նշանակում է, որ խնդիրները պետք է հիմա սկսել լուծել»:

«Իհարկե, Կենտրոնական Ասիան կարևոր է, սակայն այնտեղ հաստատվելու համար այսօր պետք է լուծվի Կովկասի խնդիրը: Հասկանալի է, որ վերջին երեք շաբաթվա ընթացքում ամերիկացիներն անզուսպ ակտիվություն են ցուցաբերում Ոզբեկստանում, Տաջիկստանում, Ղազախստանում: Սակայն դա արդյունք չի տա, նախ՝ քանի որ Կենտրոնական Ասիայի պետությունները սարսափահար են Ռուսաստանից, մյուս կողմից՝ հիմնական շահողը Չինաստանն է: Աստանան աստիճանաբար ավելի է կապվում Պեկինին, քան որևէ այլ երկրի, Դրոդրաստանի առևտրային ծավալի 82 տոկոսը Չինաստանից է գալիս, Թուրքմենստանի խողովակաշարի համար երրորդ գիծն է կառուցվում դեպի Չինաստան: Առանց Կովկասի՝ ԱՄՆ-ը Կենտրոնական Ասիայում անելիք չունի:

ԱՄՆ-ի քաղաքական հիմնական սխալներից մեկն այն է, որ Հայաստանի հետ գործունեությունը սահմանափակված է: Կովկասի ամենակարևոր պետությունը Հայաստանն է, ինչքան էլ հարուստ լինի Ադրբեյջանը, ինչքան էլ Սև ծովի վրա գտնվի Վրաստանը»:

«Այս անվտանգության պակտի նախաձեռնությամբ Հայաստանն առաջին անգամ ռազմավարական կարևորություն է ձեռք բերում, որովհետև Թուրքիայի ազգային անվտանգության տեսանկյունից, սահմանների բացումը ձեռնտու է, քանի որ դա տնտեսապես կկայունացնի քրդական ռեգիոնները: Ավելին, Հայաստանը կարող է դիտվել էներգակիրների տեղափոխման ակտերնատիվ ճանապարհ:

Իրանի ու ԱՄՆ-ի միջև սկսված գործընթացը՝ կապված Իրանում ամերիկյան ներկայացուցչությանը հետ, դադարեցվեց ամերիկյան ընտրությունների պատճառով: Սակայն ով էլ ընտրվի, դա մնալու է օրակարգային խնդիր, որովհետև Իրանը կարևոր տնտեսական ու քաղաքական նշանակություն ունի ոչ միայն Պակիստանի,

Աֆղանստանի հարցերում, այլ որ շատ կարևոր է՝ Չինաստանի մուտքը Պարսից ծոց, սևծովյան և այլ ենթակառուցվածքներ արգելելու տեսանկյունից: Իրանա-ամերիկյան հարաբերություններում լինելու է որոշակի նորմալացում, ընդ որում՝ շատ պրագմատիկ: Դա սկսվել է Իրաքից, երկրորդը լինելու է Աֆղանստանը, երրորդը կապված է լինելու Չինաստանի հետ:

Այս պատճառով, Թուրքիան, այնուամենայնիվ, աննախանձելի վիճակում է: Անշուշտ, թուրքական քաղաքականությունը, միևնույն է, ուղղված է դեպի ԵՄ, և այդ ուղղվածության հետ մեկտեղ նա ստիպված է հստակ դիրքորոշումներ ընդունել՝ ՆԱՏՕ-ի անդամ լինելով: Սա լուրջ սահմանափակումներ է մտցնում տարածաշրջանային գործոն դառնալու հարցում»:

«Եթե որևէ պետություն իր տարածքում գտնվող էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ ճնշումներ է գործում, ապա կարող է զրկվել այդ տարածքի նկատմամբ վերահսկողության իրավունքից: Մեր արտաքին քաղաքական գերատեսչությունը, բացի պատմական իրողությունից և այն պոստուլատից, որ Ղարաբաղը երբեք Ադրբեջանի կազմում չի եղել, պետք է որդեգրի նաև այս սկզբունքը՝ ղարաբաղյան հիմնահարցում կիրառելով նաև զուտ այդ տարածքում ապրող մարդկանց ֆիզիկական անվտանգությունը ժամանակին չապահովելու փաստը»:

«Ի՞նչ պետք է անի Հայաստանը: Հայաստանը չի կարողանում հասկանալ, որ ռազմավարական սխալ է գործում՝ թերագնահատելով իր կարևորությունը Ռուսաստանի համար՝ գերագնահատելով վերջինի ռազմավարական դերը: Մեր խնդիրները ներքին են՝ կոռուպցիա, վատ կառավարում: Չկա իրական ռեֆորմներ անցկացնելու քաղաքական կամք: Հայաստանից է կախված, թե ինչքանով կօգտագործվի տրված հնարավորությունը: Կարևոր է նաև, որ Թուրքիային վերաբերող հարցերում Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնությունը սփյուռքից վերցնի իր ձեռքը»:

«Ղարաբաղը բաց ռեսուրս է շատերի համար, մեզ համար՝ ևս: Ի տարբերություն Օսիայի ու Աբխազիայի, Ղարաբաղը կայացած համակարգ է, որը ժամանակ առ ժամանակ ձգտում է ներառվել մեծ համակարգի մեջ, իրականում այն արդեն Հայաստանի մեջ մտած բլոկ է: Այսինքն՝ այս պայմաններում Ղարաբաղի ճանաչման կամ չճանաչման հետ խնդիր չունենք»:

«Ղարաբաղի ճանաչման հետ կապված հետևյալ խնդիրը կա: ԵԱՀԿ-ում Ղարաբաղը համարվում է մի հարց, որը պետք է ներկայացվի Մինսկի կոնֆերանսի քննարկմանը, և Ղարաբաղի հստակ կարգավիճակը կարող է սահմանել միայն այդ կոնֆերանսը: Մեր կողմից ճանաչելը կդիտվի այդ պայմանավորվածությունների խախտում, ցանկացած այլ լուծում՝ նույնպես»:

«Հայաստանը տուժելու է ցանկացած կոնֆլիկտից: Դա ցույց տվեց նաև պատերազմը Վրաստանում: Սահմանները միշտ կարող են փոխվել: ԽՍՀՄ-ի

փլուզումից, Կոսովոյի, Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունից հետո պարզ դարձավ, որ սահմանների անքակտելիության սկզբունքը դադարեց գոյություն ունենալ: Ամեն վայրկյան ցանկացած սահման կարող է փոփոխվել, և ոչ մի սահման անցավ չի փոփոխվում: Ցավոք, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա մեզանից ոչ մեկ չի հարցնելու՝ փոխվելու՞ են մեր սահմանները, թե՞ ոչ»:

«Այսինքն՝ սպառնալիքը կա: Փոփոխությունները շարունակվելու են և բերելու են նոր քարտեզի ձևավորմանը: Մենք դրանց պետք է պատրաստ լինենք, փորձենք ձևակերպել այն, ինչ անվանում ենք հայաստանակենտրոն ցանցապետություն: Դրան կարելի է հասնել միայն, եթե կենտրոնը մաքուր է, ուժեղ է, մտածող և իր միտքը սփռելու հնարավորություններ ունի»:

«Շնորհակալություն մասնակցության համար»:

ՔՄՀԿ կազմ

Դավիթ Հովհաննիսյան
Տաթևիկ Մկրտչյան
Վահագն Ազլյան
Հայկ Քոչարյան
Տիգրան Մաթոսյան
Սոնա Գրիգորյան

28 հոկտեմբեր 2008

Քաղաքական և մշակութային հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական համալսարան
Ալեք Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ
Հեռ.՝ (37410) 551674
Էլ.փոստ՝ cccs@ysu.am,